


ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա Ր Դ Ի

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ



ՄԻՋԻՆ ԴԱՍՇՆԹԱՑՔ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ



ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Կ. ՊՈԼԻՍ

ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ

1913

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

4/47.925

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ. ՊԱԼԵՆՅ ԳՐԱՏԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

2990

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐԶՈՒՄԱՆ
№ 271

ՄԻՋԻՆ ԴԱՍՇՆՔԱՑՔ

ՊԱՏՆԵՐԱԶԱՐԳ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ

ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՅ

1919



ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՆՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Արդի հայերեկի մեր Նոր Քերականութեան դասընթացին երրորդ գիրքն է այս, ազգային նախակրթարաններու միջին դասընթացին յասուկ ինչ ինչ բարեփոխութիւններով, զոր երրորդ սպագրութեամբ վերստին ի յոյս ընծայելու առթիւ հարկ դասած ենք մի քիչ նախօտեջ, նոյն դասընթացի դասարաններու շարողութեան աւելի համապատասխան ընծայելու համար զայն :

Այս երրորդ սպագրութեան առթիւ աչ աւելորդ չենք համարեր կրկնել ինչ ինչ պարագաներ մեր սոյն աշխատութեան հանգանակներու մասին : Իսասագրիս պատաստութեան մեջ մեր ստանդոքիւնը եղած է ըլլալ ճիշտ եւ յսակ, զգուշանալ չեզոյիլ մեջ տարտամոքիւն ղնելու ծառայող անպէտ բացարձակներէ, ընտել այն ձեւերը որոնք չեզոյիլ ընդհանուր ձգտումին աւելի համաձայն են, ղնել ինքնակամակալ ինչ ինչ անհրաժեշտ ծախոքութիւններ եւ չդիտուած մասնաւորութիւններ որոնք ինքնակամակալներու մեջ պակասած են յաճախ : Իսկ հրահանգներու պատաստութեան ասեմն՝ մեծապէս ջանացած ենք կարելի եղածին չափ բազմաթիւ ճոխ ու գործնական հրահանգներ ղնել, հատկապէս ըլլալով որ կանոններու ցամաք ուսումը չէ որ չեզոյն պիտի սորվեցնէ, այլ անոնց գործնական կիրարկութիւնը հրահանգներու եւ վարժութիւններու միջոցաւ : Ինչն իսկ մեկ կանոնները դրած ենք աւելի իբրեւ առաջնորդ ուսուցչին՝ տրուելիք դասին համար, այնպէս որ միւրեւ իսկ անհրաժեշտ չենք դաժեր որ ուսուցիչը գոց ընել


այ կանոնները աշակերտին՝ իբրև դաս պահանջելու հասարակի: Ուսուցիչը պարտի հրահանգներու եւ ընթերցումներու մէջէն տրովեցնել կանոնները, եւ ինչպէս պիտի ձեւանա՞նք մասնաւորապէս մեր հրահանգներն այնպէս պատաստուած են որ շատ ակնհար կերպով կը ցայեցնեն լեզուին օրհեկներն ու մասնաւորութիւնները:

Իրած եւեթ նաեւ գրիին սարողութեան չափով արձակ եւ ոսակաւոր ընտրեալ հասուածներ, ընթերցումի եւ արտասանութեան յասուի, որոնց սակ նշանակուած են գործնական քերտորութիւններ գոր ուսուցիչները պարտին խնամով եւ շիտիկ գործադրել, զի այդ քերտորութիւնները պիտի ծառայեն իբրև դաս առողանութեան, ողորդութեան, բառագիտութեան, լեզուի վարժութեան եւ գաղափարներու արտայայտութեան: Վերջապէս շարտորութեան հասարակ զեւեղումն են բառականաչափ նիւթեր, մեծ մասամբ պատկերաւոր:

Կը կարծեմք թէ Քերտակաւորութիւնս գործածող զիտակից ուսուցիչները ակնոր թի՛ տեսակաւ եւ թի՛ գործնական մասերուն առաւելորդութիւնները ճանչնալու պատկերութիւնն ունեցած են, բաւ մը՝ որուն ապացոյցը կը հասարակեմք ակնոր առաջին եւ երկրորդ սպարութեան զտած ընդունելորդութիւնը:

ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ



ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ



ԴԱՍ. — ԲԱՌ, ՎԱՆԿ, ՏԱՌ

1. — Քերտակաւորութիւնն այն ուսուցիչն է որ կը ներկայացնէ լեզուի մը խօսելու եւ գրելու կանոնները:
 2. — Լեզուն խօսքի միջոցով կ'արտայայտէ մեր գաղափարներն ու զգացումները:
 3. — Խօսքը կը բաղկանայ բառերէ եւ բառերը կը բաղկանան վանկերէ:
 4. — Մէկ կամ աւելի ձայներ երբոր մէկ հնչումով կ'արտասանուին, կը կազմեն վանկ:
 5. — Մէկ վանկով կազմուած բառերը կը կոչուին վիտիվանկ, երկու վանկով բառերը՝ երկալվանկ, երեք վանկովները՝ եռալվանկ, աւելի վանկ ունեցողները՝ բազմալվանկ:
 6. — Վանկը կազմող ձայները կը գրուին գիրերով կամ տառերով:
 7. — Հայերէն լեզուի գիրերը, կամ տառերը 38 հատ են ու հետեւեալներն են:
- ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, լւ, ժ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ս, վ, ու, տ, ը, ց, լ, փ, ք, օ, ֆ:
- Ասոնք կը կոչուին հայերէնի այբուբենը:

8. — Հայ այբուբէնի տառերը գրուելու չորս ձեւ
ուենին որ կը կոչուին գլխագիր, բոլորգիր, շեղագիր, նոսրգիր:

9. — Գլխագիր կը գրուին յատուկ անուաններուն,
ոտանաւորներու իւրաքանչիւր առղերուն և խօսքերու
առաջին բառերուն առաջին գիրերը, ինչպէս նաև զըր-
ուածքներու ամբողջ վերնագիրները:

10. — Բոլորգիրը գիրքերու մէջ հասարակօրէն
գործածուած գիրն է:

11. — Շեղագիր և նոսրգիր կը գրուին գրուածքի
մը այն բառերը՝ որոնց վրայ կ'ուզուի մասնաւոր ուշա-
դրութիւն հրաւիրել:

ՏԱՌԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

12. — Հայերէն գիրերը կամ տառերը երեք տեսակ
են, ձայնաւոր, բաղաձայն և կիսաձայն:

13. — Ձայնաւոր են, ա, ե, հ, ը, ի, ո, օ տառերը
որոնք պարզ ձայներ են և ինքնին կը հնչուին:

14. — Բաղաձայն են բ, գ, դ, զ, փ, ժ, շ, խ, ծ, կ,
հ, ձ, ղ, ս, Վ, չ, ջ, պ, ջ, ու, վ, ռ, յ, ց, փ, փ, ժ:
Ասոնք ինքնին չեն կրնար հնչուիլ, այլ ձայնաւորի
մը օգնութեամբ:

15. — Կիսաձայն են յ և ի տառերը երբոր բաղա-
դրեալ ձայնաւորներ և երկբարբառներ կազմելու կը ծա-
ռայեն. օրինակ՝ տուն և յոյս բառերուն մէջ:

Նոյն տառերը բաղաձայն են երբոր կը հնչուին իր-
բեւ հ և վ. ինչպէս յարգ և հարաւ բառերուն մէջ:

16. — Ի կիսաձայնը ո և ի ձայնաւորներուն միա-
նալով կը կազմէ ու և իւ նոր ձայնաւորները որոնք կը
կոչուին բաղադրեալ ձայնաւոր. օրինակ՝ կատու, արիւն:

17. — Մէկէ աւելի ձայնաւոր կամ կիսաձայն գի-

րեր երբոր մէկ վանկի մէջ կը միանան, կը կոչուին երկ-
բարբառ. օրինակ՝ սենեակ, գոյն ևն:

18. — Հայերէնի երկբարբառներն են այ, եայ, եայ,
եօ, օյ:

19. — Ը ձայնաւորը շատ անգամ բառերու մէջ որոշ
չի գրուիլ թէև կը հնչուի, և այն ատեն կը կոչուի
բնական կամ սուղ ձայնաւոր:

20. — Սուղ վանկ կը կոչուին այն վանկերը որ բնա-
կան ը կը պարունակեն և լման վանկ չեն կազմեր.
օրինակ՝

Բարձր, մեղր, սաէպ, խնձորն, գրաւ և ին:

21. — Անձայն կը կոչուի յ կիսաձայնը երբոր բաղ-
ձայնակ բառի մը վերջը կը հանդիպի և չի հնչուի.
օրինակ՝

Սպայ, հաճոյ, փեսայ և ին:

ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԵՐԹ ԻՆՊԻ ԳՊԲՈՑ

Ահաւասիկ դպրոց երթալու ատենն եկած է: Տիրան և
Վերքինէ կազմ ու պատրաստ են: Անոնք սորված են իրենց
դասերը: Կ'ողջագուրեն մայրիկն ու հայրիկը և ուրախ
զուարթ կը մեկնին դպրոց, Իրիկուան՝ վերադարձի ատեն,
պզտիկ տղաք, փողոցներու մէջ չխաղա՞ք: Աղէ՛կ աշխա-
տեցէ՞ք ձեր դասերուն մէջ: Ձեր ծնողները խիստ երջա-
նիկ պիտի ըլլան երբոր բարենիշներ ստանաք:

ՀՐԹ ՀԱՆԳՆԵՐ

1. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը, խօսքերը ուղղահայեաց,
բառերը՝ հորիզոնական գիծերով իրարմէ գատելով:

2. — Նոյն հատուածին բառերուն միավանկ, երկավանկ,
եռավանկ կամ բազմավանկ ըլլալը որոշեցէ՛ք, ցոյց տալով նաեւ
սուղ վանկերը:

3. — Գտէ՛ք եւ գրեցէ՛ք ճիշդակամ միավանկ, երկավանկ,
եռավանկ, քառավանկ եւ հնգավանկ բառեր:

**ԳԱՍ. — ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌՈԳԱՆԱԿԱՆ
ՆՇԱՆՆԵՐ**

22. — Բառերը և խօսքերը ուղիղ արտասանելու կամ կարգաւու եղանակը կը կոչուի առողանուրփուն :

23. — Ընթերցման ատեն ուղիղ առողանուրփեան նպաստելու համար կը գործածուին քանի մը նշաններ, որոնք են Շեշ ('), Երկար (^), Պարոյկ (°) :

24. — Շեշ կը դրուի բառի մը այն վանկին կամ ձայնաւորին վրայ զոր պէտք է սուբ կերպով կամ շեշտելով արտասանել. օրինակ՝

Աշխատէ՛, Հրա՛նդ, որպէսզի յաջողիս :

25. — Երկար կը դրուի բառի մը այն վանկին վրայ զոր սովորականէն աւելի երկար կ'արտասանենք. օրինակ՝

Երանի՛ ողորմածներուն. — Աւա՛ղ, ելն :

26. — Պարոյկ կը դրուի հարցական խօսքերու մէջ այն բառին և այն վանկին վրայ ուր հարցումը կը շեշտուի. օրինակ՝

Ո՞վ եկաւ. — Պարօրը տեսա՞ր, ելն :

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՄՍ.ՅԲԻԿԸ

Երբ գիշերները քընանամ

Ո՞վ կը հսկէ վերաս արթուն,

Ո՞վ կը ժրպատի երբ կ'արթննամ :

Ո՛հ, մա՛յրիկ, դուն ես, դո՛ւն :

Ո՞վ իմ վերաս կուտայ հոգի,

Եւ ամէն վիշտ ու նեղութիւն

Ինձի համար ո՞վ կը տանի :

Ո՛հ, մա՛յրիկ, դո՛ւն ես, դո՛ւն :

Բայց ծերութեան երբ դան օրեր :

Ո՞վ է ան որ կը պատէ քեզ

Խնամքներով տաք անձնուէր :

Ո՛հ, մա՛յրիկ, ե՛ս ե՛մ, ե՛ս :

Քրգվ. Ե. Գ.

ԵԵԿԱՊՐՈՒՔԻՆ. — Գոց արտասանել այս ոտանաւորը, ըսել բառերուն նշանակութիւնները :

ՀՐԱ.ՀԱՆԳՆԵՐ

4.—Օրինակեցէ՛ք վերի ոտանաւորը եւ ստորագծեցէ՛ք այն վանկերը՝ որոնք առողանական նշաններով շեշտուած կամ երկարուած են :

5.—Հետեւեալ նախադասութեանց բառերուն պէտք եղած վանկերուն վրայ դրէ՛ք յարմար առողանական նշաններ :

Ուրիկ կուգաս, Արամ.—Բարեք, Ժամանակն ինչ շուս կ'անցնի.— Միք մեղք չե ծուրփունը.—Ամօր ծողերուն, անոնք երբեք չպիտի յառաջիմեն.—Ոհ, գլուխս կը ցաւի, քեզ աչ կը ցաւի արդեօք.— Ոչ գլուխս կը ցաւի. ոչ ուրիշ տեղս :

6.—Ցո՛յց տուէ՛ք հետագայ բառերուն պարունակած ձայնաւորները, բաղադրեալ ձայնաւորները եւ երկարբառները :

Վառեակ, սողեօք, ողջոյն, վայրի, հեծայ, ուրար, ընկիւղ, բայ, պտուղ, գիւտ, խոյ :

7.—Օրինակեցէ՛ք հետագայ բառերը գրելով նաեւ քնական ը ձայնաւորները :

Սրինգ, շինդ, գրադիչ, գրասօ, մերիկ, սոյոգ, ֆսմնիչի, ֆաշշեչ, շսպ, լմննայ, ֆաղցր, գուարք :

8.—Որոշեցէ՛ք թէ հետագայ բառերուն մէջ յ տառը ո՞ւրտեղ բաղաձայն է, ո՞ւրտեղ՝ կիսաձայն, եւ ո՞ւր՝ անձայն :

Յովսափ, հայ, որայ, մոյկ, հայր, հսմոյ, յեասն, փեսայ, գոյութիւն, դշտոյ :

ԳՒՍ. — ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ

27. — Բառերն ու խօսքերը անսխալ գրելու եղա-
նակը կը կոչուի ուղղագրութիւն :

28. — Ուղղագրութիւնը երկու տեսակ է . կանո-
նակաւ և սովորակաւ :

29. — Ուղղագրութեան և ուղիղ առողջանութեան
համար կը գործածուին նաև կետագրութեան նշաններ
որոնք են .

Ստորակէ (.), բութ ('), կէտ կամ միջակէ (·),
վերջակէ (:), ենթամնայ (), ապարաց ('), գիծ կամ
զծիկ (-), փակագիծ (), չակերտ (αα), բազմակէ (...):

30. — Ստորակէը, բութը ցոյց կուտան խօսքին
մէջ թեթեւ կամ պզտիկ դադարի տեղերը, միջակէտը
ցոյց կուտայ քիչ մը երկար դադարը, իսկ վերջակէտը՝
երկար հանգիստ մը :

31. — Ստորակէ կը գործածուի ընդհանրապէս խօս-
քին այլ և այլ մասերուն կամ միևնոյն պաշտօնն ունե-
ցող բառերու միջև, ինչպէս նաև միջանկեալ բառեր և
խօսքեր զատելու համար . օրինակ՝

Մտի՛կ ըրէ՛, Հերմի՛նէ՛, մեծ եղբայր՛դ՝ Արմենակը
որ կը սիրէ՛ քեզ, կաղանդին՝ քեզի պիտի՛ նուիրէ՛ պատ-
կերներ, խաղալիքներ և սիրուն պուպրիկ մը :

32. — Բութ կը գործածուի գլխաւորաբար զեղչեալ
խօսքերու մէջ կամ ցուցնելու համար թէ բառ մը յա-
ջորդին չի վերաբերիր . օրինակ՝

Ածուխը սև է, իսկ ձիւնը՝ սպիտակ :

Չարուհի տրտում արտուր՝ երեսը ձևաքերովը ծած-
կած՝ կուլոր :

33. — Կէտ կամ միջակէ կը գործածուի իրարու հետ
կապ ունեցող ճանջատ խօսքերու միջև, ու նաև հա-
մառօտուած բառերու առջև . օրինակ՝

Ամառը եկաւ . մենք գիւղ պիտի փոխագրուինք :
Գեր . Ս . Հայրը մեկնեցաւ :

34. — Վերջակէ կը գործածուի ուր որ խօսքը կը
վերջանայ :

35. — Ենթամնայ կը գործածուի բառի մը մէկ մասը
վերի տողէն վար փոխադրելու ատեն և կը դրուի վերը
մնացած կիսատ բառին առջև :

36. — Միավանկ բառերը կարելի չէ կիսել, վար առ-
նել . իսկ բազմավանկ բառերը վանկերուն բաժանման
տեղէն միայն կարելի է կիսել և վար առնել :

37. — Վար առնուելիք կամ վերը թողուելիք վանկը
եթէ բնական ը պարունակող սուղ կամ լման վանկ մըն
է, այն ատեն ը ձայնաւորը գրել հարկ է . օրինակ՝

Վագր, ժյաս, կտել, շտայ, զուարթ բառերը թողա-
ղարձելու ատեն կը գրուին վազգըր, ժըլատ, կըտ-րել,
ըշտայ, գըլուարթ :

38. — Տողադարձի ատեն վանկ կազմող միակ ձայ-
նաւոր գիր մը վերի տողը թողուլ կարելի է, բայց վար
առնել կարելի չէ . օրինակ՝ կրնայ գրուիլ ի մաստուն,
բայց ո՛չ Լուսի-ա :

39. — Ապարաց կը դրուի երկու ձայնաւորներ ի-
րարու բախած ատեն, կրճատուած ձայնաւորին տեղ .
օրինակ՝

Կը առնէ, պիտի իջնէ գրելու տեղ՝ կը գրուի
կ'առնէ, պիտ'իջնէ :

40. — Փակագիծ կը գործածուի խօսքի մը կամ բառի
մը քով իրրեւ բացատրութիւն դրուած խօսքի մը կամ
բառի մը երկու կողմերը . օրինակ՝

Բիւզանդիոն (Կ. Պոլսոյ հին անունը) հին քաղաք է :

41. — Չակեոս կը դրուի խօսքին մէջ ուրիշէ մը առաջ բերուած խօսքի մը սկիզբն ու վերջը. օրինակ՝

Յիսուս ըսաւ. «Սիրեցէ՛ք ձեր թշնամիները» :

42. — Գիծ կամ գծիկ կը դրուի

1. — Խօսքի մէջ միջանկեալ ուրիշ խօսքի մը երկու կողմերը. օրինակ՝ Մարդիկ — գիտէք անուշա — բնապէս անձնասէր են :

2. — Խօսակցութիւններու մէջ իւրաքանչիւր խօսողի խօսքերն իրարմէ զատելու համար. օրինակ՝ — Դասը ինչո՞ւ չսորվեցար. — Հիւանդ եմ :

3. — Երկու բառեր իրարու միացնելու համար. օրինակ՝ Յիսուս-Գրիստոս, մարդ-Աստուածը :

43. — Բազմակէտը կը գործածուի ընդհատուած, առկախ թողուած կամ զօրութեամբ իմացուելիք բառերու տեղ օրինակ՝

Գալով ձեզի . . . բայց վաղը պիտի խօսիմ ձեզի հետ :
Մարդ եթէ իր յանցանքը ճանչնար . . . :

ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԲԱՐԻՆ ԵՒ ՕԳՏԱԿԱՐԸ

Երեք դասընկերներ միասին դպրոց կ'երթային : Անոնցմէ մէկն ըսաւ. «Հայրիկս ինծի ոսկի մը տալ խոստացաւ՝ եթէ լաւ աշխատիմ. ուստի լաւ պիտի աշխատիմ ասկէ յետոյ» : Երկրորդն ըսաւ. «Ես պիտի աշխատիմ որպէս զի մայրիկս զիս զրկէ և համբուրէ» : Իսկ երրորդը հառաչելով ըսաւ. «Թէեւ ես որք եմ, քանզի հայր ու մայր չունիմ, բայց ես ալ միտքս դրած եմ աշխատիլ» :

Պէտք է բարիին և օգտակարին հետամտիլ ո՛չ թէ վարձք ընդունելու համար, այլ անոր համար որ բարի է և օգտակար :

Թեկադրութիւն. — Կարդալ այս հատուածը, ուղղագրել նոյնը, ըսել բառերուն նշանակութիւնները, պատմել նիւթը, բարոյականը :

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

9. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը՝ բոլոր վանկերն իրարմէ զատելով ուղղահայեաց զիծերով :

10. — Բերանացի որոշեցէ՛ք նոյն հատուածին բոլոր կէտերը :

11. — Հետեւեալ բաղաձայներուն մէջտեղ մէյմէկ ծայնաւոր զննելով բառեր կազմեցէ՛ք եւ զրեցէ՛ք :

ս ն, գ-դ, շ-ն, ս-գ, դ-դ, ս-բ,
վ-ը, գ նծ, իւ-նդ, փ-բ, կ-դմ, ժ-ս, նշ-ն,
գթ-լ, գո-հ, կշ-փ, հն-բ :

12. — Հետեւեալ բաղաձայներուն մէջտեղ յարմար բաղադրեալ ծայնաւորներ զննելով բառեր կազմեցէ՛ք եւ զրեցէ՛ք :

գ-նդ, մ-բ, բ-բ, բբ-ս, ս-ն, կ-ը,
իւ-ս, մղ-կ, բ-դբ, բ-բդ, բգ-կ, բ-ս :

13. — Հետեւեալ բառերուն սկիզբը բաղաձայն գիրեր աւելցնելով իւրաքանչիւրէն երեքական բառ շինեցէ՛ք եւ զրեցէ՛ք :

Ահ, աղ, դի, անձ, ող, ոյժ, աղ, արի, եղ, ես, ուշ, ոգի :

Օրինակ. — Մահ, շահ, բահ :

14. — Հետեւեալ բառերուն սկզբի գիրերը փոխելով իւրաքանչիւրէն երկերկու բառ շինեցէ՛ք եւ զրեցէ՛ք :

Գող վճակ, բոյն, փաղակ, ճահիճ, յոյս, գետին, վեր, շն, ցաւ, խունկ, գունս, բարակ :

15. — Որոշեցէ՛ք թէ հետագայ բառերուն մէջ ի տառը ո՞ր տեղ բաղաձայն է, ո՞րտեղ՝ կիսածայն :

Աւաղ, հաշիւ, բարտի, բոս, սիւն, եւս :

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԳԵՂԱՄԻՆ ԵՐԳԸ

Գեղամն եմ գեղանի,
 Խաժակն եմ, ո՛չ ծաւի.
 Գոռւզ մազերս են գեղձան
 Ձեփիւռին տակ ցիրցան:
 Տեսեր էք դուք հրեշտակ
 Ձիւնաթեւ, ըսպիտակ.
 Ես պատկերն եմ անոնց,
 Երկինքս է՝ մօրն իմ ծոց:
 Ծուրթներս են մեղրածոր,
 Նռան կարմիր ու բոսոր,
 Ուրկէ յար կը կաթին
 Մեղեղիք երկնային:
 Տուն կոչուած վանդակին
 Թռչունն եմ կաթողին,
 Իմ թռթոզ ճլվլտանք
 Կը սփռեն անդ խինդ ու կեանք:
 Մունր եկած, ձեռքերս՝ վեր
 Կ'աղօթեմ դէպի Տէր.
 Երբ շարժին իմ շուրթներ
 Կը խոյտան հրեշտակներ:

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Թեյադրուրիւն. — Գոց արտասանել այս ոտանաւորը, բա-
 ցատրել բառերը, յետոյ արձակի վերածել:

ՀՐԹ. ՀԱՆԳՆԵՐ

- 16. — Օրինակեցէ՛ք վերի ոտանաւորը, ստորագծելով բոլոր սուղ վանկերը.
- 17. — Ըսէ՛ք թէ քանեկա՛ն վանկէ քաղկացած են նոյն ոտա-
 նաւորին տողերը, եւ որոշեցէ՛ք հոն գործածուած առողջանութեան եւ կետադրութեան նշանները.

ԲԱՌԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԴԱՍ. — ԽՕՍՔԻՆ ՄԱՍԵՐԸ

44. — Բառերը խօսքին մէջ իրենց ունեցած պաշ-
 տօնին և բնութեան նայելով՝ ու թ տեսակ են. Անուն
 կամ Գոյական, Ածական, Դերանուն, Բայ, Դոսխադրու-
 քիւն, Մակրայ, Ետիկայ և Չայնարկուրիւն:

45. — Բառերու այս ու թ տեսակները կը կոչուին
 Մասունք բանի կամ խօսքին մասերը: Թէպէտեւ լեզուին
 մէջ հազարաւոր բառեր կան, բայց ամէնքն ալ այս ու թ
 տեսակներէն մէկուն կամ միւսին կը պատկանին:

46. — Այս բառերէն անուն կամ գոյականը, դե-
 րանունը, բայը փոփոխական բառեր են, որովհետեւ
 խօսքին մէջ պարագային համեմատ կը փոխուին:

47. — Միւս տեսակները՝ ածականը, նախադրու-
 թիւնը, մակրայը, շաղկապը, ձայնարկութիւնը անփոփոխ
 բառեր են, քանզի խօսքին մէջ միշտ նոյն ձեւով կը
 գործածուին և երբեք փոփոխութիւն չեն կրեր:

ԱՆՈՒՆ ՎԱՍ ԳՈՅԱԿԱՆ

ԴԱՍ. — ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- 48. — Անուն կամ Գոյական կը կոչուին անձերու,
 կենդանիներու և առհասարակ բոլոր իրերու անունները:
- 49. — Անունը երկու տեսակ է. յատուկ և հասարակ:
- 50. — Յատուկ անուն կ'ըսուին անձի մը կամ իրի
 մը արուած մասնաւոր անունները որոնցմով անոնք կ'ո-
 բոչուին միեւնոյն տեսակէ իրենց նմաններէն. օրինակ՝
 Մովսէս, Յորդանան, Երուսաղէմ և ին:

51. — Յատուկ անուն են բոլոր պատմական, դի-
ցարանական, աշխարհագրական, տեղագրական, ինչպէս
նաև մոլորակի և համաստեղութեան անունները. օրինակ՝

Աղեքսանդր. Անահիտ, Անգլիա, Մասիս, Երե-
ւակ, Կշիւ և ին :

52. — Հասարակ անուն կ'ըսուին միեւնոյն տեսակէ
բոլոր անձերու, կենդանիներու և իրերու տրուած ա-
նունները. օրինակ՝

Գետ, կին, փիղ, դպրոց, ոսկր և ին :

53. — Նիւթական անուն կը կոչուին այն հասարակ
անունները որոնք արտաքին տեսանելի, շօշափելի իրե-
րու անուններ են և զգայարաններու միջոցաւ կ'ըմ-
բանուին. օրինակ՝

Աղմուկ, բոյր, խոտ և ին :

54. — Վերացական անուն կը կոչուին այն հասարակ
անունները որոնք զգայարաններու տակ չեն ինչար, այլ
միտքով կ'ըմբռնուին կամ ներքին զգացումներ են.
օրինակ՝

Վիշտ, սոսկում, գորով, համակրութիւն և ին :

55. — Բայանուն կը կոչուին այն հասարակ անուն-
ները որ բայարմատներով շինուած են և ընդհանրապէս
գործողութիւն կամ վիճակ կը ցուցնեն. օրինակ՝

Ելք, մուտք, զարմանք, ընթացք, բախիւն և ին.

ՇԵՐՅՈՒՄ. — ԾՈՅԼԸ

Հրանտ ծոյլ և թափառկոտ տղայ մըն էր : Աշխա-
տութիւնը մեծ նեղութիւն մըն էր իրեն համար : Սերտո-
ղութիւնը զինք կը յոգնեցնէր, ուսումը զինք հիւանդ
կը դարձնէր : Ուսուցիչէն յաճախ կը պատժուէր : Հայրը

չատ կը ցաւէր Հրանտին ծուլութեան վրայ և զանի յա-
ճախ կը յանդիմանէր, բայց ինչ օգուտ : Հրանտ մեծցաւ
և ինքնահաւան տգէտ մը դարձաւ :

ՀՐԱՆՏԻ ԳՆԵՐԻ

18. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը, փոփոխական բառերը՝
մէկ, անփոփոխ բառերը՝ երկու գիծով ստորագծելով :

19. — Նոյն հատուածին պարունակած գոյականները որոշեցէ՛ք
բերանացի :

20. — Հետեւեալ գոյականներուն մէջ բերանացի որոշեցէ՛ք
յատուկ եւ հասարակ անունները, եւ հասարակ անուններուն նիւ-
թական, վերացեալ կամ քայանուն լինելը :

Ասիա, բժիշկ, գուք, անագ, եփրաս, Լուսնագ, գովես.
Գեսար, ճախարակ, յիշատակ, Կիլիկիա, փախուս, Արամազդ, կա-
տեկցութիւն, խիղճ, նոճի, ցանկութիւն, աշաւանք, վարժ, նուաշում :

21. — Գտէ՛ք եւ գրեցէ՛ք հինգական յատուկ անուն
Քաղաքի, ծովու, կղզիի, սուրբի, մոլորակի, պետութեան, տղի :

22. — Գտէ՛ք եւ գրեցէ՛ք հինգական հասարակ անուն
Բանջարեղենի, հեղուկի, արհեստարտի, մետաղի, միջասի, կա-
րասի, դասական ստարկայի, նուագարանի, մուկի, թոյունի, ծառի,
պտուղի, ծաղիկի, երկրագործական գործիքի, կենդանիի, հագուստի,
հիւանդութեան, մոլորեան, առախնութեան :

23. — Հետեւեալ նախադասութիւններու պակասները լրացու-
ցէ՛ք պէտք եղած յատուկ անուններով :

Մեր Լուսարտիչն եղաւ . . . : — Աստուածաշունչ գիտի՞ր հայերե-
նի քարզականցի . . . : — Ամենայն Հայոց Կարողիկոսը կը նստի . . . :
— Մեր բնակած երկիրն է . . . : — Մեր վեհապետը կը կոչուի . . . :
— Աշխարհի հինգ մասերը կը կոչուին . . . :

24. — Գտէ՛ք եւ գրեցէ՛ք հինգ վերացական անուն եւ հինգ
քայանուն :

ԿԱՍ. — ԳՈՅԱԿԱՆԻՆ ՔԻՒՇ

56. — Թիւ կը կոչուի գոյականին այն հանգամանքը որով ցոյց կուտայ նշանակած իրերուն մէկ կամ մէկէ աւելի ըլլալը :

57. — Թիւ երկու է . եզակի և յոգնակի :

58. — Եզակին կը ցուցնէ անունին միայն մէկ հաս ըլլալը . օրինակ՝ շուն մը, գօտին :

59. — Յոգնակին կը ցուցնէ անունին մէկէ աւելի ըլլալը . օրինակ՝ շուներ, գօտիներ :

60. — Անուններու յոգնակին կը կազմուի իրենց ծայրը կցելով եր կամ ներ մասնիկները որ կը կոչուին յոգնակներ մասնիկներ :

61. — Եր մասնիկով յոգնակի կ'ըլլան

1. — Բոլոր միավանկ բառերը . օրինակ՝ ֆարեր, դաշտեր եւն (*):

2. — Այն երկվանկ բառերը որոնց երկրորդ վանկը սուղ վանկ մըն է . օրինակ՝ վազեր, անգղեր եւն :

3. — Երբեմն ալ այն բազմավանկ բառը անունները որ վերջադիր միավանկ գոյականով մը կազմուած են . օրինակ՝ Գետածիւր, բաժնեթուղթեր եւն :

62. — Ներ մասնիկով յոգնակի կ'ըլլան բոլոր բազմավանկ անունները . օրինակ՝ դրամներ, վարժապետներ :

63. Մարդ և զոյց անունները կանոնական ձևէն զատ՝ ունին նաև անկանոն ձևով յոգնակիներ . ինչպէս՝ մարդեր և մարդիկ, աղաներ և զոյց :

64. — Անձայն յով վերջացող բազմավանկ բառերուն յն կը ջնջուի յոգնակիի մէջ . օրինակ՝

Փետայ — փետաներ, դշտայ — դշտաներ եւն :

(*) Լեռ, դուռ, բեռ, բոռ, գառ և նման քանի մը միավանկներու յոգնակին սովորական է նաև լեռներ, դուռներ եւն . ձեռով, քաղի այս բառերու հին ձեռն է դուռն, բեռն եւն :

ՀՐԱՆԿԱՆՆԵՐ

25. — Հետեւեալ անուններէն եզակիները յոգնակի, յոգնակիները եզակիի վերածելով զրեցէ՛ք :

Բու, կտր, դուռ, տուն, եղնիկներ, սասող, որաներ, պահածոյ, եզներ, գրագիր, սար, բոռներ, հրեայ, շեռ, պապական, անթախանի, հաւաքածոներ, սանտ, գառ, մեխեւաներ, խոյեր, պատուանիշ, ձայ, խղափարներ, անտիկիկ, զօրագուց :

26. — Հետեւեալներուն պակասները լրացուցէ՛ք հարկ եղած յատուկ կամ հասարակ անուններով, եզակի կամ յոգնակի .

Կարով կը շինուի . . . : — Արեւիկ շուրջ կը դառնան . . . : — Աշիւր կը ծառայէ . . . շինելու : — Տարիս տնի լորս . . . : — Քրիստոնեաներու սուրբ ֆաղսէնէ . . . : — Բարի . . . բարի պատու կուտան : — Պզտիկ առուակները կը կազմեն մեծ . . . :

27. — Որոշեցէ՛ք թէ աններու կամ իրերու ի՞նչ զասակարգի կը պատկանին հետեւեալ յատուկ անունները .
Կիւրուս, Փայրածու, Իսայիա, Տիգրիս, Պետրիկ, Պարթիկ, Արգար, Մասիս, Արամազդ :

Օրինակ. — Կիւրուս, յատուկ անուն կղզիի :
28. — Որոշեցէ՛ք թէ ի՞նչ տեսակ կենդանիի, բոյսի կամ առարկայի անուններ են հետեւեալ հասարակ անունները .

Վագր, մորեկի, մամուլ, կաղամբ, խժ, վարսակ, բլադիկ, ելակ, խոտ, մորթիկ, ֆագախ, շահոքում, կաղնի, ճարտ, հրացան, աշուն, ուղտ, սասակ, ծածան :

Օրինակ. — Վագր, վարի գազանի անուն :

29. — Հետեւեալներու շղագիր բառերը յոգնակիի վերածեցէ՛ք .
Լուսինը կը յուսաւորէ զի՞ւրը . — Մշակը հերկեց արե՞ր . — Դարբինը բանալի կը շինէ . — Տպագրիչը զի՞ր կը շպէ . — Մեր եկեղեցիին մէջ կան զանազակ, ճնճոյց եւ Բոց . — Դեմքին վրայ կը գտնուին աչք, իր, բերան, օրում, ակունք :

30. — Հետեւեալ նիւթական անունները վերացականի վերածեցէ՛ք .
Նայ, սեր, եղբայր, վարդապետ, դերակ, փեսայ :

Օրինակ. — Նայ — հայուքիւն :

ԴԱՍ. — ԳՈՅԱԿԱՆԻՆ ՅՕԴԸ

65. — Յօղ կը կոչուին ս, դ, և և ը գիրերը որոնք գոյականին ծայրը կը կցուին և անոր իմաստը ճշտելու կամ որոշելու կը ծառայեն:

66. — Յօղը երկու տեսակ է. որոշիչ և դիմորոշ:

67. — Որոշիչ յօղ են միայն և և ը գիրերը որոնք պարզապէս գոյականը կ'որոշեն առանց որո՛ւ վերաբերիլը ճշտելու. օրինակ՝

Խնձոր — Խնձորը, գինի — գինին եւլն:

68. — Դիմորոշ են ս, դ, և, և ը յօղերը որոնք գոյականին որո՛ւ վերաբերիլը կ'որոշեն. օրինակ՝

Տունս, առնդ, առնը, այսինքն՝ իմ տունս, քու առնդ, իր առնը.

Գօտիս, գօտիդ, գօտին, այսինքն՝ իմ գօտիս, քու գօտիդ, իր գօտին:

69. — Զայնաւորով վերջացող բառերու վրայ կը դրուի և յօղը, իսկ բաղաձայններու վրայ՝ ը յօղը. օրինակ՝

Ոսկի — ոսկին, մարդ — մարդը, կատու — կատուն:

70. — Ն կը գործածուի նաև երբեմն բաղաձայնով վերջացող բառերու վրայ, երբոր այդ բառին հետ անմիջական վերաբերութիւն ունեցող և մէկ շունչով արտասանող յաջորդ բառը ձայնաւորով կ'սկսի. օրինակ՝

Եղբայրս գիղն է: Արծաթն ու ոսկին են:

71. — Անձայն յ ով վերջացող բառերը՝ յն ջնջուելով՝ և յօղը կ'առնեն, իսկ ձայնաւոր յ ով վերջացողները՝ ը յօղը. օրինակ՝

Տղայ — տղան, հայ — հայը, մակրայ — մակրայը ևլն:

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ — ՃՆՃՂՈՒԿՆ ՈՒ ՆՍՊԱՍՏԱԿԸ

Նապաստակը բռնըւած էր
ձիրաններէն արծուին սէգ:

Ճնճղուկ մը զայն սկսաւ ծաղրել.

— «Ո՛հ, ի՞նչ ըրիր տոտիկներդ»:՝

Յին մը կ'անցնէր, լսեց ձայնը,

Յափշտակեց ճնճղուկն հէք.

Միւսն այն առեն պատասխանեց.

— «Դո՛ւն ի՞նչ ըրիր թըռփիներդ»:՝

Թրգմ. Յ. Գ.

ՏԻԿՆ ԺՈՒԿՈ

ԳԻԼԱՊՐՈՒՅԻՆ. — Գոց արտասանել այս առակը, պատմել նիւթը, բացատրել բարոյականը:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

31. — Օրինակեցէ՛ք վերի ստանաւորը եւ յօղ ունեցող անուններն ստորագծեցէ՛ք, յետոյ բերանացի որոշեցէ՛ք յօղերուն տեսակները:

32. — Հետեւեալ անուններէն յօղ ունեցողներուն յօղերը ջընջեցէ՛ք, եւ չունեցողներուն կցեցէ՛ք մէյմէկ որոշիչ յօղ. Եոճի, անտաք, շուշան, գուշան, դիտոյ, բագեհ, փայլակ, առու, կրիայ, համաժող, ճաշք, գրաս, հսկան, քոյ, խոյ:

33. — Հետեւեալ անուններուն կցեցէ՛ք մէյմէկ որոշիչ յօղ. Իմ գրիչ, Բո գրոց, Իր գրութիւն, Իմ ընծայ, Իմ այգի, Իմ փափակ, Իմ կեանք, Իր շնորհք, Իմ ընծայ:

34. — Հետեւեալ նախադասութիւններու շեղագիր բառերուն կցեցէ՛ք պէտք եղած յօղերը:

Վարդ ու Ծուռան անուշաճու ծաղիկներ են. — Ծերուրից կեանքի ձմեռ կ. — Գեշ օրեր ալ կ'անցնին, աղէկ օրեր ալ. — Էն օգտակար մեծաղներ են երկաթ ու պղինձ. — Եղնիկ եղջերուի էգ կ, գամբիկ՝ յովառակի. — Բարիներու յիշատակ անգամ կ'օրհնուի. — Իմ ձի աւելի կտրիճ կ քան Բո ձի. — Ասկա իմ օտն կ, միւս օտն ալ անոտ օտն կ. — Ամեն ծաղիկ իր հոտ ունի:

35. — Հետեւեալ բայերը բայանունի վերածեցէ՛ք: Ելլել, հիանալ, մտնել, խօսիլ, վագել, ընթանալ, յարգել, հեւալ, սուրել, աղայել, խնդրել, հուսիլ, բաղձալ:

Օրինակ. — Ելլել — ելի, հիանալ — հիացում եմ:

ԴԱՍ. — ԳՈՅԱԿԱՆԻՆ ՇՈՒՈՎԸ

72.— Հոյովուս կը կոչուի անուանին վերջաւորութեան կերպ կերպ փոխուիլը :

73.— Հոյովակերտ մասնիկ կը կոչուին այն գիրերը կամ վանկերը որոնք անուանին ծայրը կը կցուին զանազան հոյովներ ձեւացնելու համար :

74.— Հոյովը վեց ձեւ ունի . ուղղական, հայցական, սեռական, սրական, բացառական, գործիական :

75.— Ուղղականը գոյականին անփոփոխ ձեւն է եւ նախադասութեան ենթական ըլլալով կ'որոշուի ո՞վ, ի՞նչ քան, որո՞նք, ի՞նչ բաներ հարցումներով . օրինակ՝

Աստուած արդար է . ո՞վ արդար է — Աստուած .

Անձրեւներ տեղացին . ի՞նչ բաներ տեղացին, — անձրեւներ :

76.— Հայցականն եւս ուղղականին ձեւն ունի, բայց նախադասութեան մէջ ներգործական բայի մը սեռի խնդրին է և կ'որոշուի զո՞վ, ի՞նչ բանը, զորո՞նք, ի՞նչ բաները հարցումներով . օրինակ՝

Տիգրան ծեծեց Չապէլը . զո՞վ ծեծեց . — Չապէլը .

Արեւը կ'աճեցնէ բոյսերը . ի՞նչ բաները կ'աճեցնէ . — բոյսերը :

77.— Սեռականն ու սրականը կը կազմուին եզակիի մէջ ի, յոգնակիի մէջ ու հոյովակերտ մասնիկներով եւ կ'որոշուին որո՞ւ, որո՞ւն, որո՞նց . ի՞նչ բանի, ի՞նչ բաներու հարցումներով . բայց իրարմէ կը տարբերին հետեւեալ կերպերով :

78.— Սեռականը գոյականի մը լրացուցիչն է և հարցումը կ'իյնայ իր լրացուցած գոյականին վրայ . օրինակ՝ Արսէնին գիրքը . որո՞ւն գիրքը . — Արսէնին .

Գետի ձուկ . ի՞նչ բանի ձուկ . — Գետի :

79.— Տրականը սովորաբար բայի մը լրացուցիչն է և հարցումը կ'իյնայ իր լրացուցած բային վրայ . օրինակ՝

Գրիչս Հայկին տուի . որո՞ւ տուի . — Հայկին :
Վնասներու հանդիպեցայ . ի՞նչ բաներու հանդիպեցայ . — Վնասներու :

80.— Բացառականը կը ձեւանայ թէ՛ եզակիի, թէ՛ յոգնակիի մէջ և հոյովակերտ մասնիկով, և կ'որոշուի ո՞րմէ, ի՞նչ բանի, ո՞րիկ, որո՞նցու, ի՞նչ բաների հարցումներով . օրինակ՝

Յիսուս Յուդային մատնուեցաւ, որմե՞ մատնուեցաւ, — Յուդայէն .
Քոյրս օձերի կը վախնայ, ի՞նչ բաների կը վախնայ, — օձերէ :

Ես գետին անցայ . ո՞րիկ անցայ, — գետին :

81.— Գործիականը կը կազմուի թէ՛ եզակիի, թէ՛ յոգնակիի մէջ ով հոյովակերտ մասնիկով և կը պատասխանէ որո՞վ, ի՞նչ բանով, որոնցմո՞վ, ի՞նչ բաներով հարցումներուն, օրինակ՝

Տունը մանուկով շէն է . որո՞վ շէն է, — մանուկով :
Գործերով զբաղած եմ . ի՞նչ բաներով զբաղած եմ, — գործերով :

ՀՐԱՆԱՆԳՆԵՐ

36.— Հետեւեալ նախադասութիւններու պարունակած ուղղական հոլովները՝ մէկ, հայցականները՝ երկու գիծով ստորագծեցէ՛ք :

Ընթերցումը կը փարսէ ձանձորքը . — Վարդը փուշ ունի, կեանքն ալ ունի դառնութիւններ . — Իմաստունները գիտն ժամանակին յարգը . — Առուտակ վարդի ֆալեց պարտեզին . — Սահակ եւ Մեսրոպ բարգմանեցին Աստուածաշունչը :

37.— Հետեւեալ նախադասութիւններու սեռական հոլովները՝ մէկ, տրականները՝ երկու գիծով ստորագծեցէ՛ք :

Կասուի խաղը մուկին մահն է . — Երեցեք մեր բշխակներուն . — Սասիկ լոյսը կը վնասէ այլերուն . — Եղեամբ վնասեց ծառերու պտուղին . — Կենդանիներու աղքատ օգտակար է բոյսերուն . — Հնազուկ եղի՛ր օրկնիին :

ԴԱՍ. — ԱՆԿԱՆՈՆ ՀՈՒՆՎՈՒՄՆԵՐ

87. — Կան կարգ մը անուններ որոնց հոլովումը՝ միայն եզակիի մէջ. կը խտտորի ընդհանուր և զարտուղի ձեւերէն: Ասոնք կը կոչուին անխառն հոլովումներ:

88. — Անկանոն հոլովումներն են հետեւեալները:

Ո. Հ.	Հայր	Տէր	Աղջիկ	Աստուած
Ս. Տ.	Հօր	Տիրջ	Աղջկան	Աստուծոյ
Բ.	Հօրմէ	Տիրոջմէ	Աղջիկէ	Աստուծմէ
Գ.	Հօրմով	Տիրոջմով	Աղջիկով	Աստուծմով

89. — Հայր անունին պէս կը հոլովուին մայր, եղբայր, կնիստայր, կնիստայր, սակահայր, սակահայր, վասակահայր, սիրահայր, հօրեղբայր, մօրեղբայր:

90. Տէր բառին պէս կը հոլովուին ազգականութեան պարագայ ցուցնող կարգ մը բառեր, ինչպէս՝ կիկն (կնոջ), սիկիկն, սակսիկիկն, ֆոյր (քրոջ), մօրաֆոյր, հօրաֆոյր, անր, սաղ, անանր, սագր, կիսունր (կեսորջ), սակսէր և երբեմն ալ ընկեր: Սակայն՝ բացի կիկն և ֆոյր բառերէն, միւսները կրնան նաև հոլովուիլ ընդհանուր կանոնին համաձայն:

91. — Աղջիկ բառին պէս կը հոլովուին հրիկ (էրկան), կնիկ (կնկան), շեռ (լեռան), դուռ (դրան), մանուկ (մանկան), բեռ, քոռ և բոլոր ուլ վերջաւորող բառերը. օրինակ՝ ուսում (ուսման), և ինչ. Ասոնք եւս բացի հրիկ և կնիկ անուններէն, կրնան նաև հոլովուիլ ընդհանուր կանոնին համաձայն:

92. — Տուն և շուն անուններուն եզակի սեռական — տրականը կրնայ նաև հոլովուիլ սակ, շակ ձեւով որուն կը հետեւին գրասուն, զինեսուն և ինչ:

93. — Ուր բառին եզակի սեռական տրականը կը հոլովուի Աստուած բառին պէս ոչ վերջաւորութեամբ

(սիրոյ, սերկ, սիրով): Միեւնոյն ոչ վերջաւորութեամբ երբեմն կը հոլովուի նաև սեռական — տրականը իսկ վերջաւորող երկրանուններուն, վերջապառ աը կրճատուելով. օրինակ՝ Ասիա Ասիոյ, Սպանիա — Սպանիոյ և ինչ:

94. — Իսկ վերջաւորող ածի անունները միշտ կը հետեւին ընդհանուր կանոնին. օրինակ՝ Լուսիա — Լուսիայի և ինչ:

95. — Մարդիկ եւ զոյւր անկանոն յոգնակիներն ունին իրենց յատուկ հոլովումները, որոնք են՝ մարդոց — մարդոցն և մարդոցով. զոյւր — զոյւրն և զոյւրով:

Հ Ր Ա Ն Ա Ն Գ Ն Ե Ր

42. — Հոլովեցէ՛ք հետեւեալ անունները. եղբայր, կիկն, շեռ, իսպիա, ծագում, ֆոյր, մայր, դուռ, ձեռ, նաւ, բեռ, իրիկուն, շակ, սագր, Արաֆիա, կնիկ, սուր, շարք:

43. — Հետեւեալ խօսքերուն մէջ փակագծեալ անունները պէտք եղած հոլովին վերածեցէ՛ք:

Իմա ուրեան սիկիկը (տէր) վախեալ է. — Չըսող (մառուկ) կար չեն սար, (Թուրքիա) գորգերը շատ յարգի են (Ամերիկա) մեք. — Շիտակ վառը (զոյւր) առեք. — Մարդիկ պարտին (սէր եւ ֆաղափարտութիւն) վառուի իրարու հետ. — (Հայր եւ մայր) երախտիքը շատ մեծ է (զաւակներ) վրայ. — ճշմարիտ բարեկամը (եղբայր) աւելի կ'արժէ — Եկեղեցին (Աստուած) տունն է. Կեղծատը (մարդիկ) զգուշացե՛ք. — Մասիս (շեռ) կասարը նստաւ (շոյ) սպասը — Երկարը կը ծնծեն (մարտ). — Մարգարիտը (ծով) կ'երթէ. — Պատը կը շինուի (ֆալ կամ աղիւս):

44. — Հետագայ հոլովեալ անունները եզակի սեռականի վերածեցէ՛ք. որոշելով նաև իւրաքանչիւրին թիւն ու հոլովը.

Տղոց, սիրոյ, դաս, մարդոցն, աստուրն, Անգլիոյ, պաշտօնականերով, ֆոյրն, Աստուծով, սիրտօր, զարգացման, երկան, գոյումներու, հիմակուան, վաղուրն, մահու, Ամասիայի, Հիւլիոյ, քրտններու, շակ, գրասակ, հօրաֆոյր, մօրեղբօր, սիրով:

45. — Հետագայ վերացական անունները նիւթականի վերածեցէ՛ք. օրինակին պէս:

Մարդկութիւն, մշակութիւն, աղջիկներութիւն, հարսնութիւն, դիւցազնութիւն, զինուորութիւն:

Օրինակ. — Մարդկութիւն, մարդ:

ԳԱՍ. — ԶԱՅՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

96. — Ա և օ վերջաւորող անունները որոնք ընդհանրապէս յատուկ անուններ են, հոլովման ատեն ա եւ օ էն ետք յ մը կ'առնեն, և այն ատեն օ կը փոխուի ո ի. օրինակ՝

Սառա — Սառայի, Ամասիա — Ամասիայի, Հիւկօ — Հիւկոյի եւլն:

97. — Անկանոն հոլովումներու մէջ ընդհանրապէս ձայնաւորներու կորուստ կամ հնչափոխութիւն տեղի կ'ունենայ, ինչպէս՝ Տէր — իրոջ, կին — կնոջ, աղջիկ — աղջկան, ուսում — ուսման եւլն:

98. — Կանոնաւոր հոլովներու համար ձայնաւորներու կորուստ կամ փոփոխութեան երեւոյթն ընդհանուր չէ, այլ կարգ մը բառերու միայն յատուկ. ինչպէս՝ գիր — գրի, զաւակ — զաւկի, էշ — իշու, հալի — հաշուի եւլն:

99. — Թէ՛ կանոնաւոր թէ՛ անկանոն հոլովներու յոգնակիներուն մէջ ձայնական այսպիսի փոփոխութիւններ տեղի չունին:

ԸՆԹԵՐՅՈՒՄ. — ՅՈՐԵԿՆ ՈՒ ԳԻՇԵՐԸ

Յորեկը աշխատութեան ժամանակն է: Գիշերը՝ որ երկիրը կը պատէ իր աղջամուղջովը, վերջ կուտայ բոլոր յոգնութիւններուն եւ մեզ կը հրաւիրէ վայելելու անհրաժեշտ հանգիստը որուն պէտք ունինք: Անմիջապէս անուշ քունը կուգայ ծանրանալ մեր աչքերուն վրայ եւ նոր կորով ու կազդոյր կը պարգեւէ մեր մարմնին ու մտքին: Ի՞նչ ատենէն՝ գիշերուան կը յաջորդէ կրկին ցորեկը որ կ'ոգեւորէ բնութիւնը եւ մեզ կը հրաւիրէ վե-

րջտին աշխատութեան: Տղա՛ք, ամէն բան իր ժամանակն ունի. աշխատանքի ատեն պէտք է աշխատիլ, հանգիստի ատեն պէտք է հանգստանալ, քունի ատեն պէտք է քնանալ: Ով որ բնութեան օրէնքներուն չի համակերպիր, կը վնասուի:

ԹԵՎԱԴՐՈՒՄԻՆ. — Կարգալ այս հատուածը, ուղղազրել նոյնը, բաց որել բառերը եւ նիւթը:

ՀՐԱ. ՀԱՆԳՆԵՆՆԵՐ

46. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը եւ պարունակած անուններուն ցանկը կազմեցէ՛ք, իւրաքանչիւրին առջեւ նշանակելով թիւը, հոլովը եւ յօդերը:

47. — Ըսէ՛ք թէ՛ հետեւեալ հոլովուած անուններուն մէջ ծայնական ի՛նչ փոփոխութիւններ տեղի ունեցած են:

Աննայի, սիկնոջ, շարժման, սրտի, իրոյժի, պատուի, մարմնի, խթանի, սիրոջ, գրոյի, փարայի, կետրոջ, Սիմայի, վաճառման, դրան, սիրով, Մարիցայի, Թուրքիոյ, մեթ, երկան, գնով, Զասկի, կնկան, քերի:

48. — Հոլովեցէ՛ք հետեւեալ անունները:

Մեսիս, Հիւկօ, խոստում, գիծ, քերան, սետու, սրտի, Աստուածամիկ, փրկիչ:

49. — Հետեւեալ անուններուն եզակիները յոգնակիի, յոգնակիները եզակիի վերածեցէ՛ք:

Այս զոյսիմ մայրը, անւերուն դրօշակները, լեռան աղբիւրը, հացագործին փուռը, որսորդներուն հացակները, դուռներուն բանայիները, դարբինին մուճը, այգիին ցանկապատը:

ՕՐԻՆԱԿ. — Այս զոյց մայրերը:

50. — Հետեւեալ անունները հոլովեցէ՛ք նշանակելով յօդերով. **ա** յօդով. — Տեսակ, պապ, խնկմարիկ, ցալ.

դ » — Գաւազան, նեղ, մանչ, երկի, սիկիկ.

ե կամ **ը** յօդով. — էշ, Տիգրան, հաւ, սիկիկ, մարդ, կեսուր, սիրամայր, Գեղամիս, Հեղինէ:

51. — Մէջ մէկ նախադասութիւն կազմեցէ՛ք գործածելով հետեւեալ անուններուն նշանակելով հոլովները.

Ուղղական հալով. — Գալ, մակապ, Մասիս, Հայկ.

Սեռական » . — Յայդուրիւն, Ռուսիս, որոտում.

Բացառական » . — Յոնկ, Արեգակ, դար, մի:

52. — Հետեւեալ անուններուն բով դրէ՛ք յարմար սեռականներ, նախ՝ առանց յօդի, յետոյ՝ յօդով:

Բոյն, փեքակ, որչ, ախոռ, զով, փարախ:

Մտռակ, լակոս, կորիւն, ֆուռակ, բոժիւն, գառնուկ, ուշ, խոնկոր, հոբք, վառեակ:

Օրինակ. — Թաւուռի բոյն, բաշտին բոյնը. — ձիու մտռակ, ձիու մտռուկ:

53. — Գտէ՛ք եւ գրեցէ՛ք հետագայ կենդանիի անուններուն իգականները.

եզ, ախոր, ձի, վարուժան, եղջերու, խոյ:

54. — Գտէ՛ք եւ գրեցէ՛ք, հետեւեալ իգական անձի անուններուն արականները.

Աղջիկ, կին, դուստր, մայր, ֆոյր, հարս, կիկի, մաւ, զոսանջ, տաշ, սիկին, աննիկին, երեկին, պառաւ, կեւտր, մտախոր, օրտորդ, ասնամայր, կնիամայր:

55. — Հետեւեալ, նախադասութիւններու շեղագիր բայերը բայականի վերածեցէ՛ք.

Շաս բաղձալը բշտաւ կ'ընկ մարդը. — Անպերուն սրտալը վախ կ'ազդէ շատերու. — Ա. օլաւալը կը զօրացնէ դեղերները. — Աղամանիկն գալալը ալ կը շրջեն. — Գարցներուն բուզալը Սեպտեմբերին տեղի կ'ունենայ. — Մանուկը լալով աշխարհ կուգայ. — Գարունը մեծեալ թնութեան դեպի կեանք վերադասեալու եղանակն է. — Յիսուսի ճնիւր նշաններով յաշնուեցաւ. — Ս. Հոգիին գալը պատանեցաւ Պենտեկոստի օրը:

Օրինակ. — Շաս բաղձանքը բշտաւ կ'ընկ մարդը:

56. — Մէյ մէկ նախադասութիւն կազմեցէ՛ք գործածելով հետեւեալ անուններուն նշանակեալ հոլովները.

Հայցական հոլով. — Թունկ, եւս, կեանք, աւեխ.
Տրական . . . — Լուսիս, ընկեր, խալ.
Գործիական . . . — Պատիւ, բանպակ, հարեւորութիւն:

57. — Հետեւեալ անուններուն բով դրէ՛ք յարմար սեռականներ. վրան, խոճիք, հիւղակ, սնակ, տուն, վակ, օրեսն, ապարակ, դիակ, պաշտ:

Ժողովուրդ, բանակ, հօտ, երանակ, նախիր, վստո, ջոյիւր, փոհակ, արմ. տրմիդ, կարաւան, անտառ, հոյ, բոյ, դեգ, կոյ, շեղջ, զունդ, վաշտ, խուճ, փունջ, սրցակ:

Օրինակ. — Գերուի վրան, ֆաղափ ժողովուրդ:

58. — Հետեւեալ անուններով նախադասութիւններ կազմեցէ՛ք օրինակին պէս:

Եղջիւր, խայրոց, կտուց, ձիւն, ժակիք, ճանկ, մագիչ, ցռուկ, ագի, բար:

Օրինակ. — Եզը եղջիւր ունի:

59. — Հետագայ անուններուն սեռականները ուղղականի, ուղղականները սեռականի վերածեցէ՛ք.

Մօր զաւակ, գործի մարդ, սան սիկին, ընթերցման գիրք, կեանքի ձեւ, բարութեան Աստուած, կրօնքի սեր:

Օրինակ. — Մօր զաւակ, զաւակի մայր:

60. — Նախադասութիւններ կազմելով գրեցէ՛ք թէ ի՞նչ բանի գործիք են հետեւեալ անունները.

Մուճը, գրիչը, սանդը, ուրագը, դանակը գերակին, մատուցը, արօրը, ձեփիչը, գրոցը, կարկիւր, յօսոցը խաւոցը:

Օրինակ. — Մուճը ձեծելու յորժիք է:

61. — Նախադասութիւններ կազմելով լսէ՛ք թէ ի՞նչ կ'արտադրէ.

Որբասունկը, ձիւնիկն, նշնիկն, քրքնիկն, շերտը, մեղուն, խաշխաշը, բեկեկիկն, արեւը, անուխը, ջուրը:

Օրինակ. — Որբասունկը խաղաղ կ'արտադրէ:

62. — Նախադասութիւններ կազմելով ըսէ՛ք թէ ի՞նչ բանի մաս կը կազմեն հետեւեալ անունները.

Նժարը, կշը, Ասիան, երախակաշը, ասպանդակը, անխը, սրաքը, առանցիք, տերեւ, խոփը, առաստաղը, նետը, խոհանոցը, ծրանամ, ամխը, արմուկը, բոյգն, քիթը, առաւօրը:

Օրինակ. — Նժարը կշիռի մաս կը կազմէ:

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԱՄՈՒՎ ՀԱՍԷՔ ԵՒ ԳԱՐԱՊՏԱԿԱՌԷ

Մինչ սա հասկեր կուռ, հասուն ու գեղեցիկ
Դէպի գետին իրենց գլուխն են ծըռեր,
Ինչէ՛ն է որ նա՛ մէկ հասկը ուղղաձիգ
կը բարձրանայ ա՛յնքան վեր:

— Զի չըկայ իր թեթև գլխուն մէջ հատիկ:

Սա տակառը զոր այգեպանն՝ հոռանդուն
Գլտորելով կը տանի դէպի հնձան,
Ինչէ՛ն է որ կը հանէ ա՛յնքան թնդիւն,
Ա՛յնքան ժխոր աղմկածայն:

— Որովհետեւ դատարկ է մէջը համբուն:

Թգգմ. Յ. Գ.

Լ. — Ա. ՊՈՒՐԿԵՆ

Թեալադուրիւն. — Գոց արտասանել այս ոտանաւորը, սովորել բառերու նշանակութիւնը, բացատրել նիւթը եւ բարոյականը.

ԱԾԱԿԱՆ

ԴԱՍ. — ԱԾԱԿԱՆ ԵՒ ԻՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

100. — Ածական կը կոչուին այն բառերը ոյ ոնք գոյականը որակելու կամ որոշելու կը ծառայեն:

101. — Ածականները անփոփոխ բառեր են. հետևաբար ո՛չ թիւ ունի. ո՛չ հոլով. և յօգ ալ չեն առնիր:

102. — Ածականները չորս տեսակ են. որակական, թուական, ցուցական և անորոշ:

ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

103. — Որակական են այն ածականները որ գոյականին յատկութիւնը կամ հանգամանքը ցոյց կուտան. օրինակ՝

Գեղ ձի. չար տղայ, ներսակ ձիւն ևլն:

104. — Որակական ածականը կ'որոշուի գոյականին վրայ ընելով ի՛նչպիսի հարցումը:

ԸՆԹԵՐՅՈՒՄ. — ԳԱՅԼՆ ՈՒ ՇՈՒՆԸ

Սովալլուկ գայլ մը երբ ագարակի մը ժօաէն կ'անցնէր, ագարակին դրան քով տեսաւ գեղեցիկ ու պարարտ որսառն մը: Դիտեց զայն և իր ողորմելի վիճակը բաղդատելով անոր երջանիկ կացութեան հետ, բուռն նախանձ մը արթնցաւ իր մէջ և շունին մօտենալով ըսաւ. — Բարեկամ, այսօր ի՛նչքան նախանձելի կ'երևիս այժիս այդ քու մաքուր, գէր ու հանգիստ վիճակիդ մէջ. ի՛նչքան կը ցանկայի ես այ քու վիճակդ ունենալ... բայց ի՛նչ է սա վիզէդ անցումը».— «Անուրս է», պատասխանեց շունը.— «Անձրդ, ուրիմն ինձի պէտք չէ քու հանգստութիւնդ այսպէս գերութեան ու կապանքի տակ»: Այսպէս ըսելով գայլը արագ քայլերով վերադարձաւ իր անատը:

Թեյադրուրիւն.— Կարգալ այս հատուածը, ուղղագրել նոյնը, պատմել նիւթը, բացատրել բարոյականը:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

63. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը եւ պարունակած որակական ածականները մէկ գիծով, որակած գոյականները՝ երկու գիծով ստորագծեցէ՛ք:

64. — Հետեւեալ բառերուն մէջ որակական ածականները որոշելով ստորագծեցէ՛ք:

Բարձրաբերձ կաղնի, ամբակուռ պարիսպ, Հայկ դիցազն, ամենի այիֆ, ազոու ճառ, խոր գիտութիւն, պարկեշտ վարժ, վստն ոճ, քանգուր մազ, սիրուն ժպիտ, վճիտ ջուր, խաժ այլեր, Արայ գեղեցիկ, քայար մարգ, Սուրբ Ներսիս Շնորհայի:

65. — Հետեւեալ բառերէն իւրաքանչիւր գոյականի քով դրէ՛ք իրեն յարկար ածականը:

Անօր, կոյս, քաղցր, փափուկ, բարեխառն, դիւրարեկ, կշիւայ, յիշատակ, հաւաստ, անակնկալ, անկուն, հաստատուն, արկածայից, աչքոտ, ուղեւորութիւն, կամփ:

Օրինակ. — Դիւրարեկ անօր:

66. — Հետեւեալ գոյականներէն իւրաքանչիւրին քով դրէ՛ք մէկ-մէկ յարմար որակական ածական.

Քնար, առիւծ, պայտար, յոյս, եռանդ, եղեգ, կարիճ, հանճար, կոթող, արծիւ, ստուակ, գառնուկ, վիշտ, սուգ, ճեղ:

Օրինակ. — Քաղցրահունչ քնար:

67. — Հետեւեալ ածականներէն իւրաքանչիւրին քով դրէ՛ք մէկ-մէկ յարմար գոյական.

Սխալելի, անցաւոր, սեգ, նուրբ, կոշտ, պայծառ, զուարթ, վառագաւոր, քաղցր, երկոյտ, ճարտար, կատարի:

Օրինակ. — Սխալելի գեղեցկութիւն:

68. — Գտէ՛ք գոյն, ծաւալ, համ, ձու եւ շօշափելի յատկութիւն ցոյց տուող երեքական որակական ածականներ.

Օրինակ. — Գոյն ցոյց տուող՝ կարմիր. — Ծաւալ ցոյց տուող՝ լայն. — Համ ցոյց տուող՝ լեղի. — Ձու ցոյց տուող՝ եռանկլիւն. — Շօշափելի յատկութիւն ցոյց տուող՝ կակուղ:

ԴԱՍ.— ԹՈՒԱԿԱՆ ԱՍԿԱՆ

105. — Թուական կը կոչուին այն ածականները որ թիւ և թուական կարգ ու բաշխում ցոյց կուտան և երեք տեսակ են. բացարձակ, դասական, բաշխական:

106. — Բացարձակ են պարզապէս գոյականներուն համարանքը, այսինքն քանի՛ հատ ըլլալը ցուցնող թուականները. օրինակ՝

Հինգ տուն, տասը ոչխար եւլն:

107. — Դասական են գոյականին կարգը, այսինքն քաներորդ ըլլալը ցուցնող թուականները. օրինակ՝

Վեցերորդ վաշտ, երկրորդ դասարան եւլն:

108. — Դասական թուականներն են առաջին, վերջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութներորդ, իններորդ, տասներորդ, քսաներորդ, եւլն:

109. — Դասական թուականները կրնան գրուիլ նաև հայերէն արութէնի գլխագիր տառերով. Ա. կը նշանակէ առաջին, Բ՝ երկրորդ, Գ՝ երրորդ, Դ՝ չորրորդ, Ե՝ հինգերորդ, Չ՝ վեցերորդ, Է՝ եօթներորդ, Ը՝ ութերորդ, Թ՝ իններորդ, Ժ՝ տասներորդ, Ի՝ քսաներորդ, Լ՝ երեսներորդ եւլն:

110. — Բաշխական են գոյականին քանեկան հատ բաշխում ըլլալը ցոյց տուող թուականները. օրինակ՝

Միշիկ խնձոր, հինգական հոգի եւլն:

111. — Բաշխական թուականներն են ձկնիկ, երկերկու, երեքական, չորսական, հինգական, վեցական, եօթնական, ութական, իննական, տասնական եւլն:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

69.— Հետեւեալ նախադասութիւններու մէջէն բացարձակ, դասական եւ բաշխական թուականները որոշելով զատ զատ սինկներու մէջ գրեցէք:

Մեր դպրոցին շրջանը կը բաղկանայ վեց տարիկ. — Յիսուս երեսուն տարեկան եր երք տասն տարեկան. — Ասուածաշունչը հայերէնի բարձրագոյնը հինգերորդ դարուն. — Մայրս ինծի եւ խորեղուս մէջէն խնայեալ տուաւ. — Մեր դպրոցին մէջ հարիւր յիսուն տղաք կը ընդհանրուին. Անոնք եօթնական հոգի խումբերու բաժնուելով խաղաքին. — Երկաթի մէջ շատ խիտ կան որոնք կեանքի հարիւրերորդ տարին քանակուին. — Երեսու Ենտեսային պարտքաւ ԺԶ. Դարուն մէջ:

70.— Հետեւեալ նախադասութիւններու պակասները լրացուցէք պէտք եղած թուական ածականներով (բացարձակ, դասական կամ բաշխական):

Երկու դարը կը կոչուի . . . դար. — Իւրտասնիւր շաբաթ կը բաղկանայ . . . օրէ. — Մեկ ֆրանսական ոսկին . . . ֆրանկ է. — Օգոստոսը . . . ամիսն է տարիին. — Մեր ձեռքերն ունին . . . մատեր. — Ս. Լուսաւորիչ պարտքաւ . . . դարուն մէջ:

71.— Ըսէ՛ք թէ ի՞նչ յատկութիւններ ցոյց կուտան հետեւեալ օրակական ածականները, եւ նման յատկութիւն ցուցնողները զատ զատ սինկներու մէջ գրեցէք:

Տգոյն, ընդարձակ, դառն, սրածայր, ծանր, խորունկ, կծու, փափուկ, հաստ, քոյրոյի, բերել, փաղցր, ճուճել, բարձր, բարկ, կանամի, ցած, աղի, խոտանար, պաղ, անձուկ, փառակուսի, օտ, շայն, գաղղ, անլի, զով, քրու, նուր, կապոյտ, փոքր, գորշ:

72.— Հետեւեալ գոյականներուն քով դրէք յարմար օրակական ածականներ:

Շոգի, մշուշ, անպ, եղեւտ, ցոյ, անձուկ, կարկուտ, ժիւն, Անագան, ձախիւ, լիճ, ծով, ովկիանոս, վտակ, գետ, աղբիւր:

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՍԻՐՈՅ ԲՈՅՆԸ

Ազանի թեւերով
Սէրն երկիրքէն վար իջաւ,
Իրեն կայան փնտռելով
Ասդին անդին շատ թռաւ,
Եւ վերջապէս ապահով՝
Մօր սրտին մէջ բոյն դրաւ:

ՅԱԿՈՒ ՈՍԿԱՆ

Թեւադուրիւն, — Գոց սորվիլ այս ոտանաւորը, բացատրել իմաստն ու բարոյականը:

ԳԱՍ. — ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

112. — Յուցական կը կոչուին այն անականները որոնք գոյականը ցուցնելով որոշելու կը ծառայեն. օրինակ՝ Այս քաղաքը, այդ մարդը, նա գետը ևլն :

113. — Ցուցական անականներն են այս, այդ, այն, սա, դա, նա :

Ասոնցմէ այս, սա կը ծառայեն խօսողին մօտիկ բան մը ցոյց տալու, այդ, դա կը ծառայեն խօսողին դիմաց գտնուող բան մը ցոյց տալու, այն, նա կը ծառայեն խօսողէն հեռու բան մը ցոյց տալու :

114. — Սա, դա, նա անո՛վ միայն կը տարբերին այս, այդ, այն էն որ կը ծառայեն աչքի առջև եղած բան մը շեշտելով և մասնանիչ ընելով ցոյց տալու, մինչդեռ վերջիններուն համար պայման չէ որ իրենց ցոյց տուած առարկան անպատճառ աչքի առջև գտնուի :

ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԱՂԻՐԱՍԻՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Երիտասարդ մը իր նախկին դաստիարակին հանդիպեցաւ օր մը և անոր պատմեց իր չքաւորութիւնը : — «Բան մը չունիմ, ըսաւ, չկրցայ դիրքի մը հասնիլ և թշուառ եմ» :
« — Բայց դուն իրապէս ըսածիդ չափ աղքատ ես, պատասխանեց ուսուցիչը, պատուական առողջութիւն մը չե՞ս վայելեր : Յետո՛յ այս ձեռքդ, շարունակեց դաստիարակը անոր աջ ձեռքը բռնելով, հուժկու և աշխատութեան յարմար չէ՞. կուտայի՞ր զայն տասը հազար դահեկանի փոխարէն» . — «Աստուած չընէ», պատասխանեց երիտասարդը . — «Սա սա աչքերդ որ այս գեղեցիկ տիեզերքը կը դիտեն, կուտայի՞ր քսան հազար դահեկանի, և դա ականջներդ որ մինչև հօգիիդ կը հասցընեն թռչուններուն երգերը և բարեկամներուդ խօսքերը, կը փոխէ՞ր արդեօք աշխարհի բոլոր ոսկիին հետ» :

— «Անշուշտ ո՛չ» . — «Լաւ ուրեմն. մի՛ գանգատիր թէ — աղքատ ես. դուն ա՛յնպիսի հարստութիւններ ունիս՝ որ կը գերազանցեն դրամական բոլոր հարստութիւնները . խնդիրը զանոնք գործունէութեան դնել և արժեցնելուն մէջ է» :

ԹԵՂԱԳՐՈՒՔԻՆ. — Կարդայ այս հատուածը, ուղղագրել նոյնը, գատմել նիւթը, բացատրել բառերուն նշանակութիւնները :

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

73 — Օրինակեցէ՛ք վերի հատուածը եւ պարունակած որակական, ցուցական եւ թուական անականները որոշեցէ՛ք քերականացի :

74 — Հետեւեալ նախադասութիւններուն ցուցական անականներն ստորագրեցէ՛ք :

Այս խնձորները քարս են. այդ սաւանդը փետր են. — Այն աղճիկը ճանչցա՛մ. — Սա գաւազակը ինձի՛ տէրք. — Միհրան շուտած սա կողմ, նա կողմ կը վազէր. — Ես հրաժարեցայ այդ հաճոյի՛ն. — Նա հեռուի ակնառը խիստ ընդարձակ է. — Դա խանութիւն տէրը շատ հարուստ է :

75. — Հետեւեալ բառերուն բով դրէ՛ք յարմար ցուցական անականները :

Պատկերը, շքեղ կառք, հոյակապ եկեղեցի, հանդիպակաց բարձր, հեռաւոր գիւղը, դիմացի պարտէզը :

76. — Հետեւեալ գոյականներուն բով դրէ՛ք յարմար որակական անականները :

Չեփիւռ, հով, քաղի, խորշակ, սրբիկ, քարառ, ուրական : Դաշտ, հովիտ, անապատ, սար, ձոր, կիրճ, լեռնադաշտ :

77. — Հետեւեալ անական-գոյականներով մէյմէկ նախադասութիւն կազմեցէ՛ք :

Գիշահիչ բոլուն, քերի գիտութիւն, վաշխույ հագուստ, գանձակճ անդունդ, արնքաց գետ :

Օրինակ — Արծիւը գիշահիչ բոլուն մըն է :

78 — Հետեւեալ որակական անականները՝ վերացեալ անունի եւ գոյականները՝ սեռական հոլովի փոխեցէ՛ք :

Կարմիր վարդ, գնում հոգի, կարծր սիրտ, արդար Աստուած, բարի հայր, արքուն հովիտ, օգտակար ուսում, բարձր գիտութիւն, աստիկ մտն, կանանց խոս, կասադի ծով :

Օրինակ. — Վարդի կարմուրթիւն :

ԴԱՍ. — ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆ

115. - Անորոշ կը կոչուին այն ածականները որոնք անորոշ իմաստ կուտան. օրինակ՝

Նաւ մը, ուրիշ մարդ, բոլոր քաղաքը եւն :

116. — Անորոշ ածականներու զլխաւորներն են

Մը անկն, ուրիշ, բոլոր, միւս, իւրաքանչիւր, քանի մը, մեկ քանի, շատ մը, քիչ մը, ո՛վ, ի՛նչ, ինչի՞նչ, ո՛ր, որեւէ, ինչ, միեւնոյն, մեկաւ, ո՛չ մեկ, անկն մեկ, ուրոյն, այսինչ, այդինչ, այնինչ, քանի՞, աստակ, աղանկ, անանկ, այսչափ, այդչափ, այնչափ, ո՞րչափ, այսքան, այդքան, այնքան, ի՛նչքան, ո՞րքան, այսպիսի, այդպիսի, այնպիսի, ի՛նչպիսի, ո՞րպիսի եւն :

117. — Անորոշ ածականներէն մասնաւորապէս ո՞ր, ի՛նչ, քանի՞, ի՛նչքան, ո՞րքան, ո՞րչափ, ի՛նչպիսի, ո՞րպիսի ածականները կը գործածուին հարցական ձեւով և այն առեւն կը կոչուին հարցական անորոշ ածական :

118. — Մը անորոշ ածականը բացառաբար գոյականէն ետքը կը գրուի եւ եթէ իրեն յաջորդեն ե, նն, էի, էր, էինք, էիք, էին բայերը կամ ալ շողկապը. սովորաբար կը փոխուի մընի. օրինակ՝

Հաւր ընտանի թռչուն մըն է. — դաս մըն ալ առինք եւն :

ՀԲԱ. ՀԱՆՊԱՆՑ

79. — Հետեւեալ նախադասութիւններուն անորոշ ածականները որոշելով ստորագծեցէք հարցական անորոշներուն վրայ պակասած նշանները դրէք :

Ամեն ծաղիկ ունի իր ուրոյն հոտը. — Բանի մը կենդանիներ անոնք բնական կը մնան. — Ծող մատը մը որեւէ պատճառ մը կը գնկ չաչխատելու. — Իւրաքանչիւր տարի ունի իր հաճոյքները. — Միւս պահողիկն մէջ շատ մը ընտանիքներ կը բնակին. — Այս գեղին մէջ ինչքան մարդ կայ. — Որ գեղը աւելի մօտ է. — Աստակ հրաշայի պատճից տեսած

— Վեցնի մէջ այնպիսի ժամեր կան ուր մատը անկն քանի կը անոնց. — Ինչպիսի կեանք է աս. — Ինձի՞ նայի, ո՛վ մատը. — Ինչ քանի մը արտակարգ ինչքանք կան, կը ստանան անորոշ. — Չոր կործանող մէջ քանի աշակերտ կայ. — Ինչ քիչ կ'ուզեք. — Ինչի՞նչ բոլոր բնականներն են. — Հայերը էրօթածեղէն զուրա ուրիշ կարողիկոս մըն ալ ունեն օրինակ մէջ. — Միեւնոյն պատը կրկին գործելու չի :

80. — Վերի նախադասութիւններուն պարունակած գոյականներու տեսակը, թիւը, հոլովը եւ յօդերը որոշեցէք բերանացի :

81. — Հետեւեալ գոյականներուն քով դրէք մէյմէկ յարմար արական ածականներ :

Արանք, անտառ, շուկայի, խնամքի, երկաթուղի, փայտուղի, արագ, փողոց, գոյն, ծառուղի, հրապարակ :

82. — Հետեւեալ բառերով մէյմէկ նախադասութիւն կազմեցէք իւրաքանչիւր եղանակ, այս կեանքը, հարիւր տարի, երկուրոր քիչ, բոլոր մարդիկ :

83. — Հետեւեալ գոյականներուն իրենց յատկութիւնները ցոյցող ածականներ ընկերացնելով օրինակին պէս նախադասութիւններ կազմեցէք :

Փիղը, վագրը, առիւծը, գառը, աղուկը, եղջիւր, ոչխարը, նախաճաշը, կասուն, շունը, մուկը, եղջերուն, ձիւն, իծը :

Կապարը, աղանակը, ամուսնը, քաղաքը, մեղրն ու կարը, սոսն ու սխտը, ձիւնն ու շաքարը :

Օրինակ. — Փիղը վիթխարի է :

84. — Հետեւեալ նախադասութիւններու պարունակած անուններուն տեսակը, թիւը, հոլովը եւ ածականներուն տեսակն ու ո՞ր գոյականին վերաբերիլը որոշեցէք բերանացի :

Ինչու է փարսան եւ թագաւորը խոսք մըն էր երբեմն. — Թարեղիկ հսկայական աշատակը կանգնել տուա Բեյ. — Եգիպտոսի քաղաքներ հոյիսը կ'ոտոզուի ներսի ջուրերով. — Անտիկայի գիտք տեղի ունեցաւ ԺԵ. դարուն. — Այս աշխարհի մէջ անկն քան փոխական է. — Դպրոցին մէջ իւրաքանչիւր աշակերտ պատահական է ակնածիլ իր ուսուցիչներէն եւ հնարակնիչ ակնուպատեանէն, — Երեսուսի նշանաւոր սաճարը միւն էր հին աշխարհի ետը հրաշայիմեջ փետոսի նշանաւոր սաճարը միւն էր հին աշխարհի ետը հրաշայիմեջ թէն. այդ սաճարը գոն զեւրոպայէն արեւմուտը մը. — Գարունն եղանակ

ներք երեխական ամիսէ կը թաղեանան — Դպրոցին կրթական ծրագիրը թաժնուած և երկեղիւ սարի շեւոյութեամբ երեք դասընթացներու:

85.— Հետագայ անուններէն վերացեալ գոյականները՝ ածականի եւ ածականները՝ գոյականի փոխելէք օրինակին պէս.

Սոդոմոնեան իմաստութիւն, գիշերային սուսուս, հրեշտակային մատրութիւն, աղետայի դժբախտութիւն, շուշանային ամբօնութիւն, արֆայական վեհափառութիւն:

Օրինակ.— Իմաստուն Սոդոմոն:

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — Վ.Ս.Բ.Դ.Ը

Սիրուն ծաղիկ լուսաթափանց,
Գիտե՞ս որչափ կը սիրեմ քեզ.
Սակայն, աւա՛ղ, հազիւ ծաղկած՝
Կ'անհետանայ վառքըդ կարծես:
Ամէն անգամ որ բախտն անգութ
Վճիռը տայ քեզի մահուան,
Իբրեւ յուշքը շունորհներուդ,
Հոս կը ձգես բոյր մը միայն:
Այնպէս ալ երբ գիտուններէն
Մէկը երկրէս մեկնի լըռին,
Կ'արտաբուրէ միշտ ետեւէն
Ազուօր բոյրը իր համբաւին:

Թրգմ. Մ. Գ.

ԱԼՊԷՐ ՍՈՆԴԷՍՈՆ

Թեւադրութիւն.— Գոց սորվի եւ արտասանել այս ոտանաւորը, բացատրել իմաստը, արձակի վերածել զբաւոր.

ԴԵՐԱՆՈՒՆ

ԴԱՍ. — ԴԵՐԱՆՈՒՆ ԵՒ ԻՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

119.— Դերանուն կը կոչուին այն բառերը որոնք անուններու տեղ կը դրուին:

120.— Դերանունները փոփոխական բառեր են, որոնք թիւ և հոլով, և կը գործածուին թիւովն ու հոլովովն այն անուններուն որոնց տեղ կը դրուին:

121.— Դերանունները հինգ տեսակ են. անձնական, յարաբերական, ցուցական, ստացական, և ակորոչ:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

122.— Անձնական դերանուն են անձերու անուններուն տեղ դրուած դերանունները. օրինակ՝ ես, դու, իմ եւն:

123.— Անձնական դերանունները երեք դէմք ունին.
Ա. դէմք, այն որ կը խօսի.

Բ. » » որուն կ'ուղղուի խօսքը.

Գ. » » որուն վրայով կը խօսուի:

124.— Ա. Դէմքի անձնական դերանունն է ես և էք հոլովուի հետեւեալ կերպով.

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	ես	Մենք
Հայց.	Զիս	Մեզ
Սեռ.	Իմ	Մեր
Տր.	Ինձի	Մեզի
Բաց.	Ինձմէ	Մեզմէ
Գործ.	Ինձմով	Մեզմով

125.— Բ. Դէմքի անձնական դերանունն է դու և կը հոլովուի հետեւեալ կերպով:

	Եզակի	Յագնակի
Ուղղ.	Դուն	Դուք
Հայց.	Քեզ	Ձեզ
Սկո.	Քու	Ձեր
Տր.	Քեզի	Ձեզի
Բաց.	Քեզմէ	Ձեզմէ
Գործ.	Քեզմով	Ձեզմով

126. — Գ. Դէմքի անձնական դերանուններն են ինք, ան, անիկա և կը հօլովուին հետեւեալ կերպով:

	Եզակի	Յագնակի
Ուղղ.	Ինք Ան, անիկա	Իրենք Անոնք
Հայց.	Ձինք Ձանի, զանիկա	Ձիրենք Ձանոնք
Սկո.	Իր Անոր	Իրենց Անոնց
Տր.	Իրեն Անոր	Իրենց Անոնց
Բաց.	Իրմէ Անկէ	Իրենցմէ Անոնցմէ
Գործ.	Իրմով Անով	Իրենցմով Անոնցմով

127. — Գ. դէմքի անձնական դերանուններէն ընդհանրապէս ան, անիկա և քիչ անգամ ինք կը գործածուին նաև կենդանիներու և իրերու անուններուն տեղ ալ:

128. — Անձնական դերանուններուն եզակի և յօգնակի սեռականները (ին, քու, մեր անք, իր, անոր, իրենց, անոնց) կը կոչուին նաև ստացական սծական որովհետև բանի մը որու վերաբերիլը ցոյց կուտան:

ԸՆԹԵՐՑՈՒՄ. — Ա.ՂՈՒԷՍԻՆ ԳԱՆԳԱՍԸ

Աղուէս մը սապէս կը զանգատէր. — «Միայն վառեակ մըն էր իմ գողցածս, կ'ըսէր անիկա. ես ի գործ դրի խոհեմութեան պահանջած բոլոր զգուշութիւնները, բայց դարձեալ յայտնուեցայ և ամէն ոք զիս կը մեղադրէ. չեմ գիտեր ինչպէս ընելու է ասկէ յետոյ»:

— «Ատկէ դիւրին բան չկայ, պատասխանեց իրեն չիկ մը. եթէ դուն կ'ուզես որ մարդիկ չիմանան քու քէչ արարքդ և քեզ չմեղադրեն քնաւ գէշութիւն մի գործեր»:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

86. — Յրինակեցէք վերի հատուածը ստորագծելով անձնական դերանունները. յետոյ ըսէք թէ անոնք որ անունին տեղ զըրուած են:

87. — Հետեւեալ մանրավէպին մէջ Պետրոսին տեղ դուք ձեր անձը ենթադրելով անոր համեմատ զայն բարեկոխեցէ՛ք, զնելով պէտք եղած դերանունները:

Պետրոս դպրոցին մէջ յաւ աշխատի, ուսուցիչները շատ զոն են Պետրոսին, Պետրոսի ծնողքը Պետրոսը շատ կը սիրեն որովհետև Պետրոս տունին մէջ ալ բարի եւ հնազանդ վարժ ունի, բոլոր մարդիկ Պետրոսին համակիր են, զի Պետրոս շատ բարեկիր է:

Օրինակ. — Ես դպրոցին մէջ յաւ աշխատիլ . . . եմ:

88. — Հետեւեալ նախադասութիւններու անձնական դերանուններէն եզակիները յօգնակիի, յօգնակիները եզակիի վերածեցէ՛ք, բերանացի որոշելով նաեւ իւրաքանչիւրին թիւը, դէմքը եւ հօլովը:

Պօղոս ինձի գարկաւ. — Մեր տունը մեծ է — Քեզմէ իրատ լեւ ուզեր. — Անոնք մեզ խաբար են. — Քու գիրքը մաշած է. — Դուն խաւսեցար, անիկա լեծք — Ի՞նչ կը սպասես իրւկ. — Դուք իրաւունք չունիք մեզ մտնելու. — Այդ գիրքը մեզի յանձնէ. — Ասիկա իր տունը տեղը լից. — Ես տեսայ զինքը. — Մի դպիր անոնց:

89. — Հետեւեալ նախադասութիւններու անձնական դերանուններէն առաջին դէմքը եզակիները՝ երկրորդի, երկրորդի փոխեցէ՛ք օրինակին պէս:

Անա իմ գիրքս, ո՛ւր է քու գիրքդ. — Այդ բարձ պատիւներէն քոյ տուն մեզի. — Ուսուցիչը մեզ վարձատրեց, ինչ պատժեց. — Ինձմէ ի՞նչ կ'ուզէ արդ. — Քեզմով կը լրանայ կարգը. — Արամ ինձի շաքար տուաւ, ինչի ի՞նչ տուաւ:

Օրինակ. — Անա քու գիրքդ, ո՛ւր է իր գիրքը:

ԳՈՍ. — ՓՈՒԱԴԱՐՁ ԵՒ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆ

129. — Անձնական դերանուններ են նաև իրար, մեկզմեկ որ կը կոչուին փոխադարձ դերանուններ:

130. — Փոխադարձ դերանունները միայն եզակի թիւով կը հոլովուին հետեւեալ կերպով:

Ուղղ.	(Չունի)	(Չունի)
Հայց.	Իրար, զիրար	Մէկզմէկ
Սեռ. Sr.	Իրարու	Մէկմէկու
Բայց.	Իրարմէ	Մէկմէկէ
Գործ.	Իրարմով	Մէկմէկով

131. — Անձնական դերանունները կրկնուելով կը ծառայեն կազմելու ուրիշ տեսակ մը դերանուններ որ կը կոչուին անդրադարձ և հետեւեալներն են.

Ա. Դ Է Մ Ք

Նզակի	Յոգնակի
Ո. Ես ինքս	(Չունի)
Հ. Ես զիս կամ ինքզինքս	Մենք մեզ կամ ինքզինքնիս
Ս. Ես իմ	Մենք մեր
Տ. Ես ինձի	Մենք յեզի
Բ. Ես ինձմէ կամ ինքիրմէս	Մենք մեզմէ
Գ. Ես ինձմով կամ ինքիրմովս	Մենք մեզմով կամ ինքիրմովսիս

Բ. Դ Է Մ Ք

Ո. Դուն ինքդ	(Չունի)
Հ. Դուն քեզ կամ ինքզինքդ	Դուք ձեզ կամ ինքզինքնիդ
Ս. Դուն քու	Դուք ձեր
Տ. Դուն քեզի	Դուք ձեզի
Բ. Դուն քեզմէ կամ ինքիրմէդ	Դուք ձեզմէ
Գ. Դուն քեզմով կամ ինքիրմովդ	Դուք ձեզմով կամ ինքիրմովդիդ

Գ. Դ Է Մ Ք

Իրենք զիրենք կամ ինքզինքնին
Իրենք իրենց
Իրենք իրենց
Իրենք իրենցմէ
Իրենք իրենցմով կամ ինքիրմովսին

ՀՐԱՀԱՆՊԵՆԸ

90. — Հետեւեալ նախադասութիւններու փոխադարձ եւ անդրադարձ դերանունները ստորագծեցէ՛ք, յետոյ անոնց դէմքը. թիւն ու հոլովը որոշեցէ՛ք բերանացի.

Ինկզինկ մի՛ բարձրացնէ որպէս զի լիտնարհիս — Մարդիկ պարտական են իրարու օգնելու. — Մեկզմեկ սիրեցէ՛ք. այս է Յիսուսի պատուիրը — Տղամ, մեկուկու սիր մի՛ շարձեցէ՛ք, իրարմէ շու օրինակ առէ՛ք. ես իմ պարսխ կասարեցի. — Դուն ինկ լանձանք կարդալու ես այդ գործը. — Մեկ շատ անգամ ինկզինկիս կը խաբէմ. — Դուք մեզմէ բան մը մի՛ ըսէ՛ք, այ ինչ որ ես հրահանգեցի. — Մարդ սաստիկ բարկանալով ինկիրմէ կ'ելլէ. — Մարդիկ կան որ իրենց իրենց ձեռքով կը վնասուին. — Ես ինկս սեսայ այն մարդը. — Մեկ մեզմով լեւնի՛ր նար կասարեյ այս գործը:

91. — Հետեւեալ փոխադարձ եւ անդրադարձ դերանուններուն նզակիները յոգնակիի եւ յոգնակիները եզակիի վերածեցէ՛ք.

Ինկիրմէ, ես ինձի, ինկզինկ, մեկ մեզմէ, ինկզինկս, ես ինձմով, ինկիրմս, մեկ մեզ, դուք մեզի, ինկզինկ:

92. — Հետեւեալ շեղադիր անուններուն տեղ դրէ՛ք պէտք եղած անձնական կամ փոխադարձ դերանունները.

Յիսուս ըսաւ բէ Յիսուսն է յարուսիս եւ կեանք — Չարեւու ընկերութիւնը երկար լի տեւր, վերջիվերջոյ չար չար կը բզկէ. — Մարմնի անդամները մարմնի անդամներուն ըսին. «Ինչո՞ւ անդամներս այնպէս լիս եւ ստանալը վայելի, բոյ ստանալը ստանալուսնի մտնողը հոգայ», եւ անդամները յաշխատեցան, յայց ստանալը յսխանելով անդամներն ալ սկարացան:

ԴԱՍ. — ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

132. — Յարաբերական կը կոչուի ուր դերանունը որ իրմէ առաջ յիշուած անունի կամ դերանունի մը տեղ կը դրուի և զայն կը կցէ յաջորդ նախադասութեան նետօրինակ՝

Տեսայ մարդ մը ուր վագելով կ'երթար:

133. — Յարաբերական դերանունը կը հոլովուի հետեւեալ կերպով.

Սգակի		Յոգնակի
Ուղղ.	Որ	Որոնք
Հայց.	Չոր	Չորոնք
Սկն. Տր.	Արու	Արոնց
Քաց.	Արմէ	Արոնցմէ
Գործ.	Արով	Արոնցովով

134. — Այն բառը որուն տեղ դրուած է յարաբերական դերանունը, կը կոչուի յարաբերակ:

135. — Յարաբերական դերանուն կը համարուի նաև ուր բառը (որուն մէջ նշանակութեամբ), որուն եզակի հայցական և բացառական հոլովները միայն կը գործածուին. օրինակ՝

Այն տունը ուր կը բնակինք, գետը ուրիկ անցանք և ին՝

ԸՆԹԵՐՑՈՒՄ — ՀՈՂԸ

Հողը մեր մայրն ու անուցիչն է: Տարուան իւրաքանչիւր եղանակի միջոցին անիկա կ'արտադրէ այն պատուղներն ու բանջարեղէնները որոնց պէտք ունինք: Մեզի կուտայ ծաղիկներ որոնք մեզ կը հրճուեցնեն և փայտ կամ անուխ՝ որով կը տաքնանք: Կը անուցանէ կենդանիները զոր մեր ծառայութեան կը գործածենք կամ որոնց միտք կ'ուտենք: Մեծ քաղաքներու մէջ ուր բազում մարդիկ կը բնակին, հողը ծածկուած է չէնքս-

բով, բայց գեղը, դաշտին մէջ, օրհնեալ հողը ամենուրեք իր արդաստուոր լանջքը կը տարածէ լայնարձակ և Աժէն մարդ կը սիրէ հողը զոր կը մշակէ և անիկա իր ընդունած խնամքները բազմապատիկ կը փոխարինէ:

Թելադրութիւն. — Գարգալ այս հատուածը, բացատրել բառերու նշանակութիւնները, ուղղագրել նոյնը:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

93. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը եւ անձնական դերանունները մէկ, յարաբերականները երկու գիծով ստորագծեցէ՛ք յետոյ բերանացի որոշեցէ՛ք յարաբերականներուն յարաբերականները:

94. — Հետեւեալ նախադասութիւններն իրարու կցեցէ՛ք շեղազիւ բառերուն տեղ յարաբերական դերանուններ զնելով:

Լոյսին մէջ եօթը գոյներ կան, այդ գոյները կը յայտնուին ծիածանիկի մէջ: — Ծուլութիւնը մոլութիւն մըն է, ծալութիւնը աղատութեան կը սակի — կեանքը փոփոխական է, կեանքին մէջ հանդիման աչ կան, ցաւեր աչ: Բանկակը բոյս մըն է, բամբակէն կտաւ կը շինուի: Յիսուսի կեանքը լուսաւոր ուղի մըն է, այդ ուղիին պարտիկն հետեւի — Անքիւ երկնային լուսաւորներ կան, այդ լուսաւորները ալիով լեւի կրեար տեսնել: — Սղոցը գործիք մըն է, սղոցով փայտ կը կտրեն:

95. — Հետեւեալ նախադասութիւններուն մէջ կէտերոն տեղ պէտք եղած յարաբերական դերանունները դրէ՛ք յետոյ անոնց թիւն ու հոլովը որոշեցէ՛ք բերանացի:

Պարտեզը . . . տեսար, մերիկն է. — Կամուրջը . . . անցանք, շատ երկար էր. — Յարստութիւնը այն ճամբան է . . . յարուրտ շատ կը սակի. — Օնենակը . . . կը ննջեմ շատ լուսաւոր է. — Այն տղայը . . . հանդիպեցաք մեր դասակներէն ես. — Այն գործիքը . . . շուր կը հանեն, կը կոլուի ջրհան. — Միակ բանը . . . ազատութիւնը ներշնչի է, ժամանակն է. — Հիւսնոյութիւններ կան . . . դարմանը դեռ գտնուած չէ:

ԴԱՍ. — ՅՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

136.— Յուցական են այն դերանունները՝ որոնք ցոյց արուելիք անուններու տեղ կը դրուին:

137.— Յուցական ածականները՝ երբ իրենց ընկերացող գոյականները զեղչուելով առանձին գործածուին, ցուցական դերանունի կը փոխուին, օրինակ՝

Իմ գրիչս այս է (փոխանակ ըսելու՝ այս գրիչն է):

138.— Յուցական դերանուններ են

Այս, աւ, սա, որոնք խօսողին մօտիկ բան մը ցոյց կուտան:

Այդ, ադ, դա, որոնք խօսողին դիմացը գտնուող բան մը ցոյց կուտան:

Այն, ան, նա, որոնք խօսողէն հեռու բան մը ցոյց կուտան:

139.— Սա, դա, նա, իրենց փոխանակած անունները աւելի շեշտելով ցոյց տալու կը ծառայեն:

140.— Յուցական դերանունները կը հոլովուին հետեւեալ կերպով.

	Յգակի	Յոգնակի
Ո.	Այս, աւ	Ասոնք
Հ.	Չայս, սա	Ասոնք
Յ.	Տ. Ասոր	Ասոնց
Բ.	Ասկէ	Ասոնցմէ
Գ.	Ասով	Ասոնցմով

Այդ, ադ, այն, ան, կը հոլովուին այս ին պէս. իսկ աւ, դա, նա դերանուններուն հոլովական ձեւերը գրական լեզուի մէջ գրեթէ չեն գործածուիր:

ՀԻՍ. ՀԱՆԳՆԵՐ

96.— Հետեւեալ նախադասութիւններու ցուցական դերանուններն ստորագծեցէ՛ք. յետոյ բերանացի որոշեցէ՛ք թէ ո՞ր անուններուն տեղ զրուած են.

Այդ նախան դժուարին է, աղկէ մի երբայ. — Սա է մեր տանը, նա է եկեղեցին. — Ասոր անոր խօսիին մի հաւասար արանց լինելու. — Հաւասար եւ սէր, սիսա ասոնք եւն մեծագոյն առաջինութիւնները. — Այս տղոց մայրը աղոց հորատրոն է. — Բան մը որ միշտ ստաց կերթայ ու բնաւ ետ չի դառնար, ի՞նչ է այն:

97.— Հետեւեալ նախադասութիւններու ցուցական դերանուններուն եզակիները յոգնակիի, յոգնակիները եզակիի փոխեցէ՛ք.

Կերոյ բերանացի որոշեցէ՛ք իւրաքանչիւրին հոլովը. — Աս է մեր պարտեզը. — Անոր կը լինեայ. — Աս կ'ըսէր աղոց տունը. — Ասով կը լինեայ. — Աս է մեր քաղաքը. — Աղոցմէ զոս մարդ լկայ. — Սա է մեր տանը. — Աղոցմէ հրաժարէ. — Ասոր մի վստահիր. — Այ լիք սեասծ:

98.— Հոլովեցէ՛ք այդ (կամ ադ, ադիկայ), այն (կամ ան, անիկայ), դա (կամ դուիկայ), նա (կամ նուիկայ) ցուցական դերանունները.

99.— Հետեւեալ խօսքը տղոցմէ ուսուցիչներուն ուղղուած ձեւի մը վերածեցէ՛ք, կատարելով դերանունի փոփոխութիւնները.

Տղայի, մեր ուսուցիչները մեր ծնողիին տեղ կը լինեն զրպարոցիին մէջ, դուք պարտիք զանոնք սիրել, անոնց հնազանդի եւ երախտագիտութիւն ցոյց տալ այն յանձններուն համար զոր մեզի համար կը տակալ պարտականութիւնն է:

Օրինակ. — Ուսուցիչներ, դուք մեր ծնողիին տեղ կը լինեցէ՛ք, եւն:

100.— Հետագայ խօսքերուն յարաբերական դերանուններուն եւ յարաբերականներուն եզակիները՝ յոգնակիի, յոգնակիները՝ եզակիի վերածեցէ՛ք.

Գրիչը՝ որով կը գրեմ, վնասները՝ որոնց ենթարկուեցայ, մեզուն՝ որոնք խայրուեցաւ, հիւրերը՝ որոնք եկան, այն մարդը որուն խօսք տուիր, մուրճը՝ որով երկար կը ձեծեն:

Օրինակ. — Գրիչները՝ որոնցմով կը գրեմ:

ԴԱՍ. — ՍՏԱՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

141. — Ստացական կը կոչուին այն դերանունները որոնք ցոյց կուտան որու վերաբերին այն անուններուն որոնց տեղ դրուած են:

142. — Անձնական դերանուններու սեռականները (որ ստացական անձական ալ կը կոչուէին) ստացական դերանունի կը փոխուին երբ իրենց ընկերացող գոյականը առաջուց յիշուած ըլլալով՝ զեղչուի. օրինակ՝

Սա տունը որո՞ւնն է. — մերն է, փոխանակ ըսելու՝ մեր տունն է:

143. — Ստացական դերանունները զեղչուած գոյականին յօղը, թիւը և հոլովը կ'ուշենան. օրինակ՝

Իմ գրիչիս ըսելու տեղ կ'ըսենք իմիկիս, քու կօշիկէդ ըսելու տեղ կ'ըսենք քուկիկէդ և ինչ:

144. Ստացական դերանունները հետեւեալներն են:

	Նզակի	Յոզնակի
Ա. զէմք	Իմս կամ Իմինս	Մերը կամ մերինը
Բ. »	Քուկդ կամ քուկինդ	Ձերը կամ ձերինը
Գ. »	Իրը կամ իրենը	Իրենցը կամ իրենցինը

145. — Ստացական դերանունները կը հօլովուին հետեւեալ կերպով

	Նզակի	Յոզնակի	Նզակի	Յոզնակի
Ո. Հ.	Իմս կամ Իմինս	Իմիններս	Մերը կամ մերինը	Մերինները
Ս. Տ.	Իմի՛ իս	Իմիններուս	Մերինին	Մերիններուն
Բ.	Իմինէս	Իմիններէս	Մերինէն	Մերիններէն
Գ.	Իմինովս	Իմիններովս	Մերինով	Մերիններով

Այսպէս կը հօլովուին քուկդ կամ քուկինդ, ձերը կամ ձերինը, իրը կամ իրենը, իրենցը կամ իրենցինը:

ԸՆԹԵՐՈՒՄ. — ԾՊՏԵՆԱԼ ԱՊՈՍԻԸ

Սիրամարդ մը կորսնցուց իր փետուրները, Ագուա մը զանոնք գտնելով՝ կրցածին չափ անոնցմով կը հագուի կը զարդարուի. յետոյ կ'երթայ ուրիշ սիրամարդ-ներու մէջ ինքզինք ցուցադրելու և սիգալու: Ասոնք սակայն կը ճանչնան զինք, վրան կը թափին և կը իրեններն ո՛չ միայն իր կեղծ փետուրները, այլ նաև բուն նմաններուն մէջ որոնք դասը կ'ամբողջացնեն զինք վանելով իրենց ընկերութենէն:

Պէտք չէ երբէք արհամարհել այն պայմանները որ մարդ ծնած է:

Ծելադրութիւն. — Կարգալ այս առակը, ուղղաբեւ նոյնը, գատմել նիւթը, բացատրել բարոյականը:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

101. — Օրինակեցէ՛ք վերի հաստուածը ստորագծելով պարու-նակած դերանունները յետոյ քերանացի որոշեցէ՛ք անոնց տեսակը:

102. — Հօլովեցէ՛ք բուկդ կամ բուկինդ, ձերը կամ ձերինը, իրը կամ իրենը, իրենցը կամ իրենցինը ստացական դերանունները:

103. — Հետեւեալ ստացական դերանուններուն թիւը, զէմքն և հօլովը որոշեցէ՛ք եւ յօզնակինքը եզակիի, եզակիները յօզնակի վերածեցէ՛ք:

Խմինս, քուկինդդ, ձերը, ձերիններով, իմիկնդս, մերիններուն, իրենին, իրենցինէն, քուկիններդ, ձերիններուն, իր:

104. — Հետեւեալ խօսքերուն շեղազիր գոյականները զեղչելով՝ ցուցական եւ ստացական անձականները դերանունի փոխեցէ՛ք:

Իմ ձիս քու ձիդ աւելի արնաքար է. — Այդ մարդն անկեղծ է, այդ մարդուն վստահ է. — Մեր կօշիկները հինգան, ձեր կօշիկները հինգ են. — Այս գործը շահաբեր է, այս գործով շատ դաս-դեռ անր եմ. — Այս գործը շահաբեր է, այս գործով շատ շահ-մեցայ. — Բու տունդ մեր տունին կից է. — Այս ծաղիկները այդ ծաղիկներէն անկեղծ են. — Իմ գառսը պզտիկ է, քայց իմ գառսըսը կը խմու. — Այն լեռը սեւաւ, այն լեռը շատ բարձր է. — Ամեն մարդ վիշտ ունի, Ձարեհ ալ իր վիշտը:

Օրինակ. — Իմ ձիս քուկինդ աւելի արնաքար է:

ԴԱՍ. — ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ

146. — Անորոշ են այն դերանունները որոնք անորոշ անուններու տեղ զբուսած են :

147. — Անորոշ անվաններէն շատերը երբ առանձին առանց գոյականի գործածուին, անորոշ դերանունի կը փոխուին. օրինակ՝

Այդ գրիչը չեմ ուզեր, միւսը կ'ուզեմ, փոխանակ ըսելու՝ միւս գրիչը կ'ուզեմ :

148. — Անորոշ դերանուններու գլխաւորներն են .

Մեկը, ամէն մեկը, ո՛չ մեկը, ո՛ր մեկը, մեկալը, միւսը, իւրաքանչիւրը, ամէնը, ամէնքը, ամէն ոք, ո՛չ ոք, ո՛ր ոք, ո՛րն ոք, ի՛նչ ոք, ի՛նչ բան, ո՛րն ոք, ֆանի՛ն, մեկ ֆանի՛ն, ուրիշ, ուրիշ մը, ոչինչ, անյն, միեւնոյնը, մարդ, մարդ մը, բան մը, ամէն ինչ, բոլորը, այսինչը, այնինչը, այսպիսին, այդպիսին, այնպիսին, ո՛րպիսին, ի՛նչպիսին, այսչափը, այդչափը, այնչափը, այսքանը, այդքանը, այնքանը, ո՛րչափը, ո՛րքանը, ի՛նչքանը, շատը, շատ մը, քիչը, քիչ մը, մաս մը, մեկ մասը ևն :

149. — Անորոշ դերանուններէն շատերը յոգնակի չունին և կը հորովուին անուններու հորովման ընդհանուր ձեւին համաձայն, բացի ամէնը, մեկը, ամէն ինչ, ո՛չ մեկը, ո՛ր մեկը, ամէն մեկը ու մարդ դերանուններէն որոնք կը հորովուին Հայ բառին պէս : Իսկ ով, որը կը հորովուին հետեւեալ կերպով :

Եզակի

Յոգնակի

Ո. Հ. Որը, ով, զով

Որոնք

Ս. Տ. Որուն որու

Որոնց

Բ. Որմէ որմէ

Որոնցմէ

Գ. Որով որով

Որոնցմով

150. — Ո՛վ որ, ի՛նչ որ, ո՛րն ոք, և մարդ մը, բան

մը, ուրիշ մը դերանուններու հորովման ատեն միայն առաջին բառերը կը հորովուին և երկրորդ բառերը կը մնան անփոփոխ. օրինակ՝

Ձով որ, որմէ որ, ինչով որ, ուրիշի մը, բանէ մը, մարդու մը եւն :

Յոգնակիի մէջ մը բոլորովին կը զեղչուի. օրինակ՝ ուրիշներու, ուրիշներէ եւն :

151. — Անորոշ դերանուններէն մէկ քանիները հարցական կամ շեշտեալ խօսքերու յատուկ են, և կը կոչուին նաև հարցական անորոշ դերանուն. օրինակ՝ ո՛վ, ի՛նչ, ֆանի՛ք ևն :

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

105. — Հետագայ խօսքերուն ստացական եւ ցուցական դերանունները ամականի վերածեցէք, գեղչեալ անունները զնելով :

Դուք մեր կարծիքն ունիք, գեղչեալ իրենցը. — Մեր բարեկամները հասան, մերիներուն կը սպասեմք. — Այս տղայը ծոյղ են, ասոնց օրինակին մի հետեւիք. — Իմ դաս դժուարին է, ֆուկիկդ՝ դիւրին. — Այդ կամուրջը խախտու է, ասիկ մի անցեիք. — Սա է իմ գրիչս, ո՛ր է իրենը. — Ձեր այգին ա՛յլն է. — Սա դարակը տես՞ր, իմ տեսակներս ասոր սե՛յ են. ֆուկիկներդ ո՛ր են :

Օրինակ. — Դուք մեր կարծիքն ունիք. անոնք իրենց կարծիքը մէկ, 106. Հետեւեալ խօսքերուն անորոշ դերանունները վերածեցէք, յետոյ բնական անորոշները երկու զիծով ստորագծեցէք, յետոյ բնական անորոշները իւրաքանչիւրին թիւն ու հորով :

Ամէն ոք իր բերութիւնն ունի. — Աստուած պիտի հասոցանէ իւրաքանչիւրին իր գործերուն համեմատ. — Ո՛վ է այն մարդը որ ասիք եւ չեղանիք. — Մարդ ինչ որ ցանկ, անոնք կը հնձն. — Ես գործ ունիմ, ո՛ր մեկուն հասնիմ. — Այս հովանոցներէն ո՛րը կ'ուզեմ. — Այսինչին, այնինչին վստահելով գործի մեծարկողը մէջը կը մնայ. — Ոչինչ գիտեմ այս քանակը կ'ասիք, այնպիսին երբէք ուրիշի չի կարօտիր. — Ի՛նչ կ'ուզեմ ինձմէ. բան մը չեմ ուզեր. — Այս ծաղիկը միւսէն արեւի հոտաւէ է :

107. — Հոլովեցէ՛ք հետեւեալ անորոշ դերանունները.
Միւսը, ի՛նչը, ո՛վ որ, բան մը, մէկը, մէկ ֆանիկ, արայափը,
ամենը, այնինչը, բոլորը, ուրիշը, նոյնը, ֆանի՛ն, ո՞րը, ոչ ոք:

108 — Հետեւեալ խօսքերուն մէջ շեղագիր զոյականները զեղ-
չելով՝ անոնց ընկերացող անորոշ ածականները դերանունի փո-
խեցէ՛ք.

Երկու գաւազան ունիմ, ո՞ր գաւազանը կ'ուզեմ. — Մենք եր-
կու տուն ունինք. մէկ տունը ամառը կը բնակինք, միւս տունը
մտնոք. — Ինչ խօսք որ խօսեցայ, նոյն խօսքը դուն ալ կրկնեցիր. —
Հանձնարք միտք մըն է որ տուած չէ ամեն անհասի. — Շատ ապրանք
ունինք, դուք ո՞րչափ ապրանք կրնաք ծախել. — Սա պարուսկը ֆա-
նի՞ դահիկանի կուտան — Մենք ուրիշ խաղու քաղանէ աւելի ածան
կուտանք:

Օրինակ — Երկու գաւազան ունիմ, ո՞րը կուզեմ:

109. — Հետեւեալ նախադասութիւններու մէջ կրկնուած շեղա-
գիր բառերուն տեղ դրէ՛ք պէտք եղած դերանունները.

Յարգ՛ ուրիշներուն իրաւունքը որպէս զի ուրիշներն ալ յարգեն
ձեր իրաւունքը. — Ամեն մարդ առաջինութիւնը կը զոյգ բայց ա-
ռաջինութիւնը չի գործադրեր. Մովսէս Բարաշեյացիներու փրկիւն
եղաւ, Մովսէսն էր որ Բարաշեյացիները հանեց եգիպտոսէն. —
Այս մարդը բարի մարդ մըն է, այս մարդուն կրնաք վստահիլ. Եր-
կու կոյրեր երբ միասին ֆայն, կոյրը կոյրը առաջնորդելով՝ երկուսն
ալ խորխորազը կ'իջնան. — Անի նշանատր ֆայտ էր, Ա.Ճ.Ի.ի մէջ կա-
շին հազարուտէկ եկեղեցիներ. — Բուն հիմն պատերու մէջ կը շինէ իր
բոյնը, արծիւն իր բոյնը կը շինէ անմատոյց ժայռերու վրայ:

110 — Հետեւեալ նախադասութիւններուն փակագծեալ դերա-
նունները վերածեցէ՛ք պէտք եղած հոլովին.

Բարի տղայ կը կատարէն (իրենք) պատրաստութիւնները. — Յի-
տուս (մենք) պատուիրեց որ մեկզմեկ սիրենք. — Մարդոց մեծ մասը
դժգոհ է (ինք) վիճակէն. — Ուսուցիչը (ես) շատ կը սիրէ. — Դուն
վախցիր (ան). — Քիչ մը շուր տու (ես). — Քարիւղը օգտակար հեղուկ
մըն է (որ) շնորհիւ (մենք) տուները կը յուսաւորուին. — (Դուն) գիրդ
տո՞ւ տան. (աս) տու:

111. — Հետեւեալ խօսքերուն մէջ շեղագիր ցուցական, ստա-
ցական եւ անորոշ դերանունները որոշեցէ՛ք շեղագիր նոյնատեսակ
ածականներէն.

Ամէն մարդ իրտու եղբայր են, ամէնն ալ պատիւ զի-

— Եւս տղան ծոյլ է, այս էր որ անցեալ օր պատուեցաւ.
— Ես զեղին մէկ ֆանի տուները փայտաշէն են, մէկ ֆանին ալ
տաշէն. — Մեր տունը ա է, միւսը մերը չէ. — Ճաշակներն իրարեկ
ը պարտեմք, ես ուրիշ ճաշակ ունիմ, դուն ուրիշ. — Ես գիրք
տունեց ձերը սկստ են, մեր միւս գորտուր է, բայց ձերը եւ
տունեցը խոշոր են, մերինը փոքր է. — Ի՞նչ է այն բանը որ միշտ
փոփոքր է, գոհ է նայիմ, Ի՞նչ բան է այն.
112. — 108րդ հրահանգին փոփոխութիւնները կատարելէ յետ-
ոյ՝ թերանացի որոշեցէ՛ք անոնց պարունակած անունները, ածա-
նանները եւ դերանունները (իրենց տեսակովը, թիւովը, հոլովովը):

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — Ա.Շ.Ե.Ա.Տ.Ի.Ն.Ք

Այս աշխարհի մէջ, տըղա՛ք, ամէն ոք
Պարտի աշխատիլ, չկենալ անհոգ.
Իւրաքանչիւր մարդ պէտք է որ ընէ
Արհեստ մը ձեռքի կամ մտքի գոնէ:
Չկայ՝ ըրնալին վաստակ ապարդիւն,
Ո՛չ ալ անօգուտ պարտականութիւն.
Վարձատրութիւնն ալ երբէ՛ք չուշանար,
Ապահով եղէ՛ք, աքնողին համար:
Ի՛նչքան աւելի ճիշդ, ջանք թափէ՛ք յոյժ
Ա՛յնչափ կ'աւելնան ձեր կորովը և ոյժ.
Օ՛հ, աշխատեցէ՛ք ուրեմն, տըղաք,
Չաշխատիլ՝ մեռնիլ է գիտցա՛ծ ըլլաք:
Յ. Տ. ԼԱՐՐԱՏ
Թ. Գ. Գ.

Թիւղորութիւն. — Գոց արտասանել այս ոտանաւորը, ուզ-
գազրել նոյնը, բացատրել իմաստն ու բառերը:

Բ Ա Յ

Դ Ա Ս. — Բ Ա Յ Ե Ի Ի Ր Հ Ա Ն Գ Ա Մ Ա Ն Ք Ն Ե Ր Ը

152.— Բայ կը կոչուին այն բառերը՝ որոնք գոյութիւն, վիճակ կամ գործողութիւն ցոյց կուտան:

153.— Սօսքին մէջ բայն ունի իրեն յատուկ բառ մը որ կը կոչուի տեր բայի կամ ենթակայ:

154.— Տեր բային այն բառն է որուն գործողութիւնը կամ վիճակը կը բացատրէ բայը, օրինակ՝

Աստուած արդար է. սոխակը կ'երգէ. վարդը թոռմեցաւ:

155.— Տէր բային կրնայ ըլլալ ուղղական անուն կամ զերանուն մը և կ'որոչուի բային վրայ ընելով ո՞վ, ի՞նչ բան, որո՞նք, ի՞նչ բաներ հարցումները, օրինակ՝

Ես լողցայ, ո՞վ լողցաւ, — ես, զերանուն տէր բայի:

Ծառը չորցաւ, ի՞նչ բան չորցաւ, — ծառը, անուն տէր բայի:

156.— Ամէն բայ երկու մասերէ կը բաղկանայ. արմատ և վերջաւորութիւն, օրինակ՝

Վառ — ել, փայլ — իլ, չող — ալ ելն:

157.— Բայերուն արմատական մասը չի փոխուիր, բայց վերջաւորութիւնը անունին պէս, զանազան փոփոխութիւններ կը կրէ:

158.— Բայերու փոփոխութիւնները չորս կերպով կ'ըլլան. թիւով, ժամանակով, դիմով, եղանակով:

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ. — Չ Ա Ր Ը Ն Կ Ե Ր Ը

Դիտողնէս փիլիսոփան պատանիի մը հանդիպեցաւ որ կը պտտէր իր սրիկայ և անառակ մէկ ընկերին հետ: Պատանին սաստիկ շառագունեցաւ երբ նշմարեց որ ի-

մատունը զինք տեսած էր գէշ ընկերի մը հետ: Դիտողնէս իրեն կանչեց պատանին և ըսաւ. «Ապրի՛ս, զա՛ւս — ապա. կ'ուզէի որ միշտ քու վրադ տեսնեմ ամօթխածութեան այս նշանը. կարմրութիւնը առաքինութեան փրօշի գոյնն է:»

Թ Ե Վ Ա Ղ Ր Ո Ւ Ք Ի Ն. — Կարգալ այս հատուածը, ուղղագրել նոյնը, պատմել նիւթը եւ բացատրել բարոյականը:

Հ Ի Յ Հ Ա Ն Գ Ն Ե Ր

113.— Օրինակեցէ՛ք վերի հատուածը, ստորագծելով բայերը: 114.— Հետեւեալ առարկաներով կատարելի գործողութիւնները նշանակող բայերը գտնելով՝ դէմ դիմաց գրեցէ՛ք:

Արօր, լծակ, գրոց, տոբ, աղօթիք, իմք, ունեյի, ջուրակ, յօսոց, ծեփիկ, գլխ, փոց, սապակ, պոց, խաւսոց, դեղ, կարկին, ուռկան, դիտակ, խրատ, միտք, շիջել, վրձն, քանակի, կամփ, յիշողութիւն, շրջայ, բով, փանց, կշիռ, մուրճ:

Օրինակ. — Արօրով հերկել, միտքով խորհիլ եւն: 115.— Հետեւեալ բայերուն մէյմէկ յարմար տէր բայի ընկերացնելով նախադասութիւններ կազմեցէ՛ք:

Լսել, տեսնել, շօշափել, ծագիլ, քաւարիլ, բորբոքիլ, աղօթել, դաւել, բուրել, որոնալ, բարախել, ծածանիլ, տեղալ, քառամիլ, պեղել, ձնշել, կրել, ծամել, մարսել:

116.— Հետեւեալ անունները տէր բայի նկատելով՝ անոնց ընկերացուցէ՛ք մէյմէկ յարմար բայեր: Ծովը, կրակը, մեղուն, հովը, ձօձանակը, ասղերը:

117.— Հետեւեալ բայերուն ընկերացուցէ՛ք յարմար դերանուն տէր բայիներ: Երգեց կ'երգեիմք, երգէ՛. Խաղացիր, պիտի խաղամ, կը խաղայիմք. — կը կարեի. — կը կարեիք. — կը հաւատայիմք. — կը հաւատայիք. — կը հաւատայիք: 118.— Վերի բայերուն արմատական անփոփոխ մասերը գտնելով և փոփոխական վերջաւորութիւններէն, **Օրինակ.** — Երգ | եց, խաղ | ացիր:

ԴԱՍ. — ԲԱՅԻՆ ԴԷՄՔՆ ՈՒ ԹԻԻԸ

- 159. — Բայն ալ անուներն պէս երկու թիւ ունի. Եզակի և յոզնակի. օրինակ՝ կարգացի, կարգացին:
- 160. — Բայն ալ անձնական գերանուներն պէս երեք գէժք ունի.

- Ա. դիւն, օրինակ. Ես տեսայ, մենք տեսանք.
- Բ. » » Դուն տեսար, դուք տեսաք.
- Գ. » » Ան տեսաւ, անոնք տեսան:

ԲԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ

- 161. — Բայք երեք ժամանակ ունի. ներկայ, անցեալ և ապառնի:
- 162. — Ներկան կը ցուցնէ բային գործողութեան կամ վիճակին ներկայ կամ միբձաւոր ժամանակի մէջ կատարուիլը. օրինակ՝ կը խօսիմ:
- 163. — Անցեալը կը ցուցնէ թէ բային գործողութիւնը կամ վիճակը անցած ժամանակի մէջ կատարուեցաւ կամ կը կատարուէր:
- 164. — Անցեալը երկու ձև ունի.
 - Ա. Անկատար անցեալ. օրինակ՝ կը խօսէր.
 - Բ. Կատարեալ անցեալ. » խօսեցաւ:
- 165. — Ապառնին կը ցուցնէ թէ բային գործողութիւնը կամ վիճակը գալիք ժամանակի մէջ պիտի կատարուի կամ պիտի կատարուէր:
- 166. — Ապառնին ալ երկու ձև ունի.
 - Ա. Բացարձակ ապառնի. օրինակ՝ պիտի խօսիմ.
 - Բ. Անկատար » » պիտի խօսէր:

ՀԲԱ. ՀԱՆԵՒՆԻ

- 119. — Հետեւեալ խօսքերուն պարունակած բայերը, անոնց գէժքն ու թիւը եւ պէտք եղած հարցումն ընելով տէր բայինքը արոշեցէ՛ք ընթանացի, Այլուրը ցորենէն կ'եղի. — Մենք գլխաւորաբար հացով կը սնա-

— Մարդիկ ընկերակամ են. — Միևի մեկ կը գործեինք, անոնք անկողնացան. — Ես ծեսակ մը ցաւով կը սառապիմ, դուն ալ ուրիշ ծեսակ ցաւով կը սառապիս. — Երբոր փայլակը շողայ, որոտուը անոր վրէ յարդիկ. — Դուք առժակի կ' վարձատրուես. — Զայպէ պատիժ տէ՛ք, իսկ ես քարեկիշ սասցալ:

- 120. — Հետեւեալ նախադասութիւնները լրացուցէ՛ք կէտերուն տեղ զնելով յարմար բայերը եւ ստորագծելով տէր բայինքը.
 - Կամի՛ր. . . ա՛մէն դժուարութեան. — Օղապարհիլը. . . օղին մէջ.
 - Յիսուս. . . կեղծաւոր փարիսէյցիները — Ս. Գրիգոր եւ Տրդատ. . .
 - Երբեք անկէ արեւը կը յորդի եւ. . . Եզիպէտը — Մորթիւնները բշտաւորութեան. . . — Մարդիկ օր մը օղին մէջէն լուելու միջոցն ալ. . . :

- 121. — Հետեւեալ նախադասութիւնները լրացուցէ՛ք հարցումներուն տեղ զնելով պէտք եղած տէր բայինքը.
 - (Որո՞նք) կը քնակիմ օղին մէջ: — (Ի՞նչ բան) կը շրջապատէ երկիրը — (Ո՞վ) կը մկրտէ ժողովուրդը. — (Ի՞նչ բան) վնասուեցաւ դրամս — (Ո՞վ) կը մարդուս ներքին զատարուն կ — (Ի՞նչ բան) ուստի կ'եղի. — (Ո՞վ) հիմնեց Միխայէլեան միաբանութիւնը. — (Ի՞նչ բան) առողջութիւնը կը խանգարեն. — (Ո՞վ) երկիւնք համբարձաւ:
- 122. — 119, 120, 121րդ հարցումներուն բայերուն ժամանակը արոշեցէ՛ք ընթանացի.

- 123. — Հետեւեալ բայերը օրինակին պէս ներկայ, անցեալ եւ ապառնի ժամանակներու վերածելով կազմեցէ՛ք նախադասութիւններ.

Ծառ սնկել. — Դաշը մշակել. — Մայրը սիրել. — Դուք շահիլ. — Գտնել խաղաղ. — Ծոգեւաւով ձաւարդիլ: — Օրինակ. — Ծառ կը սնկեմ, ծառ կը սնկիի, ծառ սնկեցի. ծառ պիտի սնկեմ, ծառ պիտի սնկիի:

- 121. — Գտէ՛ք այն առարկաները որոնց միջոցաւ կը կատարուին հետեւեալ բայերու նշանակած գործողութիւնները եւ խօսքերը կազմեցէ՛ք.
 - Կարել, ճնմել, խուզել, քել, խնկարկել, սաշել, արել, սպագրել.
 - Եփել, խօսիլ, բռնիլ, կնիլ, մկրտել:

Օրինակ. — Ասելով կը կարեն:

ԳՕՍ. — ԲԱՅԻՆ ԵՂԱՆԱԿ

167. — Բայը հինգ եղանակ ունի. սահնակական, հրահայական, ստորադասական, ըղձական և անորոշ:

168. — Սահնակականը կը ներկայացնէ բային այն ձևերը որով գործողութիւն մը կամ վիճակ մը դրապէս կը հաստատուի. օրինակ՝

կմեցի, կը կարգամ, պիտի շինեմ եւլն:

169. — Սահմանական եղանակին կը վերաբերին բային ներկայ, անցեալ և ապառնի ժամանակները:

170. — Հրահայական եղանակը բային այն ձևն է որով կը յայտնուի հրաման մը. օրինակ. քալեցէ՛ք, գնա՛:

171. — Ստորադասական եղանակը բային այն ձևն է որով գործողութիւն մը կամ վիճակ մը կը յայտնուի թէական կամ ուրիշ գործողութենէ մը առկախեալ եղանակով մը:

172. — Ստորադասականը երկու ձև ունի.

Ա. ներկայ, օրինակ՝ թէ որ ուզեմ.

Բ. Անկասար, » թէ որ ուզէի:

173. — Ըղձական եղանակը բային այն ձևն է որով գործողութիւն մը կամ վիճակ մը կը յայտնուի հրամայական փափաքով մը:

174. — Ըղձական եղանակն ալ երկու ձև ունի.

Ա. ներկայ, օրինակ՝ թո՛ղ երթայ.

Բ. Անկասար, » թո՛ղ գրէր:

175. — Անորոշ եղանակը կը ներկայացնէ բային այն ձևերը որոնք գործողութիւնը կամ վիճակը կը յայտնեն անորոշ կերպով մը, առանց դէմքի և թիւի:

176. — Անորոշ եղանակը չորս ձև ունի.

Ա. Անկերպ, որ բային նախնական ձևն է և ժամանակ ալ չի ցուցնէր. օրինակ՝ գրել. խօսիլ:

Բ. ներկայ ընդունելութիւն, որ ներկայ ժամանակի փոփոխ կուտայ. օրինակ՝ գրող, խօսող:

Գ. Անցեալ ընդունելութիւն, որ անցած ժամանակի փոփոխ կուտայ. օրինակ՝ գրած խօսած:

Դ. Ապառնի ընդունելութիւն, որ գալիք ժամանակի փոփոխ կուտայ. օրինակ՝ գրելիք, խօսելու:

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԳԵՂԵՑՆՈՒԹԻՒՆ

Վարդ մը տեսայ փայլուն, աղու որ,

Քիչ վերջն, աւա՛ղ, խամբեր էր.

Արշալոյս մը տեսայ բոսոր,

Իրիկուան դէմ մարեր էր:

Գեղեցկութիւնը մարմնական

Վաղանցուկ է, կը ցնդի.

Ինչ որ յարգի է, տեւական,

Գեղեցկութիւնն է սրտի:

ՀՐ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

Թելադուրիւն. — Գոց արտասանել այս ոտանաւորը եւ բացատրել իմաստը.

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

125. — Օրինակեցէ՛ք վերի ոտանաւորը, ստորագծելով բայերը, յետոյ բերանացի որոշեցէ՛ք անոնց թիւը, դէմքը, ժամանակը, եղանակը.

126. — Հետեւեալ բայերուն երկերկու տէր բայինք տալով կազմեցէ՛ք խօսքեր, օրինակին պէս.

Քալել, սողալ, լողալ, հոսիլ, սեղալ, ոսոսսել, մագցիլ, աշտել, խոյանալ, գաղթել, մախրել, սուրալ:

Օրինակ. — Կովը եւ հըր կը խալեն:

ԵՄ ԲԱՅԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

Ա. Դեմք	Եզակի	Յոգնակի
Բ. »	Եմ	Ենք
Գ. »	Ես	Եք Են

ԱՆԿԱՏԱՐ ԱՆՑԵԱԼ

Ա. »	Էի	Էնք
Բ. »	Էիր	Էիք
Գ. »	Էր	Էին

ԿԱՏԱՐԵԱԼ ԱՆՑԵԱԼ

Ա. »	Եղայ	Եղանք
Բ. »	Եղար	Եղաք
Գ. »	Եղաւ	Եղան

ԲԱՅԱՐՁԱԿ ԱՊԱՌՆԻ

Ա. »	Պիտի ըլամ	Պիտի ըլանք
Բ. »	Պիտի ըլաս	Պիտի ըլաք
Գ. »	Պիտի ըլայ	Պիտի ըլան

ԱՆԿԱՏԱՐ ԱՊԱՌՆԻ

Ա. »	Պիտի ըլայի	Պիտի ըլայինք
Բ. »	Պիտի ըլայիր	Պիտի ըլայիք
Գ. »	Պիտի ըլար	Պիտի ըլային

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Բ. »	Եղի՛ր	Եղէ՛ք
------	-------	-------

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

Եզակի	Յոգնակի
Ա. Դեմք ըլամ	Ըլանք
Բ. » ըլաս	Ըլաք
Գ. » ըլայ	Ըլան

ԱՆԿԱՏԱՐ

Ա. Դեմք ըլայի	Ըլայինք
Բ. » ըլայիր	Ըլայիք
Գ. » ըլար	Ըլային

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

Ա. Դեմք թո՛ղ ըլամ	Թո՛ղ ըլանք
Բ. » թո՛ղ ըլաս	Թո՛ղ ըլաք
Գ. » թո՛ղ ըլայ	Թո՛ղ ըլան

ԱՆԿԱՏԱՐ

Ա. Դեմք թո՛ղ ըլայի	Թո՛ղ ըլայինք
Բ. » թո՛ղ ըլայիր	Թո՛ղ ըլայիք
Գ. » թո՛ղ ըլար	Թո՛ղ ըլային

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

ԱՆԵՐԵՒՈՅՑ

Ըլալ

ՆԵՐԿԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ
Եղող

ԱՆՑԵԱԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ
Եղած, եղեր

ԱՊԱՌՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ
Ըլայիք, ըլալու

ԴԱՍ.—ԲԱՅԻՆ ԼԵՐՐԴՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

177.—Արդի հայերէնի մէջ բայերը երեք ձեւ վերջաւորուածն որ կը կոչուին յծորդութիւն:

- Ա. յծորդութիւնն բոլոր կը վերջաւորուի բայեր. օր. գրել.
- Բ. » ցայլով » ին » » խօսիլ.
- Գ. » մայլով » ալ » » կարդալ:

178.—Բայերուն վերջաւորութիւնները կը փոխուին բայի եղանակին, ժամանակին, դէմքին և թիւին համեմատ:

179.—Այնպէս ինչպէս հոգնակի ներկայ ժամանակի վերջաւորութիւններն են:

Ա. յծորդ.	Եզակի	Յոգնակի
Բ. ցայլով	եմ, ես, է	եմք, եք, են
Գ. մայլով	իմ, իս, ի	իմք, իք, ին
180.—	ամ, աւ, այ	ամք, աք, ան

Սահմանական եղանակի անկատար անցեալի

Ա. յծորդ.	Եզակի	Յոգնակի
Բ. ցայլով	եի, էիր, էի	եիմք, էիք, էին
Գ. մայլով	այի, այիր, այի	այիմք, այիք, ային

181.—Բայերուն յարմարական եղանակին ներկայի և անկատարի ձեւերուն սկզբը կ'ընկերացուի կը մասնիկը. օրինակ՝ կը գրեմ, կը խօսեսի, կը կարդային:

182.—Եթէ բայը ձայնաւորով կ'սկսի, կը մասնիկին ը գիրը կը գեղուի և տեղը ապաթարց կը դրուի. օրինակ՝ կ'աղամ, կ'աղայի:

183.—Եթէ բայը ձայնաւորով կ'սկսի, ատեն կը ին տեղ կու կը դրուի. օրինակ՝ կուտամ, կուգայի են:

184.—Են, կան, կանք, կանք, կանք և երբեմն ալ կարծեմ բայերը բացառաբար վերջանիլ չեն ուզեր. օրինակ՝ կամ, ունիս, գրեմք:

185.—Սահմանական եղանակի կատարեալ անցեալի վերջաւորութիւններն են:

Ա. յծորդ.	Եզակի	Յոգնակի
Բ. ցայլով	եցի, եցիր, եց	եցիմք, եցիք, եցին
Գ. մայլով	եցայ, եցար, եցար	եցամք, եցարք, եցան
Գ. մայլով	ացի, ացիր, աց	ացիմք, ացիք, ացին

186.—Բացարձակ ապառնին սահմանական ներկայի, անկատար ապառնին՝ անկատար անցեալին ձեւն ուստի սա տարբերութեամբ որ սկիզբը կը մասնիկին սկիզբ պիտի մասնիկը կը դրուի. օրինակ՝ պիտի գրեմ, պիտի խօսեսի:

ԼՐԱՀԱՆԳՆԵՐ

127.—Հետեւեալ խօսքերուն բայերը անցեալ եւ ապառնի անկատարի, անցեալ կատարեալի, հրամայականի, ստորադասականի եւ ըզմականի վերածեցէ՛ք օրինակին պէս:

Հիւանդ ես, աշխատասեր եմք, Արամ բարի է: Յիւանդ էիր, հիւանդ պիտի ըլլայիր, հիւանդ եղար, հիւանդ եղիր, բէք որ հիւանդ ըլլաս, քո՞նք հիւանդ ըլլայիր: Օրինակ.— Հիւանդ եմք, հիւանդ պիտի ըլլայինք, հիւանդ եղանակը, ժամանակը, թիւն ու դէմքը որոշեցէ՛ք:

128.—Հետեւեալ նախադասութիւններուն եղանակը, ժամանակը, թիւն ու դէմքը որոշեցէ՛ք. յետոյ եզակիները յոգնակիի, յոգնակիները եզակիի վերածեցէ՛ք:

Դուն ծոյլ ես. — Ես տղայ եմ. — Ժուժկա՛յ եղիք. — Խնամք կուտիր եր. — Թէք որ դուք խոնկեմք ըլլաք. — Գոնք եղայ. — Եղբարս բռնիկ պիտի ըլլայ. — Ուրախ պիտի ըլլայիմք երբ աշխատասեր ըլլայիք. — Բարի քո՞նք ըլլայ:

129.—Հետեւեալ նախադասութիւնները լրացուցէ՛ք ըլլալ բային պատշաճ ժամանակներով:

Սողոմոն իմաստուն . . . — Հնարիւնքը մարդկութեանը բարեբաւեան . . . — Պարսկացի Յովնանի թիւսպի միջակերտները . . . — Բր. սոսնկու թիւսկ հայտնիքը Սողոմ. — Հասարակ . . . և վարձի պիտի ընդունիս. — Մարդիկ շատ երկարակամ . . . երբ ծուծիկայ անիւրին:

130.—Հետեւեալ ժամանակները լրացուցէ՛ք ըլլալ բային պատշաճ ժամանակներով:

Օրինակ.— Եղբ. եմ, կըլտ. ես, կըլտ. ես, կըլտ. ես:

ԴԱՍ. — ԲԱՅԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ (Շար.)

187. — Հրամայական եղանակի վերջաւորութիւններն են:

Ա. և Բ. լծորդ.	Եզակի	Յոզեակի
Փ.	կ'	եցկ'ի
»	ա'	ացկ'ի

188. — Հրամայականը միայն եզակի և յոգնակի երկրորդ դէմք ունի:

189. — Հրամայական բայերուն վրայ շեշտ կը դրուի, բայց եթէ հրամայականն իրմէ առաջ մակբայ կամ ուրիշ յարակից բառ մը ունենայ, շեշտը կը դրուի նախադաս բառին վրայ, օրինակ՝ մէկդի՛ գնա, մտի՛կ ըրէ՛ք են:

190. — Սարադասական ներկայ և անկատարը սահմանական ներկայ և անկատարի ձեւ ունին, առանց կը մասնիկին:

191. — Ըզձական ներկայ և անկատարը ստորադասականի ձեւ ունին, միայն սկիզբը կ'աւելցուի րոդ մասնիկը որուն վրայ շեշտ կը դրուի. օրինակ՝ թո՛ղ գրէ, թո՛ղ խօսին:

192. — Ներկայ ընդունելութեան վերջաւորութիւնն է ող՝ Ա. և Բ. լծորդութեան համար, ազող՝ Գ. լծորդութեան համար:

193. — Անցեալ ընդունելութիւնը երկու ձեւ ունի: Ա. Ձեւին վերջաւորութիւններն են Ա. և Բ. լծորդութեան համար՝ ած և Գ. լծորդութեան համար՝ ազած. Բ. ձեւին վերջաւորութիւններն են Ա. և Բ. լծորդութեան համար՝ եր, և Գ. լծորդութեան համար՝ ազեր:

194. — Ապառնի ընդունելութիւնն ալ երկու ձեւ ունի: Ա. Ձեւին վերջաւորութիւններն են Ա. և Բ.

լծորդութեան համար՝ ելու, և Գ. լծորդութեան համար՝ ալու. Բ. ձեւին վերջաւորութիւններն են Ա. և Բ. լծորդութեան համար՝ ելիք և Գ. լծորդութեան համար՝ ալիք:

195. — Բայի մը այս բոլոր եղանակներն ու ժամանակները կարգով բերանացի կամ գրաւոր ըսելուն կ'ըսուի խոնարհում:

ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՈՐԹԱՏՈՒՆԿՆ ՈՒ ԵՂԷՊԸ

Որթատունկը՝ աւազուտ և անջրդի բլուրի մը վրայ անկուած, կը գանգատէր իր վիճակէն և կը լիշէր եղէգը որ նստուն ջուրերու եզերքը կը բուսնի և կը վայելէ միշտ անոր զովութիւնը: Երկնային ձայն մը անոր ըսաւ. «Մի՛ դժգոհիր, մխիթարուէ՛, եղէգը պիտի չորնայ և պիտի մռցուի. մինչդեռ քու քաղցրահամ պտուղներդ պիտի քրտադրեն նեղուկ մը որ զուարթութիւն պիտի սփռէ խրճիթներու և պալատներու մէջ միանգամայն»:

Թեւադրուիւն. — Կարգալ այս հատուածը, ուղղագրել նոյնը, գտածել նիւթը, բացատրել իմաստն ու բարոյականը:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

131. — Օրինակեցէք վերի հատուածը՝ ստորագծելով բոլոր բայերը:

132. — Հետեւեալ բայերուն լծորդութիւնները որոշելով՝ գատ գատ սինականերու մէջ գրեցէ՛ք եւ իւրաքանչիւրին առջեւ նշանակեցէ՛ք իր արմատը:

Որսայ, գնել, վառել, բորբոխի, ծածկել, սահիլ, ցաւիլ, սիւրել, քեղ, շոշափել, բաղձալ, շալկել, սառիլ, յուսալ:

133. — Գտէ՛ք եւ գրեցէ՛ք Ա. Բ. Գ. լծորդութիւններու վերաբերող հինգական բայ:

134. — Խոնարհեցէ՛ք հետեւեալ բայերը, հետագայ էջերու խոնարհման պատկերներուն համաձայն:

Գործէ դարձիլ, ոսֆի կանգնիլ, սահիլ, խորհիլ, թուղբ խաղայ, լաք յուսայ, խեղալ, գրալ: Հողը փորել, կառն վարել, դիզել, աղօթել:

Ա. ԼՄՈՐԳՈՒԹԻՒՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

Եզակի
Ա. Դեմք կը գրեմ
Բ. » կը գրես
Գ. » կը գրէ

Յոգնակի
կը գրենք
կը գրէք
կը գրեն

ԱՆԿԱՍԱՐ ԱՆՑԵԱԼ

Ա. » կը գրէի
Բ. » կը գրէիր
Գ. » կը գրէր

կը գրէինք
կը գրէիք
կը գրէին

ԿԱՍԱՐԵԱԼ ԱՆՑԵԱԼ

Ա. » Գրեցի
Բ. » Գրեցիր
Գ. » Գրեց

Գրեցինք
Գրեցիք
Գրեցին

ԲԱՑԱՐՁԱԿ ԱՊԱՌՆԻ

Ա. » Պիտի գրեմ
Բ. » Պիտի գրես
Գ. » Պիտի գրէ

Պիտի գրենք
Պիտի գրէք
Պիտի գրեն

ԱՆԿԱՍԱՐ ԱՊԱՌՆԻ

Ա. » Պիտի գրէի
Բ. » Պիտի գրէիր
Գ. » Պիտի գրէր

Պիտի գրէինք
Պիտի գրէիք
Պիտի գրէին

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Բ. » Գրէ՛

Գրեցէ՛ք

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

Ա. » Գրեմ
Բ. » Գրես
Գ. » Գրէ

Գրենք
Գրէք
Գրեն

ԱՆԿԱՍԱՐ

Յոգնակի

Ա. Դեմք
Բ. »
Գ. »

Եզակի
Գրէի
Գրէիր
Գրէր

Գրէինք
Գրէիք
Գրէին
«
«
«

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

Ա. »
Բ. »
Գ. »

Թո՛ղ գրեմ
Թո՛ղ գրես
Թո՛ղ գրէ

Թո՛ղ գրենք
Թո՛ղ գրէք
Թո՛ղ գրեն
«
«
«

ԱՆԿԱՍԱՐ

Ա. »
Բ. »
Գ. »

Թո՛ղ գրէի
Թո՛ղ գրէիր
Թո՛ղ գրէր

Թո՛ղ գրէինք
Թո՛ղ գրէիք
Թո՛ղ գրէին
«
«
«

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

ԱՆԵՐԵՒՈՅՑ

Գրել

ՆԵՐԿԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Գրող

ԱՆՑԵԱԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Գրած, գրեր

ԱՊԱՌՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Գրելիք, գրելու

.Ա
.Գ
.Ք

Ք. ԱՄՈՐԳՈՒԹԻՒՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
Ն Ե Ր Կ Ա Յ

Ա.	Դեմք	Եզակի Կը խօսիմ	Յոզնակի Կը խօսինք
Բ.	»	Կը խօսիս	Կը խօսիք
Գ.	»	Կը խօսի	Կը խօսին
Ա Ն Կ Ա Տ Ա Ր Ա Ն Ց Ե Ա Ն			
Ա.	»	Կը խօսէի	Կը խօսէինք
Բ.	»	Կը խօսէիր	Կը խօսէիք
Գ.	»	Կը խօսէր	Կը խօսէին
Կ Ա Տ Ա Ր Ե Ա Ն Ա Ն Ց Ե Ա Ն			
Ա.	»	Խօսեցայ	Խօսեցանք
Բ.	»	Խօսեցար	Խօսեցաք
Գ.	»	Խօսեցաւ	Խօսեցան
Բ Ա Ց Ա Ր Ձ Ա Կ Ա Պ Ա Ռ Ն Ի			
Ա.	»	Պիտի խօսիմ	Պիտի խօսինք
Բ.	»	Պիտի խօսիս	Պիտի խօսիք
Գ.	»	Պիտի խօսի	Պիտի խօսին
Ա Ն Կ Ա Տ Ա Ր Ա Պ Ա Ռ Ն Ի			
Ա.	»	Պիտի խօսէի	Պիտի խօսէինք
Բ.	»	Պիտի խօսէիր	Պիտի խօսէիք
Բ.	»	Պիտի խօսէր	Պիտի խօսէին
Հ Ր Ա Մ Ա Ց Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ			
Բ.	»	Խօսէ՛	Խօսեցէ՛ք
Ս Տ Ո Ր Ա Դ Ա Ս Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ			
Ն Ե Ր Կ Ա Յ			
Ա.	»	Խօսիմ	Խօսինք
Բ.	»	Խօսիս	Խօսիք
Գ.	»	Խօսի	Խօսին

Ա Ն Կ Ա Տ Ա Ր
Յոզնակի
Խօսէինք
Խօսէիք
Խօսէին

Ա.	Դեմք	Եզակի Խօսէի
Բ.	»	Խօսէիր
Գ.	»	Խօսէր

Ը Ղ Ջ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ
Ն Ե Ր Կ Ա Յ

Ա.	»	Թո՛ղ խօսիմ	Թո՛ղ խօսինք
Բ.	»	Թո՛ղ խօսիս	Թո՛ղ խօսիք
Գ.	»	Թո՛ղ խօսի	Թո՛ղ խօսին

Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Ա.	»	Թո՛ղ խօսէի	Թո՛ղ խօսէինք
Բ.	»	Թո՛ղ խօսէիր	Թո՛ղ խօսէիք
Գ.	»	Թո՛ղ խօսէր	Թո՛ղ խօսէին

Ա Ն Ո Ր Ո Շ Ե Ղ Ա Ն Ա Կ

Ա Ն Ե Ր Ե Ի Ո Յ Թ

Խօսիլ
Ն Ե Ր Կ Ա Յ Ը Ն Դ Ո Կ Ն Ե Լ Ո Ի Թ Ի Կ
Խօսող
Ա Ն Ց Ե Ա Ն Ը Ն Դ Ո Կ Ն Ե Լ Ո Ի Թ Ի Կ
Խօսած, խօսեր
Ա Պ Ա Ռ Ն Ի Ը Ն Դ Ո Կ Ն Ե Լ Ո Ի Թ Ի Կ
Խօսելիք, խօսելու

Փ. ԼՄՈՐԳՈՒԹԻՒՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
Ն Ե Ր Կ Ա Յ

- | | | | |
|----|------|---------------|----------------|
| Ա. | Դեմք | Եզակի | Յոզնակի |
| Բ. | » | Կը կարդամ | Կը կարդանք |
| Գ. | » | Կը կարդաս | Կը կարդաք |
| | | Կը կարդայ | Կը կարդան |
| Ա. | » | Կը կարդայի | Կը կարդայինք |
| Բ. | » | Կը կարդայիր | Կը կարդայիք |
| Գ. | » | Կը կարդար | Կը կարդային |
| Ա. | » | Կարդացի | Կարդացինք |
| Բ. | » | Կարդացիր | Կարդացիք |
| Գ. | » | Կարդաց | Կարդացին |
| Ա. | » | Պիտի կարդամ | Պիտի կարդանք |
| Բ. | » | Պիտի կարդաս | Պիտի կարդաք |
| Գ. | » | Պիտի կարդայ | Պիտի կարդան |
| Ա. | » | Պիտի կարդայի | Պիտի կարդայինք |
| Բ. | » | Պիտի կարդայիր | Պիտի կարդայիք |
| Գ. | » | Պիտի կարդար | Պիտի կարդային |
| Բ. | » | Կարդա՛ | Կարդացե՛ք |
| Ա. | » | Կարդամ | Կարդանք |
| Բ. | » | Կարդաս | Կարդաք |
| Գ. | » | Կարդայ | Կարդան |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
Ն Ե Ր Կ Ա Յ

Ա Ն Կ Ա Տ Ա Ր

- | | | | |
|----|------|----------|-----------|
| Ա. | Դեմք | Եզակի | Յոզնակի |
| Բ. | » | Կարդայի | Կարդայինք |
| Գ. | » | Կարդայիր | Կարդայիք |
| Գ. | » | Կարդար | Կարդային |

ԸՂԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
Ն Ե Ր Կ Ա Յ

- | | | | |
|----|---|-------------|--------------|
| Ա. | » | Թո՛ղ կարդամ | Թո՛ղ կարդանք |
| Բ. | » | Թո՛ղ կարդաս | Թո՛ղ կարդաք |
| Գ. | » | Թո՛ղ կարդայ | Թո՛ղ կարդան |

Ա Ն Կ Ա Տ Ա Ր

- | | | | |
|----|---|---------------|----------------|
| Ա. | » | Թո՛ղ կարդայի | Թո՛ղ կարդայինք |
| Բ. | » | Թո՛ղ կարդայիր | Թո՛ղ կարդայիք |
| Գ. | » | Թո՛ղ կարդար | Թո՛ղ կարդային |

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

- Ա Ն Ե Ր Ե Ի Ո Յ Թ
Կարդալ
- Ն Ե Ր Կ Ա Յ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ
Կարդացող
- Ա Ն Յ Ե Ա ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ
Կարդացած, կարդացեր
- Ա Պ Ա Ռ Ն Ի ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ
Կարդալիք, կարդալու

ԳԼՍ.—ԿԱՆՈՆԱԻՈՐ, ԶԱՐՏՈՒՂԻ ԵՒ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

196. — Կանոնաւոր կը կոչուին այն բոլոր բայերը որոնք կը խոնարհուին երեք լծորդութիւններու տիպար ձեւերուն համաձայն:

197. — Զարտուղի կը կոչուին ննչ, աննչ, ցննչ, նիչ, հաչ, անաչ, ննաչ, չիզ վերջաւորող բայերը, ինչպէս նաև ուրիշ մէկ քանի բայեր որոնց խոնարհումը ինչ ինչ ժամանակներու մէջ կը տարբերի երեք լծորդութիւններու տիպար ձեւերէն:

198. — Անկանոն կը կոչուին այն բոլոր բայերը որոնց ո՛չ միայն վերջաւորութիւնը՝ այլև արմատական մասը փոփոխութիւններ կը ներկայացնէ զանազան ժամանակներու մէջ:

199. — Անկանոն բայերուն յատկանիշն այն է որ ոչ-կանոնաւոր համարուած ժամանակներուն մէջ է որ երեւան կ'եղեն իրենց բուն արմատները:

200. — Կայ նաև քողոջ բայը որուն վերջաւորութիւնը և խոնարհումը կը տարբերի միւս բոլոր բայերէն (տե՛ս էջ 74):

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

135. — Հետեւեալ նախադասութիւններու բայերուն ո՛ր լծորդութեան վերաբերիլը, ինչպէս նաև եղանակը, ժամանակը, ղէմքու թիւը որոշեցէ՛ք ընթանացի.

Ծտոյն տեւեւները քափեցան յայց գարունին նորեկն կը ծղիւ. — Զկնորք պատաստեց իր ուղեկանը եւ ձուկ պիտի որսայ. — Պեօօ կ'ախի խորհիլ սպա գործել. — Ես դասս սորվեցայ, հիմա պիտի խաղամ. — Երկ աշխատեցի, աղիւնիք պիտի վայելիս. — Յիշէ՛ մի շաբաթի մը քանի որ ընդունիս ուրիշներէ. — Զուկը յողացած ասեմ իր յուղակները կը շարժէ. — Ես կատարելիք շատ գործեր ունիմ. — Միհրան գլուխը կախած կը փայր. — Եւս վնասող մարդիկ անյարմար են մեծ գործերու:

136. — Յետագայ նախադասութիւններուն փակագծեալ բայերը վերածեցէ՛ք սահմանական եղանակի բոլոր ժամանակներուն. ես (պստի) — Մշակը (հնձել) — Աղփատը (մուտայ) — Մարք (հոգայ) իր գաւակները — Գայլը (գիշատեց) գտնուելը. — Դուն (նայիլ) ինձի):

Օրինակ. — Ես կը պստիմ, ես կը պստիս. ես պիտի պստիմ, ես պիտի պստիս:

137. — Յետագայ նախադասութիւններուն փակագծեալ բայերը հրամայական եղանակի յարմար ձևերու վերածեցէ՛ք. (Պատուել) ծնողիդ. (Ձանալ) մեր գործերը ժամանակին կատարել. — Լաւ (գործածել) մեր ժամանակը — Մնաքաւ մի ըլլար բայց (ցանկալ) ճշմարիտ փառիս. — (Մտկիլ) դատել:

138. — Հետագայ խօսքերուն փակագծեալ բայերը ստորագասական յարմար ձևերուն վերածեցէ՛ք. Պեօօ k որ ես (մեկնել). — Մեղի՛ կ որ տղաք կենդանիները (ստեղի) — Հարկ k որ ան մեզի (պատասխանել) — Կուգե՛ք որ երկար (սպրիլ). — Երանի՛ թե մեկ միասին (երթայ):

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.—ԱՂԿԱՏՆ ՈՒ ԻՐ ԵՈՒՆԸ

Անտէր և անտուն մարդ մ'ապերջանիկ
Մտերիմ ընկեր ունէր մէկ շընիկ...
Մէկն ըսաւ. — «Այս շունն ի՞նչ օգուտ ունի
«Բեղի որ կարօտ ես ամէն բանի»:
«Պէտք չէ՞ որ քովէդ գայն իսկոյն ճամբես»:
Թշուառն այս խօսքէն յուզուած դառնապէս.
— «Եթէ վանեմ գայն, ա՛յ երկրիս վերայ
«Ո՛վ — ըսաւ — վրբաս պիտի գուրգուրայ»:
ԹՐԵՎ. Ա. Փ.

Թելադրուիւն. — Գոց արտասանել այս ոտանաւորը, արժակի վերածելով պատմել նիւթը:

ՅՈՒՑԱԿ ՉԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐՈՒ (')

Ա. ԼՇՈՐԴՈՒԹԵԱՆ ՉԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐ

Գտնել. — Կասարեայ անցեալ. գտայ, գտար, գտաւ, գտանք, գտաք, գտանք. — Հրաւնայական. գտի՛ր, գտէ՛ք, — Անց. Ընդ. գտեր գտած, Մտնել, իջնել, հեծնել կը խոնարհուին զտնելին պէս: Առնել. — Կտ. Անցեալ. առի, առիր, առաւ, առէ՛ք, առիք, առին. — Հրաւնայական. ա՛ռ, առէ՛ք. — Անց. Ընդ. առեր, առած: Թփնել, պագնել, խածնել կը խոնարհուին առնելին պէս: Տեսնել. — Կտ. Անցեալ. տեսայ, տեսար, տեսաւ, տեսանք, տեսաք, տեսանք. — Հրաւնայական. տես՛, տեսէ՛ք. — Անց. Ընդ. տեսած, տեսեր: (**)

Ելել. — Կտ. Անցեալ. ելայ, ելար, ելաւ, ելանք, ելաք, ելանք. — Հրաւ. ել՛, ելէ՛ք. — Անց. Ընդ. ելած, ելեր:

Ըսել. — Կտ. Անցեալ. ըսի, ըսիր, ըսաւ, ըսինք, ըսիք, ըսինք. — Հրաւ. ըսէ՛ք:

Բերել. — Կտ. Անցեալ. բերի, բերիր, բերաւ, բերինք, բերիք, բերինք. — Հրաւ. բեր՛, բերէ՛ք:

Հարցնել. — Կտ. Անցեալ. հարցուցի, հարցուցիր, հարցուց, հարցուցինք: հարցուցիք, հարցուցինք. — Հրաւ. հարցուր, հարցուցէ՛ք. — Անց. Ընդ. հարցուցած, հարցուցեր:

Ցուցնել, լեցնել, անցընել, դարձնել, կորսցնել կը խոնարհուին հարցնելին պէս, ինչպէս նաև ցնել վերջաւորող բոլոր (անցողական) բայերը: Ծանուցանել. — Անց. Կտ. ծանուցի, ծանուցիր, ծանուց, ծանուցինք, ծանուցիք, ծանուցինք. — Հրաւ.

(*) Այս ցուցակին մէջ զարտուղի, բայերուն միայն չազատողի ժամանակները նշանակուած են.
 (**) Եւ Վերջաւորող բայերուն մէջ սպաննել բացառաբար կը հետեւի Ա. լծորութեան տիպար ձեւին.

Ցուցուր, ծանուցէ՛ք. — Անց. Ընդ. ծանուցած, ծանուցեր: Կառուցանել, հասուցանել, մատուցանել, սնուցանել կը խոնարհուին ծանուցանելին պէս:

Բ. ԼՇՈՐԴՈՒԹԵԱՆ ՉԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐ

Հասնիլ. — Կտ. անցեալ. հասայ, հասար, հասաւ, հասանք, հասաք, հասանք. — Հրաւ. հասի՛ր, հասէ՛ք. — Անց. Ընդ. հասած, հասեր:

Մեռնիլ, բուսնիլ, անցնիլ, հագնիլ, հասնիլ կը խոնարհուին հասնիլին պէս:

Թռչիլ. — Կտ. Անց. թռայ, թռար, ելայն. — Հրաւ. թռի՛ր, թռէ՛ք. Անց. Ընդ. թռած, թռեր:

Փլչիլ, դպչիլ, փախչիլ, փակչիլ կը խոնարհուին փախչիլին պէս. բացառիկ են կառչիլ, հանգչիլ, խոսչիլ, արհնչիլ, մեղանչիլ, որոնք կանոնաւոր կերպով կը խոնարհուին խոսչիլին պէս:

Նստիլ. — Կտ. Անցեալ. նստայ, նստար, նստաւ, նստանք, նստաք, նստանք. — Անց. Ընդ. նստած, նստեր:

Սկսիլ, փրքիլ, ձնիլ, պրծիլ կը խոնարհուին նստիլին պէս:

Գ. ԼՇՈՐԴՈՒԹԵԱՆ ՉԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐ

Մնալ. — Հրաւնայական. մնացի՛ր:

Բանալ. — Կտ. Անցեալ. բացի, բացիր, բացաւ, բացինք, բացիք, բացինք. — Հրաւ. բաց՛, բացէ՛ք. — Անց. Ընդ. բացող. — Անց. Ընդ. բացած, բացեր:

Լալ. — Կտ. Անցեալ. լացաւ. Հրաւնայական. լաց՛:

Կեցնալ. — Կտ. Անցեալ. կեցայ, կեցար, կեցաւ, կեցանք, կեցաք, կեցանք. — Հրաւ. կեցի՛ր, կեցէ՛ք. — Անց. Ընդ. կեցող. — Անց. Ընդ. կեցած, կեցեր:

Ունենալ, գիտնալ, բարկանալ և բոլոր նալ, ենալ, անալ բայակերտ մասնիկներով կազմուած բայերը կը խոնարհուին կեցնալին պէս:

Կրնալ կը խոնարհուի կեցնալին պէս. միայն ստորադասականը կ'ըլլայ կարենամ, կարենաս, կարենայի և ին:

ՅՈՒՑԱԿ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐՈՒ

Ըլլալ. — Կsr. Անցեալ. եղայ, եղար, եղաւ, եղանք, եղաք, եղան. — Հրաւնայական. եղի՛ր, եղէ՛ք. — Ներ. Ընդ. եղող. — Անց. Ընդ. եղած, եղեր:

Դնել. — Կsr. Անցեալ. զրի, զրիր, զրաւ, զրինք, զրիք, զրին. — Հրաւ. զի՛ր, զրէ՛ք. — Անց. Ընդուն. զրած, զրեր:

Ընել. — Կsr. Անցեալ. ըրի, ըրիր, ըրաւ, ըրինք, ըրիք, ըրին. — Հրաւ. ըրէ՛, ըրէ՛ք. — Անց. Ընդ. ըրած, ըրեր:

Չարնել. — Կsr. Անցեալ. զարկի, զարկիր, զարկաւ, զարկինք, զարկիք, զարկին. — Հրաւ. զա՛րկ, զարկէ՛ք. — Անց. Ընդ. զարկած, զարկեր:

Տարնիլ. — Կsr. Անցեալ. տարի, տարիր, տարաւ, տարինք, տարիք, տարին. — Հրաւ. տա՛ր, տարէ՛ք. — Անց. Ընդ. տարած, տարեր:

Տալ. — Կsr. Անցեալ. տուի, տուիր, տուաւ, տուինք, տուիք, տուին. — Հրաւ. տո՛ւր, տուէ՛ք. — Ներկայ Ընդ. տուող. — Անց. Ընդ. տուած, տուեր:

Դառնալ. — Կsr. Անցեալ. դարձայ, դարձար, դարձաւ, դարձանք, դարձաք, դարձան. — Հրաւ. դարձի՛ր, դարձէ՛ք. — Ներկայ Ընդ. դարձող. — Անց. Ընդ. դարձած, դարձեր: Ասոր կը հետեւի համբառնալ:

Իյնալ. — Կsr. Անցեալ. ինկայ, ինկար, ինկաւ, ինկանք, ինկաք, ինկան. — Հրաւ. ինկի՛ր, ինկէ՛ք. — Ներկայ Ընդ. ինկող. — Անց. Ընդ. ինկած, ինկեր:

Գալ. — Կsr. Անցեալ. եկայ, եկար, եկաւ, եկանք, եկաք, եկան. — Հրաւ. եկո՛ւր, եկէ՛ք. — Ներկայ Ընդ. եկող. — Անց. Ընդ. եկած, եկեր:

Երբալ. — Կsr. Անցեալ. գնացի, գնացիր, գնաց, գնացինք, գնացիք, գնացին. — Հրաւ. գնա՛, գնացէ՛ք. — Ներկայ Ընդ. գնացող. — Անց. Ընդ. գնացած, գնացեր:

Ուտել (*). — Կsr. Անց. կերայ, կերար, կերաւ, կերանք, կերաք, կերան. — Հրաւ. կեր՛, կերէ՛ք. — Անց. Ընդ. կերած, կերեր:

ՅՈՂՈՒԼ ԲԱՅԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Սանմ. Ներկայ. — Կը թողում, կը թողուս, կը թողու, կը թողունք, կը թողուք, կը թողուն:

Անկ. Անցեալ. — Կը թողուի, կը թողուիք, կը թողուր, կը թողուինք, կը թողուցի, թողուցիր, թողուց, կաս. Անցեալ. — թողուցի, թողուցին:

Բաց. Ապառնի. — Պիտի թողում, պիտի թողուս, կայն:

Անկ. Ապառնի. — Պիտի թողուի, պիտի թողուիր, կայն:

Հրաւ. Եղանակ. — Թող, թողուցէ՛ք: Ստոր. ներկայ. — թողում, թողուս, թողու, կին.:

Ստոր. Անկասար. — թողուի, թողուիր, կին.:

Ըղծ. ներկայ եւ Անկասար. — (Չեն գործածուիր): Անկերտոյթ. — Թողուլ:

Ներկայ Ընդունկերտոյթիւն. — Թողած, թողուցած, Անցեալ Ընդունկերտոյթիւն. — Թողելիք, թողելու:

Թողուցեր: Ապառնի Ընդունկերտոյթիւն. — Թողելիք, թողելու:

(*) Իսկապէս գալ. երբալ, ուտել, պակասաւոր բայեր են որ կը լրանան եկայ, գնացի, կերայ նմանապէս պակասաւոր բայերով:

ՀՐԱՀԱՆՊԵՐ

139. — Խոնարհեցէ՛ք հետեւեալ բայերը:

Մտնել, խնել, փախիլ, մատուցանել, մնալ, դիմանալ, խածնել, դարձնել, բռնակիլ, շալ, սկսիլ:

140. — Հետեւեալ նախադասութիւններու բայերուն կանոնաւոր, զարտուղի կամ անկանոն ըլլալը, եղանակն ու ժամանակը որոշեցէ՛ք բերանացի.

Երկրագործը ցորեն կը ցանկ եւ կը խոզի, քաղաքացիներ զայն կ'աղաչ եւ ալիւր կը շինեն. հացագործը անով հաց կ'եփեն. — Թե՛ որ դուն հիմալ շաւ, ի՞նչ վերջ պիտի խնդրաս, քե՛ որ հիմալ ծիծաղիս, ի՞նչ վերջ պիտի տեսիս, կ'եմք արարիս կ'ընքանալ, մերք շաց, մերք ընկերներդ ե՛րբ ցործի պիտի սկսին. — Ես շաւ ուշացալ շալց դուք ասեմին կ'ախ. եղբայրս ալ վաղը պիտի ժամանէ. — Ո՛րք բարիք որիք ձեր գրասեղանը. — Բարիք որե՛ եւ պիտի լզդաւս:

141. — Հետեւեալ բայերը վերածեցէ՛ք անորոշ եղանակի բոլոր ձևերուն (ներկայ, անցեալ եւ ապառնի ընդունելութիւն).
Սկսալ, վառեցէ՛ք, շալ, կը հոսեր, փախան, դարձուցէ՛ք, կը ցոյան, պիտի հազնի, կ'եղեմ, ըսիք, շինեցի, ըրիք, ծանուցէ՛ք, հասանք, փոքաւ, պիտի գիտնալի, կը հասալեմ, խածիք, շացիք, հիկցալ, որոշեցին:

142. — Դերանուն կամ անուն տէրբայիներուն յարմար անցեալ կատարելի վերածեցէ՛ք փակագծեալ բայերը.

Ես (ուսել), մենք (զարնել), դուն (զսնել), ան (եղել), դուք (ըսել), անոնք (հիշանդ (ըլլալ), ես (ցոյցնել), ինք (ընել), դուն (տանել), ան (սնցընել), մենք (հասուցանել), ես (հազնիլ), դուք (փախել), մենք (սկսիլ), Յիսուս (շալ), ան (ըսել), մենք (գալ), իրենք (երթալ), ան (կուրնալ), մենք (սանիլ), երկիր (դառնալ), ես (իյնալ), դուն (տալ), մենք (դնել):

143. — Ըսէ՛ք բերանացի հետեւեալ բայերուն հրամայական երկու կամ յոգնակի երկրորդ զէմբերը.

Գտնել, առնել, տեսնել, ելլել, ընել, հարցնել, ծանուցանել, փախիլ, մնալ, բանալ, շալ, կենալ, դնել, զարնել, տալ, դառնալ, իյնալ, գալ, երթալ, ուսել, քոյիլ, գիտնալ, ծնիլ, ցոյցնել, իջնել, հասնիլ, լեցնել, բխել, հանգչիլ, մտնել, զարիլ:

144. — Գտէ՛ք եւ գրեցէ՛ք վերի բայերուն արմատները:

145. — Խոնարհեցէ՛ք հետեւեալ բայերը.
Ուսել, երթալ, բարկանալ, փախիլ, անցնիլ, հեծնել, պագնել, հազնիլ, ընել, դառնալ, իյնալ:

146. — Հետեւեալ բայերուն համապատասխան մէյմէկ գոյական եւ անկան կազմեցէ՛ք.
Պաշտպանել, զարմանալ, ընդմնադրել, շողոքորել, խոնարհիլ, տեսիլ, արել, արբանալ, սարսափիլ, լալիլ, յուսալ, բաղձալ:

Օրինակ. — Պաշտպանել, պաշտպան, պաշտպանութիւն.
Զարմանալ, զարմանալի, զարմանք:

147. — Լրացուցէ՛ք հետագայ նախադասութիւնները՝ առաջին նախադասութեան օրինակին հետեւելով.
Զմեռը կ'երևի, ծիծեռնակները կը քողուն իրենց քոյնը եւ կը մեկնին. — Երբ ձմեռը երևեր, ծիծեռնակները . . . — Զմեռը երևցաւ, ծիծեռնակները . . . — Զմեռը պիտի երևի, ծիծեռնակները . . . — Երբ ձմեռը գար, ծիծեռնակները պիտի . . . — Պէտք էր որ ձմեռը գար, որպէս զի ծիծեռնակները . . . — Ո՞վ ծիծեռնակներ, ձմեռը եկաւ . . . :

148. — Խոնարհեցէ՛ք հետեւեալ բայերը.
Իջնել, լեցնել, կատուցանել, բխել, մտնել, փլչիլ, հանգչիլ, ծնիլ, բանալ, սլանալ, դնել, տալ:

ԴԱՍ. — ՊԱԿԱՍԱԻՈՐ ԵՒ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԲԱՅԵՐ

201. — Պակասաւոր կը կոչուին այն բայերը՝ որոնք ամբողջովին չեն խոնարհուիր, այլ քանի մը ժամանակ միայն ունին:

202. — Արդի հայերէնի պակասաւոր բայերէն են եւ, կամ, ունիւմ, լինիւմ, գիտեմ, պարտիւմ, երելիւմ որոնք սահմանական ներկայ, և անկատար միայն ունին: Ասանց պակաս ժամանակներն ի հարկին կը լրացուին ուրիշ բայերով:

Այսպէս՝ եւ և լինիւմ կը լրացուին ըլլալով, կամ կը լրացուի գտնուիլով, ունիւմ՝ ունենալով, գիտեմ՝ գիտալով, պարտիւմ՝ պարտաւորիլով, երելիւմ՝ երեւնալով:

203. — Բաղադրեալ կամ Թարադրեալ բայ կը կոչուին այն բայերը՝ որոնք յարադիր բառով մը կազմուած են. օրինակ՝

Մտիկ ընել, թող սալ, կանգ առնել, ժուռ գալ, կուլ տալ և յն.:

ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԿԱՏԱՂՈՒԹԻՒՆ Ե

Երբոր շան վրայ կատաղութիւն երեւան գայ, նախ քանի մը օր ախուր և մեղկ կ'ըլլայ, կը պահուրտի, խաւարը կը փնտոէ, շատ քիչ կը հաջէ, անդադար կ'ոտնայ, և կը մերժէ ուտել, մանաւանդ խմել: Քիչ տտենէն իր ախրով տունէն խոյս կուտայ, և աստանդական ման կուգայ: Իր մազերը կը քսամնին, կը ցցուին, բերանը լորձունքով կ'ողողուի, լեզուն դուրս կ'իջնայ, պոչը կը ծոխ և սրունքներուն մէջ կը փակչի: Այս վիճակին մէջ անիկա կ'ուզէ ամէն ոք խածուել, նոյն իսկ իր աչքը: Վերջապէս քանի մը օրէն կ'ընկճի սուկայի ջրաձգութիւններու տակ:

Թելադրութիւն. — Կարգալ այս հատուածը, ողղագրել նոյնը, բացատրելաւորը.

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

149. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը, ստորագծելով բաղադրեալ բայերը.

150. — Խոնարհեցէ՛ք ամբողջովին հետեւեալ բայերը.
Սնուցանել, մնալ, տեսնել, առնել, դպիլ, ընել, զարնել, սա-
ղի, գալ, հարբառնալ. — Կամ, ունիւմ, գիտեմ, պարտիւմ:

151. — Հետեւեալ բայերը սահմանական ներկայի, անցեալ կատարեալի եւ ապառնի անկատարի վերածեցէ՛ք եւ գրեցէ՛ք այս ներքեւ ձևերով.
Մարդը ծնիլ, լալ, ճել, մեծնալ, բորովել, խօսիլ, ֆալել, եր-
թել, երբալ, գալ, վազել, ցասել, իյնալ, ելլել, ստապիլ, ուրախանալ,
առնել, սալ, ուտել, խմել, դառնալ, պտտիլ, նստիլ, պտկիլ, փնանալ,
կանգնիլ, սիրել, աշել, ուժաքափիլ, ծերանալ, կհիլ, դողողել, զա-
ւամիլ, հիւանդանալ, մեռնիլ եւ գերեզման մտնել:

287.— Բայարևան կը կոչուին այն պարզ բառերը որոնք բայերու կազմութեան ծառայած են. օրինակ՝

Սէր, խում, մաշ (որոնցմով կազմուած են սիրել, խմել, մաշիլ), և յն. :

288.— Ածանցարարդ կը կոչուին այն բարդ բառերը որոնք միեւնոյն առեն մասնիկով մըն ալ անանցուած են. օրինակ՝ Անխելահաս, լուսանկարիչ, և յն. :

289.— Կրկնաւոր կը կոչուին այն բարդ բառերը, որոնք միեւնոյն պարզ բառին կրկնութեամբ կազմուած են. օրինակ՝ Չարաչար, այլեայլ, ժիրաժիր, և յն. :

290.— Բառերու շնչանկի կը կոչուին բառերու այն խումբերը որոնք միեւնոյն պարզ բառին այլեայլ անանցումներովը կամ բարդութիւններովը կազմուած են. օրինակ՝

Մեծ, մեծութիւն, մեծապէս, մեծատուն, և յն. :

291.— Ստուգաբանութիւն կը կոչուի այն գործողութիւնը որով բառ մը կազմող արմատական և յաւելուածական տարրերը կ'որոշենք :

ԸՆԹԵՐՅՈՒՄ.— ԵՐԿՐԱԿՈՐԾԻՆ ԼՍԲՍՏՈՒԹԻՒՆԸ

Երկրագործին հարստութիւնը կը կազմէ հողը որ իր աշխատութեամբ և բնութեան օգնութիւնովը կը բեղմնաւորի: Ան կը հերկէ հողը և իր ուզած սերունդը կը ցանէ հոն: Բնութիւնը իր բարեւար անձրեւներով կ'օտոզէ այդ հողը և անա՛ սերմերը կը ծլին, կ'աճին, կ'ուճանան: Արեւն իր շափուկ ճառագայթներով կը հասունցնէ երկրագործին թերիքը: Այն ասեւ երկրագործը կը քաղէ զանոնք, կ'ամբարէ և փառք կուտայ Աստուծոյ որ այդ բարիքները պարգեւեց իրեն:

քեզի՛ ըրած չարութենէդ երբոր չես թողուր ինձի ճարակելու զեանի խտաբը զոր դուն երբեք պիտի չուտես: Թեկադուրիւններ.— Կարդալ այս հատուածը, ուղղազրել նոյնը, բացատրել առակին նիւթը եւ բարոյականը:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

189.— Օրինակեցէք վերի հատուածը, ստորագծելով մակբայները:

190.— Հետագայ նախադասութիւնները լրացուցէք իմաստին յարմար մակբայներով:
Ժամանակը . . . կ'անցնի. վայրկեանը ուր կը խօսիմ . . . հետոյ կ'մտնամ . . . ինչ բարիք որ կ'ընդունիմ.— Հընչ որ մարդ կը մտած.— Համբար . . . իրերը կը խոչորցնէ.— Ով որ մեկուն վստահութիւնը . . . կը գործածէ, կը պատժուի.— Չար բնկերներէ . . . փախիմ.— Մի՛ հաւատարմ . . . երբ մեզի շնքէ բէտեանս մեզէն շատ մարգարէներ ելած են . . . :
191.— Հետեւեալ նախադասութիւններուն մակբայները որոշելով հասարակ մակբայները մէկ զիծով, մակբայական ասացումները երկու զիծով ստորագծեցէք:

Աստուած անկնուրէի է.— Տիկին Աստիկ մերընդմերք մեզի կ'այցելէ.— Ստուգիւ շատ բարի է.— Նախ եւ առաջ կարողութիւնդ կը գործէ, յետոյ գործի մեղսակէ.— Յաւակնոս մարդիկ կարի անսանելի են եւ ինչ անգամ կը նախնան իրենց լափը.— Ով որ հապնեցով կը գործէ, յաւ գործող մը չէ.— Քաղաքակրթութիւնը օրկ օր բարդ հանգամանք մը առնելու վրայ է.— Լաւ գիտք մը ծայրէ ծայր եւ կրկնակի կարգալուծուի կ'աղիկ մարտելու համար. ո՛վ որ հարեանցի կը կարդայ, շուտով կը մոռնայ կարդացածը.— Այս մասանիս առնուազն օտան ոսկի կ'արծէ.— Այս հողերը հերու մաս մաս ծախուեցան եւ այսօր աւելի կ'արծեն:

192.— Վերի հրահանգին մակբայներուն տեսակները որոշեցէք:

193.— Հետեւեալ մակբայները մէկ մէկ նախադասութեան մէջ գործածեցէք:
ի վերջոյ, բերես, առ այժմ, յաւե, թնաւ, երբեք, ասեմօք, գրեթէ, մեկնեմս, հազիւ հազ, վերջ ի վերջոյ, հօգուսպէս, վեհանմեծօրէն:

ՇԱՂԿԱՊ

ԴԱՍ.—ՇԱՂԿԱՊ ԵՒ ԻՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

259.—Շաղկապ կը կոչուին այն անփոփոխ բառերը որ այլեւայլ բառեր ու խօսքեր իրար կը կապեն, միեւնոյն ատեն տալով զանազան իմաստներ. օրինակ՝ Երկաթն ու ոսկին մետաղ են, բայց ոսկին թանկագին է:

260.—Շաղկապները երկու տեսակ են. համարաստիակ շաղկապներ որոնք համազաս բառերու կամ խօսքերու միջև կը գործածուին, և ստորադասական շաղկապներ որոնք իրարմէ կախում ունեցող խօսքեր իրարու կը կապեն:

261.—Համարաստիակ շաղկապներու գլխաւորներն են եւ, ու, կաւ, բայց, որովհետեւ, ուրեւեւ, ուստի, սակայն, նաեւ, այ, այսինքն, զի, քանզի, փասկզի, այլ, իսկ, մանաւանդ, գեթ, զոհե, անգամ, որով, և չն:

262.—Ստորադասական շաղկապներու գլխաւորներն են որ, եթի, քե, քեւ, քեպհեւ, երբ, մինչ, մինչդեռ են:

263.—Շաղկապական ասացում կը կոչուին մէկէ աւելի բառերով կազմուած կարգ մը համազասական և ստորադասական շաղկապներ որոնց գործածականները հետեւեալներն են.

Թե որ, կաւ քե, այլ եւ, այլ նաեւ, մանաւանդ քե, այլ սակայն, բայց երբ, այլ քե, այսինքն քե, երբ որ, ուր որ, քանի որ, այնպիսի որ, ինչպիսի որ, որքան որ, որպիսի քե, որպիսի զի, միայն քե, հազիւ քե, ո՛չ քե, ո՛չ միայն, ո՛չ այնքան, ո՛չ իսկ, եթե ոչ, ինչպիսի նաեւ, բայց եւ այնպիսի, մինչդեռ որ, մինչդեռ իսկ, մինչդեռ անգամ, քան քե, իբրեւ քե, նոյն իսկ, և չն:

ՀՐԱՀՅԱԳՆԵՐ

194.—Հետեւեալ խօսքերուն պարունակած շաղկապները որոշելով համազասականները մէկ զիծով, ստորադասականները երկու զիծով ստորագծեցէք, յետոյ բերանացի որոշեցէք շաղկապական ասացումները.

Ապակին եւ բիւրեղը քափակցիկ մարմիններ են, իսկ փայտը՝ անքափակց. — Պարսիկ աշխարհի միկնելու որ շաշոյութեան հասկիկ. — Մարդ քեպհեւ մարմինով սկար բայց խելով գորտուր է. — Հագիւ քե առաջին ցուրտը կ'սկսին, ծիծեռնակները կը լուեն. — Թե որ տուալի տեղ կը գայրակեցնէ, հակ, նեակ գայն. — Կան քե՛ մարմնակաւ հիւանդութիւններ, քե՛ հոգեկաւ. — Ուր որ շարժում կայ, կեանք կարուի, անեւանդիկ հիւանդ անգամ. — Ուր որ շարժում կայ, կեանք կայ. — Իբրեւ քե երկար կեանք մը ունենայիկ, վիշտերն ալ գայն միտով. — Կալակ կը դառնացնեն. — Լաւ է կոյր ըլլալ այնով իսկ կոյր միտով. — Ով որ իր կտիկ, այսինքն միայն ինք իր անձին հասար կ'ապրի, երբ նոյն իսկ շատ հարուստ կամ գիտուն ըլլալ արժանի չէ մարդ ինչոյն. — Կազն ու կոխը տուներ կը խնդնէ միկնելու խաղաղութիւնը իր. — Կազն ու կոխը տուներ կը խնդնէ միկնելու միջ, տղաք: — Կազն տուներ. — Երգը գուարբարս է, ուստի երգեցէք միջ, տղաք: — Հետեւեալ նախադասութիւններուն պակասները լրացուցէք իմաստին պահանջած շաղկապներով.

Հիւները կը կարծէին . . . արեւը կը դառնայ երկին շուրջ . . . իրապիսի երկին է դարձողը արեւին քոյրսիկը. — Պե՛տ չի ըլլալ . . . շատ ազան . . . շատ շուրջ. — Յուրտը կը ստեղծէ շուրջ . . . միջ գրադում գայն կը շոգիացնէ. — Մարդ երբէք չի մանձրանար . . . միջ գրադում մը ունենայ. — Չեմ աշխատի . . . ըստ. անելի ուղիղ կ'ըլլար . . . կիցը իրեն պատասխան տուալ . . . ըստ. անելի ուղիղ կ'ըլլար . . . միտը հարկ է . . . ընդունի. — Պարսիկ աշխարհի . . . կ'ապրի. — մանուրէն վերջ պիտի վայելէ յախտեակական հակցիւս. — Երբ . . . մանուրէն վերջ պիտի վայելէ յախտեակական հակցիւս. — Միջանկեր կան որոնց . . . դպրոցի, անշարժ կը մնան . . . վտակը անցած կարծեն:

ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ԴԱՍ.—ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

264.— Ձայնարկութիւն կը կոչուին այն անփոփոխ բառերը որոնք որ և է յուզում, զգացում կամ կիրք յայտնելու կը ծառայեն:

265.— Ձայնարկութիւններու է՛ն գործածականներն են ա՛հ, ո՛հ, ա՛խ, օ՛փ, օ՛խ, վա՛խ, վա՛յ, ախա՛ս, աւա՛ղ, բարե՛, ա՛յ, ե՛հ, վա՛հ, երա՛նի, եղո՛ւղ, և ին:

266.— Ձայնարկութիւն են նաև մարդիկ կամ կենդանիները կանչելու կամ վարելու համար գործածուած բացազանչութիւնները. օրինակ՝ օ՛ն, ծօ՛, փա՛, հօ՛, օ՛շտ, փի՛ս-փի՛ս, փի՛շ, մի՛նչ, օ՛շտ, և ին:

267.— Երբեմն գոյականներ կամ ուրիշ բառեր ալ պատահաբար իբրև ձայնարկութիւն կը գործածուին. օրինակ՝ մե՛ղք, աւօ՛ք, անե՛ծք, մեղա՛յ, կեցցե՛, և ին:

268.— Ձայնարկութիւններուն վրայ ընդհանրապէս երկար և մէկ քանիներուն վրայ ալ շեշտ կը դրուի:

ԸՆԹԵՐՅՈՒՄ.— ՓՈՒՇԵՐԸ

Գեղամ օր մը իրենց տան պարտէզն իջաւ քաղելու համար նոր բացուած գեղեցիկ վարդերէն, բայց քաղելու ատեն ա՛յնքան հապճեպ և անզգոյշ շարժեցաւ որ վարդին փուշերը իր մատերուն մխուհցան և զգացած ցաւէն սկսաւ լալ:— «Ինչո՞ւ համար, հարցուց տղան իր հօր, ա՛յնքան գեղեցիկ ու հոտաւէտ այս վարդերը անանկ սուր փուշեր ունին»: — «Թերևս մեզի յիշեցնելու համար թէ, ըսաւ հայրը, աշխարհի մէջ ամէնէն ցանկալի և քաղցր բաներն անգամ զերծ չեն վնասակար և աղիտաբեր կողմերէ, եթէ զանոնք զգուշութեամբ և խոհեմութեամբ չգործածենք:»

Թելադրութիւն. — Կարգալ այս մանրավէպը, բացատրել բառերը, ուղղագրել նոյնը:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

196.— Վերի ոտանաւորին բոլոր բառերուն տեսակները որոշեցէ՛ք ընթանացի:

197.— Հետևեալ նախադասութիւններու պարունակած ծայնարկութիւնները որոշելով ստորագծեցէ՛ք.
Օ՛փ, գրուխ կը ցախ.—Օ՛ն, կառք լծեցի՛ք.—Երանի՛ անոնց որ սուրք են արտվ.—Վա՛խ, ծաղիկ հասակի մէջ խա՛րհեցաւ, մե՛ղք.—Ա՛յս քան գո՛տութիւն օճա՛ծ չի, աւօ՛ք.—Ղօ՛, գո՛ւկչե՛ր, քա՛ղցի՛ք սաղլ.—Ճի՛շ, ճի՛շ, ճի՛շ, եկե՛ք, վա՛նակներ.—Անե՛ծք շարագործներուն.—Ա՛խ, շատ դժբախտ եմ.—Է՛հ, ժամանակը կ'անցնի, պե՛տք ք փութալ.—Հի՛սա շունը պիտի խաճե՛ք ինչ, օ՛շտ.—Կանչեցի՛ք կատուն, փի՛ս, փի՛ս, փի՛ս.—Վա՛նեցի՛ք հաւերը, փի՛շ, փի՛շ.— Ի՛նչ սարսափելի հոս ք, քի՛շ:

198.— Հետագայ ոտանաւորին բոլոր բառերուն տեսակները որոշեցէ՛ք ընթանացի:

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.—ՎԱՐԳՆ ՈՒ ՓՈՒՇԸ

«Տրտտում եմ, տրտում, ըսիր ինձի դուն
«Ձի փուշով պատած են վարդին թերթեր»:
Իսկ ես բերկրութիւն մը կ'զգամ անհուն
Ի տես փուշերուն զոր ունին վարդեր:

Աշխարհիս վերայ կա՛յ հաճոյք անխառն,
Կա՛յ երջանկութիւն առանց սեւ սուգի.
Եւ սակայն վիշտն ալ մորմոքիչ ու դառն
Յաճախ բերկրութեան հետը կը զուգի:
Արցունքն ու ծիծաղ՝ անբաժան ընկեր,
Ինչպէս վարդն ու փուշ նոյն արմատն ունին
Կը ժպտին, կուլան մի՛ և նոյն աչքեր.
Սինդ ու վիշտ, ահա՛ աղբիւրը կեանքին:

Ս. Գ.

Թելադրութիւն.— Գոց արտասանել այս ոտանաւորը, ուղղագրել նոյնը, բացատրել իմաստը:

ԲԱՌԵՐՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ԴԱՍ. — ՀՈՄԱՆԻՇ, ՀԱԿԱՆԻՇ ԵՒ ԲԱԶՄԱՆԻՇ ԲԱՌԵՐ

269. — Բառերն իրենց նշանակութեան նայելով տեսակ տեսակ են, ինչպէս՝ համանիչ, բազմանիչ, և յն:

270. — Հոմանիչ կը կոչուին լեզուին այն բառերը որոնք միեւնոյն նշանակութիւնները կուտան իմաստի պզտիկ տարբերութիւններով կամ առանց տարբերութեան. օրինակ՝

Պաւար-աղջամուղջ, ուրախ-զուարթ, և յն:

271. — Հականիչ կը կոչուին լեզուին այն բառերը որոնք իրարու ներձակ նշանակութիւններ ունին՝ օր.
Ելլել — մտնել, շիտակ — ծուռ, թաց — չոր, լիճ — կղզի, և յն:

272. — Բազմանիչ կը կոչուին այն բառերը որոնք մէկէ աւելի նշանակութիւններ ունին. օրինակ՝
Կուշա = կող և յագեցած, դար = զառիկայր և հարիւր սարի:

ԸՆԹԵՐՅՈՒՄ. — ՅԱՐԱՏԵՒՈՒԹԵԱՆ ՀՐԱՇԻՆՆԵՐԸ

Շատ մարդիկ կը գանգատին թէ այս կամ այն գիտութիւնը կամ արուեստը սորվելու համար խիստ և ծանր աշխատանք պէտք է, և թէ իրենք պէտք եղած զօրութիւնը կամ կորովը չունին: Այս առարկութիւնը իրաւացի չէ. յաջողութիւնը տարապայման ճիգերով չէ որ ձեռք կը բերուի, այլ հանդարտ, պզտիկ բայց տեսական աշխատութիւններով, կամք և յարատեւութիւն ունեցէք միայն և ամէն դժուարութեան պիտի յաղթէք: Խորհեցէ՛ք թէ կաթիլ կաթիլ թափող ջուրը կը փորէ քարը և

կրկնուած աննշան տապաքի հարուածները կը տապալեն անտառին ամէնէն վիթխարի և հաստաբետ կաղնիները: Յարատեւող ճիգին առջեւ չկայ բան մը որ դիմանայ:

Դժուարը դիւր, անկարելին հնարաւոր կը դառնայ: Թեկադրուիք. — Կարդալ այս հատուածը, բացատրել և ուղղագրել նոյնը, ըսել բառերուն նշանակութիւնները:

ՀՐԱՇԻՆՆԵՐ

199. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը եւ որոշեցէ՛ք այն բառերը որոնք հետեւեալ բառերուն հոմանիշներն են.
Բազում, ուսանիչ, սասիկ, ոյժ, արդար, շակ, խաղաղ, փոքրիկ, անընդհատ, պուս պուս, մտածել, պեղել, լնիկ, կործանել, կացիկ, անհրաժեշտ, կարելի:

200. — Դարձեալ նոյն հատուածին մէջէն որոշեցէ՛ք այն բառերը որոնք հետեւեալ բառերուն հականիշներն են.
Բիչ, բերել, անհրաւ, սկարուքիւն, անհանդարտ, մեծ, մախրոշուքիւն, ընդհատ, պարտուիչ, նշանաւոր, դժուար, դիտարկիւն, կանգնել, կարելի: "

201. — Հետեւեալ ամական-գոյականները հոմանիշներով փոխանակեցէ՛ք.
Բունն քաղմակ, վճիտ կարիչ, նորք գառազան, քարեքասիկ կեանք, տակալի պատահար, կարծր կեղեւ, քանկագին հագուստ, խաղաղ ալիք, աստանդակաւ ճարտոյ, ցանկալի անդորոքիւն:

Մրուրեան տղ, քանկալի անդորոքիւն, գեղացիի խոճիք, սերբոյի սաղ, կայծակի շողիւն, գնացիի շուտքիւն, զրոմուրեան մուշի:
Օրինակ. — Սասիկ փախալ. — Խաւարի ծածկոյք: հականիշներով փոխանակեցէ՛ք.

202. — Հետեւեալ ամական-գոյականները հականիշներով փոխանակեցէ՛ք.
Քաղցր կեանք, խորունկ ձոր, մեծ կղզի, խոնարհ հպատակութիւն, եպետի մուրքիւն, ցանկալի շոյս, զուարթ առտու, ամառնալիւն շերտութիւն:

Կեանքի ցորեկ, ճշմարտութեան յաղթանակ, հոգիի արիւնքիւն, իմաստութեան սկիզբ, սիրոյ օրհնութիւն, իրիկուսն վերջալոյս:
Օրինակ. — Դառն մահ: — Մահուան գիշեր:

ԴԱՍ.— ՆՄԱՆԱԶԱՅՆ ԵՒ ԲՆԱԶԱՅՆ ԲԱՌԵՐ

273. — Նման աձայն կը կոչուին այն բառերը որ թէև հնչումով իրարու կը նմանին, բայց թէ՛ նշանակութեամբ, թէ՛ ուղղագրութիւնով սարբեր են. օրինակ՝

Գող և ֆող, դեր և քեր, դեւ և քեւ, և այլն:

274. — Բնաձայն էր կոչուին այն բառերը, որ բնական ձայնեք կը ներկայացնեն և անոնց նմանութեամբ շինուած են. օրինակ՝

Բզզիւն, ճռիւն, խորդալ, խնդիւն, և այլն:

ԸՆԹԵՐՅՈՒՄ.— ՏԵՍԲՆԵՐԸ ՄԻ ԾԱՂՐԷՔ

Անոնք որ մարմնական որ և է պակասութիւն կամ ավել կազմուածք ունեցող իրենց ընկերները կը ծաղրեն, անոնց վրայ կը խնդան կամ զանոնք կը նեղեն, անկիրթ և չարատիրտ տղաներ են: Ամէնէն գէշ բանն է հաճոյք կամ զուարճութիւն փնտռել ուրիշի մը վիշտ և նեղութիւն պատճառելուն մէջ: Բնա՛ւ մէկը մի՛ ծաղրէք, մանաւանդ անոնք որ ցաւագար և խեղանդամ են: Մտածեցէ՛ք թէ այդ ողորմելի մարմինները կրնան պարունակել բարի և ազնիւ սիրտեր, մեծ և վեհանձն հոգիներ, արժանի ձեր համակրութեան և սիրոյն:

Թելագրութիւն. — Կարգալ այս հատուածը, բացատրել իմաստը եւ բառերը, ուղղագրել նոյնը.

ՀՐԱՆԱՏՂՆԵՐ

203. — Օւրակացէ՛ք վերի հատուածը, շեղագիր բառերը հոմանիշները գործածելով:

204. — Հետեւեալ բնաձայն անուններուն քով զգէ՛ք ինչո՞ւնցիւրին վերաբերած առարկան, օրինակին պէս.

Որոտուք, ճարճասիւնը, ճոկիւնը, կրճիւնը, դըրդիւնը, շիւքիւնը, ծափիւնը, խոխոյիւնը, փսփսուրը:
Օրինակ. — Անպիւն որոտուք:

205. — Հետեւեալ անուններուն մէյմէկ բնաձայն բայեր ընկեալացնելով նախադասութիւններ կազմեցէ՛ք.
Կասուն, առիւծը, ձիւն, հէք, կովը, ոչխարը, շունը, սոխակը, գայլը, օճը, ճակնճը եւ մեղուն, ճպուռը, արագիլը, գործը, երախան, ճարը, ագռարը:

Օրինակ. — Կասուն կը մտահոգ:

206. — Հետեւեալ անուններուն ընկերացուցէ՛ք իրենց հանած ձայները նշանակող բնաձայն գոյականներ.
Չանգակիւն (դողանք), շրջագնեսիւն հոգեվարժի
արտիւն միտում ոսկուն ժամացոյցիւն խառնակիւն զնդակիւն ծխակիւն

207. — Հետեւեալ բնաձայն բայերուն մէյմէկ տէրբայի ընկերացուցէ՛ք.
Կը հառայի, կը ճոռոտդէ, կը բեղայ, կը կարկայի, կը ծփծփայ, կը կվկվայ, կը հնչի, կը շիւ, կը շայի, կը կակագէ:

Օրինակ. — Հիւանդը կը հառայի:

208. — Հետեւեալ նախադասութիւններուն բնաձայն բայերը գոյականի վերածեցէ՛ք օրինակին պէս.
Եզը կը պոռոչայ, վագրը կը խնչի, խոզը կը խակի, աղաւթի կը մնչի, վառեակը կը կիկայ, ճնճողուկը կը ճոռոչայ, կախար կը կարկայի, եղջերուն եւ փիղը կը զոյեն, արծիւր կը կառայի, անձեղը կը կարկայի, լակոշը կը բնկայ, աղուկը կը կաղկանձի, սիրամարգը կը ճիւ, արքը կը մտնայ, արտոյթը կը գեղգեղի, շորը կը կայկայի, եղնիկը կը քայ, ծիծեռնակը կը ճոռոտդէ:

Օրինակ. — Եզին պոռոչիւնը:

209. — Հետեւեալ բնաձայն անունները բայի վերածեցէ՛ք օրինակին պէս նախադասութիւններ կազմելով.
Ափանցիկ զոնիւնը, բանաստեղծի մտնուք, պատարիկ տունը, անձախի վանդիւնը, անձախի վանդիւնը, փրատարիկ մտնուք, ճացոյցիկ խոցիւնը, բնիկը:

Օրինակ. — Ափանցը կը զոնչի:

**ԴԱՍ. — ԲԱՌԵՐՈՒՆ ՅԱՏՈՒԿ ԵՒ ՓՈՒԱԲԵՐԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ**

275. — Շատ մը բառեր երկու նշանակութեամբ կը գործածուին. յասուկ եւ փոխաբերական:

276. — Բառի մը յասուկ նշանակութիւնն այն է, որուն համար իսկ ստեղծուած է այդ բառը. օրինակ՝
Սուր դանակ, ջուրի աղբիւր, ևլն:

277. — Բառ մը փոխաբերական նշանակութեան մօտ տարբեր առումով մը գործածուի. օրինակ՝
Սուր միտք, չարիքի աղբիւր, ևլն:

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԳՆԱՐԱՆԱՆՉՈՐ

Այդ լեռներուն վէս կատար
Բընութեան ողջ թռքերէն
Կը խուժէ հովն անդադար
Բազէներն անդ կը ճախրեն:

Այդ լեռներուն ստինքէն
Ջինջ առուակներ կը ծորին,
Պըճըլիկներ ալ կ'երգեն
Մոցին մէջ զով ծործորին:

Ոստուններով շառաչուն
Հոն վտակը կը գտայ,
Փրփրոտ ծիծաղ մը հնչուն
Վճիտ չուրթներուն վրայ:

Եւ խնկաւէտ կը պարեն
Չորս դին վայրի ծագիկներ,
Օրորուելով մեղմօրէն
Այգուն սիւքէն տարուբեր:

Ափեր ի վար կ'երկարին
Պարտէզներու զըւարթ չալէ,
Ժառին գիրկը կը թառին
Հսկայ ծառեր, ածու, մարգ:

Ու չէք գիտեր, ինչ աղւոր
Կը ժպտի հոն արշալոյս,
Եւ ինչ հրապոյր ունի խոր
Վերջալոյսն երբ կուտայ խոյս:

ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ

Թելադուրիւններ. — Գոց արտասանել այս ոտանաւորը, բացատրել բառերը:

ՀՐԱՀԱՆՒՆԵՐ

210. — Օրինակեցէ՛ք վերի ոտանաւորը, ստորագծելով այն բառերը որ փոխաբերական նշանակութեամբ գործածուած են,
211. — Հետեւեալ նախադասութիւններու բնածայն բառերն ստորագծեցէ՛ք եւ շեղագիր բառերն ալ հոմանիշներով փոխանակեցէ՛ք.

Երբոր կաղակը գայ, բոլոր հոգ սիրտեր կը սրտինն
անասնան ուրախութեամբ. — Ամբոխին մէջ շշուկ արտածուեցաւ
քե հասնանարակ կրտսեղութիւն մը ծագել է. — Այնպիսի ծիծա-
ղաբարձ դէմք մը առաւ որ ո՛չ ոք կրցաւ իր բեքիջը զարկէ. — Արած
քարծրածայն աղաղակեց եւ յեռոյ խոր հեծեծակներով սկսաւ
լալ: — Բեռնակիրը թռչի ծանրութեան ցակ կեամ՝ սխալով կը հուսէ.
— Կանանչ մարգերու մէջ վեհա առուակը խոխոջելով կը հուսէ.
— Հրդեհին վաշտը գոռում գոչումով կը քնար եւ այդ ժխտիկ մէջ
ոչ ոք իրարու խօսք կրեար հասկնայ. — Երկուն ծիծաղուն կոնակ-
ները ծալառու ափունքը շառաչածայն կը ծեծէին գիշեր ցորեկ:
212. — Հետեւեալ բառերուն նմանածայնները գտէ՛ք եւ դէմ
զիմաց գրեցէ՛ք.
Սէր, հարկ, կէս, ախ, քանակ, գերել, դիտել, յանգ, դեւ, դաս,
անցաւ, փեր, քակ, փոր, դաւ, դող, դոյ, բեր, հարք, յան, քանակ,
ոյլ, հոյ, ցախ, դի, քալ, հոս, որդ, քուռ, քող, մոլ:
Օրինակ. — Սէր-սէր, եւ այլն:

213. — Հետեւեալ բազմանիշ բառերէն իւրաքանչիւրը իրենց
տարբեր նշանակութիւններով երկերկու նախադասութեան մէջ գոր-
ծածեցէ՛ք.
Սան, դար, քարակ, կուշ, այր, հազար, գեշ, ցանկ, հաւ,
այս, մարտ, գուն:

Օրինակ. — Կնեսահայրը շատ կը սիրէ իր սանը:
Սանին մէջ չուր եռացուցի:
214. — Հետեւեալ նախադասութիւններու ժխտական բայերը
փոխանակեցէ՛ք հակառակ իմաստով գիտար լեռ սիրտ. — Երախաները շատ լեռ
խնդար. — Վարդենին պիտի չիտրի. — Ձեր ուժերը մի քանակ որպէս
գի չկարանակ. — Օրհնէ՛ք կ'արգիլէ յանցանք. — Մի՛ մտիկ մեր ծա-
մանակը:

Օրինակ. — Փառասէր մարդիկ գիտար կ'ատեն:

215. — Յետագայ նախադասութիւններու հաստատական բա-
յերը փոխանակեցէ՛ք հականիշ ժխտականներով.

Ասուած կը պատժեմք մեղաւորը. — Ընդունեմք ինչ որուած ենք
չէրը. — Հեռացեմք յարութենէ. — Տիգրան իմ խօսքս հաստատեց. — Քա-
մին անկերը պիտի ցրուեմ. — Վառեցեմք ճշտները. — Պեզեմք յարգել
ծերունիները :

Օրինակ. — Ասուած չի վարձարեմ մեղաւորը :

216. — Յետագայ խօսքերուն ստորոգելիները հականիշներով
փոխանակեցէ՛ք եւ բայերն ալ ժխտականի վերածեցէ՛ք.

Այս հորը խորունկ է. — Չանգակասունը բարձր է. — Աննիմ
մեզի բարեկամ եղան. — Այս հողերը արգասաւոր են. — Խոնամբն ե-
ղեմք. — Թուրքիա հարուստ է հանքերով. — Մարդիկ մահկանացու են. —
Կեանքի սեւողութիւնը կարճ է. — Մարդ գիտուն կ'ըլլայ եթէ աշխատա-
սէր ըլլայ. — Աս ապրանքները սուղ են :

Օրինակ. — Այս հորը ցած չէ :

217. — Հետեւեալ խօսքերուն ստորոգելիները հականիշներով
փոխանակելով՝ բայերն ալ հաստատականի վերածեցէ՛ք. ք.

Մեր տունը մեծ չէ. — Այս հարուստը ազակ չէ. — Շատ մարդիկ
եղանիկ չեն. — Այս աղբիւրին չուէր յսակ չէ. — Գերի մի ըլլաք մեր
կիրքերուն. — Շոգիմ օդն անելի ծանր չէ. — Այս ճիւղերը չոր չեն. —
Իմ խանակս չիտակ չէ. — Սմբատ անօրի չէր. — Մածունը սեւ չըլլար :

Օրինակ. — Մեր տունը պզգիկ է :

218. — Հետեւեալ խօսքերուն մակբայներուն հականիշները
գործածելով բայերն ալ ժխտականի վերածեցէ՛ք.

Տիգրան ըստիցեմք կը ծախսէ. — Էլը դանդաղաբար կը շար-
ժի. — Հովը սաստիկ կը փչէ. — Արամ կանուխ կուգայ. — Վա-
հան նուազ կ'աշխատի. — Քախքը ինչ անգամ կը ծայրի մարդուն. —
Յարդուրիւնը դժուարաւ կուգայ. — Չարունի վայելչօրեմ կը հագուի :

Օրինակ. — Տիգրան խնայողաբար չի ծախսեր :

219. — Հետեւեալ բառերէն նախադրութիւնները հականիշնե-
րով փոխանակեցէ՛ք.

Աշունկն առայ. — Ընկերի հետ. — Սենեակէն ներս. — Չանգա-
կասան վրայ. — Աղբիւրին վերեւ. — Ասուածոյ մօտ. — Դեռեմ անդին. —
Քասին ետեւ. — Լիմնի շուրջ. — Հիւնգէն անելի. — Օդէն վեր. — Այս
օրէն ցատ. — Սանդուղն ի վեր :

Օրինակ. — Աշունկն ետ :

220. — Հետեւեալներուն մէջ փոխաբերաբար իմաստով գոր-
ծածուած բառերը որոշելով ստորագծեցէ՛ք.

Խորունկ հոր, խորունկ գիտութիւն. — Հասուն պտուղ, հասուն
արտի. — Անուշ գինի, անուշ յիշատակ. — Պաղ մարմար, պաղ վար-
ժանի. — Ուղիղ ճամբայ, ուղիղ քննադատութիւն. — Իմանալ գետ, ծան-
ժաղ միտք. — Կասաղի գուռը, կասաղի ծով. — Մաքուր տուն, մաքուր
խիղճ. — Կարծր երկար կարծր սիրտ :

Հնոցի կրակ, բարկութեան կրակ. — Լոյսի ճառագայթ, բարու-
քեան ճառագայթ — Աղբիւրի յսակութիւն, ոճի յսակութիւն. — Չարի
աղբիւր, գորութեան աղբիւր. — Գիշերուան խաւար, զգիտութեան խա-
ւար. — Խնձորի ծաղիկ, կեանքի ծաղիկ :
Դանակը արեւ, միտքը արեւ. — Գինիով արբեցաւ, եղանկութեամբ
արբեցաւ. — Յորեւ սերմանել, բարի սերմանել — Ետ արձակել, եւ-
խասինք արձակել. — Փայտը ծոռել, ճշմարտութիւնը ծոռել. — Դեմքը
սփռել, ճշմարտութիւնը սփռել :

221. — Հետեւեալներուն մէջ շեղագիր բառերը որ յատուկ նը-
շանակութեամբ գործածուած են, փոխաբերական նշանակութեամբ
գործածեցէ՛ք.

Բարձր աշտարակ, վառ կրակ, փայլուն ուկի, ծառի պտուղ,
սինեակի մաքրութիւն, արեւի լոյս, կապարի ծառերութիւն, գա-
ւազանը կտորել, կերակուրով յագեցաւ, ծովի անկոծութիւն,
աջի կուրութիւն, կծու սոխ, հագուստի արտ, անամայ երկինք :

222. — Հետեւեալներուն մէջ շեղագիր բառերը որ փոխաբերա-
կան նշանակութեամբ գործածուած են, յատուկ նշանակութեամբ
գործածեցէ՛ք.

Թեքի բար, կիրքի մերթի, լեռան կող, զգացման ջերմու-
քիւն, շարի մայր, կիրքի յագրել, արդարութեան ձեռք, եռանդը
արժարձել, յոյսը կտրել, ցած հոգի, բարի սփռել, մեղի ազգ,
պայծառ ապագայ, սիրոյ կապ, գիրքի լուսանցք, սեւ բախտ,
գորութեան ցող, գովեստ սեղալ, անուտ լեզու :

223. — Հետեւեալ բայերը փոխաբերական նշանակութեամբ
գործածելով մէյմէկ նախադասութիւն կազմեցէ՛ք.
Մարել, ընկղմել, լողալ, պտրկալ, բորբոխ, փայտիկ :
Օրինակ. — Յակոբին եռանդը մարեցաւ :

ԲԱՌԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

ԴԱՍ. — ՊԱՐԶ, ԱԾԱՆՑԵԱԼ ԵՒ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

278. — Բառերն իրենց կազմութեան նայելով երեք տեսակ են. Պարզ, անանցեալ և բարդ:

279. — Պարզ կը կոչուին լեզուին նախնական կամ արմատական բառերը որոնց վրայ յայտնի մասնիկ կամ բառ աւելցած չէ. օրինակ. հաց, վարդ, շուն, ելն:

280. — Անանցեալ կը կոչուին այն բառերը որ պարզ բառի մը կցուած մէկ կամ աւելի մասնիկով կազմուած են. օրինակ՝ անխելք, փայլուն, դժբախտութիւն:

281. — Անանցական մասնիկ կը կոչուին այն տառերը կամ վանկերը որոնք պարզ բառի մը կը կցուին անանցեալ բառեր կազմելու համար:

282. — Նախադաս կը կոչուին այն անանցական մասնիկները որ պարզ բառերու սկիզբը կը կցուին. օրինակ՝ Դժ(գոհ), ան(գործ), ս(գէտ) ելն:

283. — Յետադաս կը կոչուին այն մասնիկները որոնք պարզ բառերու վերջը կը կցուին. օրինակ՝ (Որս)որդ, (պարտիզ)պան, (ան)եղ, ելն:

284. — Բարդ կը կոչուին այն բառերը որ մէկէ աւելի պարզ բառերու միացումով կազմուած են. օրինակ՝ Մուսրերան, վարդառունկ, տնտեսագէտ. ելն:

285. — Յօդակապ կը կոչուին ա և երբեմն և տառերը որ յանձախ անանցեալ և բարդ բառերը կազմող տարրերուն միջև կը դրուին միշտ բաղաձայնէ առաջ. օրինակ՝

Տարածամ, ուղապան, գործատուն, մանրէաբան, հաշուատուն, ելն:

286. — Բարդութիւններու մէջ երբեմն եւ, ու շարժապները և զբարբարի ի, զ նախդիրները ծառայած են յօդակապի տեղ. օրինակ՝ Առեւտուր, անողող, խառնիխառն, գոյնզգոյն.

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

224. — Հետեւեալ բառերն պարզ, անանցեալ եւ բարդերը որոշելով՝ զատ զատ սխնակներու մէջ գրեցէք. վարդ, աղաման, նեղութիւն, խիս, մայրենի, ֆարսեալ, հաշարոյս, տունկ, յոյս, վախկոտ, կգ, սեր, աղտոտ, մազ, գեղատեղ, փոխիկ, զուտ, ծորակէ, ծովային, գիւղ, մաստաղատ, ծոց, լիճ, օդ, փայտաշէն, ֆաղսֆալան, հասակաւոր, փայլակ, արեւ, մակերգ, ցաւայի, քանգարան, գործավայր, ժամագիրք, սուրբ, աղբակոց, ցաւոտ, սուր, հիւսիսայն, խնամարար, ցայգաքիթու, արեւմտեան, սիկ, անտօք, սգեղ, ֆաշարի, քանասեր, երկնք, անմահութիւն, հոգեւորապէս, յետադիւն, դերհագարապէտ, ֆաղսֆաղիկան:

225. — Յետագայ անանցեալ բառերու մասնիկներուն նախադաս կամ յետադաս ըլլալը որոշեցէք բերանացի. Այնչափ, գեղացի, սգեհ, դժբախտ, փայլուն, շահաւոր, վարձկան, ուժեղ, ապաժամ, զառնուկ, մանիկ, գործիչ, հնդկացի, որսորդ, Հայկունի, դասարան, շահեկան, սակմեմի, սուգոտ, օդակտ, ապազուտ, անագին, զայտոյն, յարգելի, եղբայրարար, ժգոյն, դժուարին, շատուած, սմարտութիւն, անհունապէս, արեւմտեան, հալածողական:

226. — Հետեւեալները ա յօդակապով կամ առանց յօդակապի իրարու կցելով անանցեալ եւ բարդ բառեր կազմեցէք. Դաս եւ տխր, անտուն եւ շատ, հար եւ երկ, ընծայ եւ սցոյն, ֆաղսֆա եւ գեհ եւ ձի, անտուն եւ շատ, հար եւ երկ, ընծայ եւ սցոյն, ֆաղսֆա եւ խառն, շատ եւ փոք, ցելու եւ ոտ, խուն եւ երան, ֆար եւ սքոտ, մարդ եւ կերպ, ան եւ վնաս, շահ եւ սքոտ, քանկ եւ գիւն, լայն եւ ուրիշ, հայ եւ անց, ուղի եւ պան:

227. — Հետեւեալները եւ կամ ու շարժապներով իրարու կցելով բարդ բառեր կազմեցէք. Առ ծախ, հիւս-կաց, ել-կէ, որձ-կգ, վար-ցան, սար-քեր, աւ-լիս, կարգ-սարք, հայ-մաշ, ցիւ-ցան; կեր-խուն, երբ եկ, անձ-դարձ, յար-ենակ, ծաղր-ծանակ:

ԴԱՍ.—ՊԱՐՁ, ԱԾԱՆՅԵԱԼ ԵՒ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ (շար.)

287.— Բայարմաս կը կոչուին այն պարզ բառերը որոնք բայերու կազմութեան ծառայած են. օրինակ՝

Սէր, խում, մաշ (որոնցմով կազմուած են սիրել, խմել, մաշիլ), և ին. . .

288.— Ածանցարարդ կը կոչուին այն բարդ բառերը որոնք միեւնոյն ատեն մասնիկով մըն ալ ածանցուած են. օրինակ՝ Անխելաշաս, լուսանկարիչ, և ին. . .

289.— Կրկնաւոր կը կոչուին այն բարդ բառերը, որոնք միեւնոյն պարզ բառին կրկնութեամբ կազմուած են. օրինակ՝ Չարաչար, այլեայլ, ժիրաժիր, և ին. . .

290.— Բառերու շնչանկի կը կոչուին բառերու այն խումբերը որոնք միեւնոյն պարզ բառին այլեայլ ածանցումներովը կամ բարդութիւններովը կազմուած են. օրինակ՝

Մեծ, մեծութիւն, մեծապէս, մեծատուն, և ին. . .

291.— Ստուգաբանութիւն կը կոչուի այն գործողութիւնը որով բառ մը կազմող արմատական և յաւելուածական տարրերը կ'որոշենք:

ԸՆԹԵՐՅՈՒՄ.— ԵՐԿՐԱԳՈՐԾԻՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Երկրագործին հարստութիւնը կը կազմէ իողը որ իր աշխատութեամբ և բնութեան օգնութիւնովը կը բեղմնաւորի: Ան կը հերկէ հողը և իր ուղած սերմերը կը ցանէ հոն: Բնութիւնը իր բարեւար անձրեւներով կ'օտոզէ այդ հողը և աճա՛ սերմերը կը ծլին, կ'աճին, կ'ուռճանան: Արեւն իր շափուկ ճառագայթներով կը հասունցնէ երկրագործին բերքերը: Այն ասե՛ն երկրագործը կը քաղէ զանոնք, կ'ամբարէ և փառք կուտայ Աստուծոյ որ այդ բարիքները պարգեւեց իրեն:

Օրհնակ — Եւայ կազմուած և ա արմատով եւ ալ բայա-
կերս մասնիկով:

262. — Հետեւեալ բայերէն ածանցանքները եւ բարդերը որո-
շելով զատ զատ սիւնաթիւններու մէջ գրեցէ՛ք.
Տիրապետել, նուիրագործել, կառավարել, բեռնաւորել, փե-
րասել, ներշնչել, աշատանել, շարժարել, լինադասել, վերաբերիլ, հա-
ճակիլ, բացատրել, խորունկեալ, դասապատրել, հաճոյանալ, ոսկեգ-
ծել, խնկարեցել, անբովանդիլ, մարտիլ, դիտարել:

263. — Հետեւեալ արմատներով բայեր կազմեցէ՛ք
Սուք, խիղ, դեպ ծին, երբ, ծախ, ձիգ, ցրի, վարժ, իզձ,
ուսկ, նուրբ, հալիլ, շնորհ, սոր, սոյ, խնդիլ, մոտ, սարտառ,
ճնար, հարուս, հոգ, ցի՛ծ, քիւ, փուլ, շիլ, սուգ, մտուել, բուռն,

264. — Հետեւեալ նշանակութիւնները տուող բայեր կազմեցէ՛ք.
Յորդ ըլլալ շոգի դառնալ սառ ըլլալ մոխ արձակել. կան-
գուն կենալ կոյր ըլլալ ոյսը կտել դիւ դնել ախտ եկրարկուիլ.
ագնի ըլլալ փառք սոյ շատապսակ կրել. սրտը մաշիլ շանով զար-
նել պատու պատու ընել. վրասիլ դառնալ. գեղեցիկ զարդարել.
վեր պատանել իմ դ.ել. ծակ ծակ ընել նեղը դնել սուր ըլլալ:

ՍՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.— ՍԱՐԳՆ ՈՒ ՇԵՐՍԵՐ

Սարգը չերամին կ'ըսէր հեզնօրէն.
— «Ինչ դանդաղաչարժ ես դուն, Աստուած իմ,
«Եւ ս'ըքան օրեւ քեզ հարկաւոր են
«Որ գործ մ'արտադրես. նայէ՛, չը պարծիմ,
«Փոքրիկ պահ մ'ինձ բաւ է՝ նուրբ, սնհամար
«Թելերով ուտայն մը հիւսելու համար»:

Շերամն յարեց. — «Լա՛ւ, սակայն
«Դիմացկուն չէ քու ուտայն,
«Ո՞ր ալ՝ ո՞ր և է բանի
«Օգտակար կամ պիտանի.
«Ի՞նչ կ'արտադրեմ ես, իրաւ.
«Եւ այց արտադրածս է միշտ լաւ»:

Քարգմ. Ա. ֆ.
Թիւղադուրիւն. — Գոց արտասանել այս ոտանաւոր առա-
կը, արձակի վերածելով պատմել նիւթը, բացատրել բարոյականը

ԴԱՍ. — ԲԱՅԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ (շար.)

327. — Անցողական բայեր կը կազմուին ցնեղ, ացնեղ, եցնեղ բայակերտ մասնիկներով. օրինակ՝

Վազել, անցողական՝ վազցնեղ, մտնել — մտցնեղ, ցաւիլ — ցաւցնեղ, հասնիլ — հասցնեղ, թռչիլ — թռցնեղ, մոռնալ — մոռցնեղ, խօսիլ — խօսեցնեղ, յիշել — յիշեցնեղ, մօտենալ — մօտեցնեղ, կարգալ — կարգացնեղ, զարմանալ — զարմացնեղ, ևն:

328. — Ուսել բային անցողականը կ'ըլլայ կերցնել, դառնալիքը՝ դարձնել, հաւրառնալիքը՝ հաւրարձնել:

329. — Կրաւորական բայեր կը կազմուին ուիլ, նըւիլ, ցուեղ, ացուիլ, եցուեղ բայակերտ մասնիկներով. օրինակ՝

Գրել, կրաւորական՝ գրուիլ, խօսիլ — խօսուիլ, հարցնել — հարցուիլ, առնել — առնուիլ, անցնիլ — անցնուիլ, մոռնալ — մոռցուիլ, կարգալ — կարգացուիլ, իմանալ — իմացուիլ, մօտենալ — մօտեցուիլ, ևն:

330. — Դնել, սալ, սսնիլ, դառնալ, ուսել անկանոն բայերուն կրաւորականը կը կազմուի բուն արմատներուն կցելով ուիլ մասնիկը. ինչպէս՝ դնել — դրուիլ, տալ — տրուիլ, տանիլ — տարուիլ, ուտել — ուտուիլ, կամ կերուիլ:

ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԿԱՄԲ ԵՒ ԶԱՆԲ

Մարդ կրնայ ըլլալ ինչ որ կ'օւզէ կամ կը մտադրէ ըլլալ: Աշխարհի վրայ միայն երկու կարգ մարդիկ կան. անոնք որ ուրիշներու կ'առաջնորդեն, անոնք որ ուրիշներէ կ'առաջնորդուին: Ամէն մարդ, ա՛յր թէ կին, կամ պարագաներն իրեն կը յարմարցնէ, կամ ինք պարագաներուն կը յարմարի: Ընդհանրապէս այն մարդը որ յաջողելու ջօրաւոր կամք ունի, կը հասնի ուր որ կը բաղձայ հասնիլ: Այն որ տկար է կամ երերուն, անխելք

ամ ծոյլ, հարկաւ կ'իյնայ և չի յաշողիր: Երեւելի ատեալսօս մը ըսած է. «Ուղղէ՛ աղեղդ Արեւին, աւելի արձր կ'երթայ այն քան եթէ թուփի մը ուղղէիր զայն»: Բարձրի՛ն նայէ, միշտ դէպի վեր նկրտէ՛ դուն ելլելու: Զհասնիս ալ, այդ ճիգըք քեզ վար սահելէ կ'արգելու: Թելադրուրիւններ. — Կարդալ, բացատրել եւ ուղղազրել այս հատուածը:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

265. — Օրինակեցէք վերի հատուածը, ստորագծելով բայերը. թոյ այդ բայերուն տեսակը որոշեցէք բերանացի:

266. — Ստուգարանեցէ՛ք հետեւեալ բայերը, որոշելով արմատներն ու անցողակերտ մասնիկները. Խնդացնել, գոյացնել, փակցնել, գիացնել, հանդիպեցնել, զգացնել, ճանցնել, խցնել, գոռացնել, փոքացնել, փնացնել, յակացնել, քիպեցնել, խլացնել, կուրցնել, հոսեցնել, լիացնել, կայացնել, բրբաղացնել, ուռեցնել, յաղոցնել:

267. — Վերի բայերը ներգործական կամ չէզոք ձեւի վերածեցէ՛ք:

268. — Հետեւեալ բայերը անցողականի վերածեցէ՛ք. Յիշել, ֆրսիլ, փրքիլ, հակգլիլ, սկալ, սքափիլ, քնիլ, հալիլ, աշխատիլ, հիկնալ, յոգնալ, կասդիլ, լալ, կեկնալ շիմալ, իջնել, սառիլ, սուրալ, զարգանալ, իմանալ, ուսել, յոգնիլ, հագուիլ, համբառնալ:

269. — Ստուգարանեցէ՛ք հետեւեալ բայերը, որոշելով արմատներն ու կրաւորակերտ մասնիկները. Դրուիլ, տրուիլ, տեսնուիլ, սիտուիլ, ցոցուիլ, բաժնուիլ, աշխուիլ, խաժնուիլ, ժողովուիլ, սաստուիլ, տարուիլ, երկրցուիլ, խորհուիլ, մեծնուիլ, իմացուիլ, քացուիլ, գարուիլ, հարցուիլ, ցուցուիլ, կիսուիլ, հեծնուիլ, շալկուիլ:

270. — Վերի բայերը ներգործական կամ չեզոքի վերածեցէ՛ք: 271. — Հետեւեալ բայերը կրաւորականի վերածեցէ՛ք. Հասկնալ, շնորհել, բաղձալ, խնդրել, վայելիլ, սկսիլ, բողոք, գարնել, քերել, սալ, ըսել, հասուցանել, իջնել, մեռցնել, սպաննել, վտարել, ցնցել, որսալ, անխել, գրալ, կաշկանդել, սնուցանել, վախճել, արձակագրել, դիւրել, դիւրացնել, մեկնիլ, հետհեղ, դիմանալ, դրանալ, խաչել, սիրանալ մեծենալ, ուռնալ:

ԴՕՍ.— ՄԱԿԲԱՅՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

331. — Ածանցեալ մակբայները կը կազմուին այլ և այլ բառերու կցելով հետեւեալ յեռադաս մասնիկները.
- Բար. — օրինակ՝ հայրաբար, խնարհաբար, և յն:
- Օրհն. — » ազնուօրէն, վայելչօրէն, և յն:
- Պես. — » մեծապէս, վերջապէս, այսպէս, և ն:
- Ովիւն. — » բոլորովին, գլխովին, սրտովին և ն:
- Այն. — » միանգամայն, վաղորդայն, և ն:
- Գին. — » ուժգին, լալազին, ահագին, և ն:
- Ակի. — » ուղղակի, յանկարծակի, և ն:
- Անց. — » սրտանց, երեսանց, հեռուանց, և ն:
- Ուց. — » մօրուց, առաջուց, հինուց, և ն:

332. — Բարդ մակբայներ կը կազմուին այլ և այլ բառերու միացումով. օրինակ՝ վազնիվազ, վերիվայր, տակնուվրայ, և ն:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

272. — Ցեռագայ ամանցեալ եւ բարդ մակբայներն ստուգաբանեցէք բերանացի.
- Գոնեկօրհն. խմբովին, ջերմացին. շէշակի առօռուանց. մեղմօրհն. իշխանաբար. վաղուց արտանց. արտնօրհն բերնուց վաղվազակի. տօնագին. հրճուացին. խոխաբար շեղակի. մօրուց. նոյննեսայն խսօրհն ուղղակի գիշերանց. կազնկաղ. կամովին. կրկնակի. մարդիօրհն. անասնաբար հոգեւին ընդհանրապէս. բարոյապէս օրնդմէջ վերիվայր:
- 273 — Հետեւեալ բառերուն կցելով նշանակեալ մասնիկները մէյմէկ ամանցեալ մակբայ շինեցէք.
- Սասիկօրհն վայրենի բար. Աիւր-պէս. սմբողջ ույին ուժգին-ակի. գլուխ-ույին. ծառայ-բար, ճամարիս-պէս վայրկեան բար.

Սասիկօրհն. ցուրտ-գին. հեզ-բար. պզտիկ-ուց. խիւնդ-գին. որոշ-ակի. ճառ-անց:

274. — Հետեւեալ արմա ոներով ներգործական բայեր կազմելով գրեցէք նաեւ իւրաքանչիւրին կրատարականի եւ անցողականի ձեւերը.

Կուշ. հագ. գհս. մոռ. շահ սեր. կարդ խում:

Օրհնակ — Կուշ. կրեշ. կրուիլ կրեցնել:

275. — Գտէ՛ք հետեւեալ պարզ բառերու ընտանիքն սլառ կանոչ բոլոր ամանցեալ եւ բարդ բառերը եւ խումբ խումբ գրեցէ՛ք.

Սիրտ. հող. մաս. սառ. զարդ. Ասուած սեր. մահ ժամ.

Տիւր կազմ. մուր:

276. — Բերանացի որոշեցէ՛ք թէ յետագայ բառերը ամանցեալ, բարդ, ամանյարբար, թէ կրկնա որ են. եւ լինչ տեսակ բառ են (կոյակա՞ն, ամակա՞ն, եւն):

Չափաւորապէս. վառվառն ունայնակի. դեկրացի. դիմակ. անկիւնապէս ծաւառածա՞ր սնանեջ. ծանծաղուտ. վազվզել պնանահանաւ. նաւաւ. նաւաւաւ. սպօրինաւոր յարեկրոքիւն մկնորսաւու. հնամեայ. անհունապէս կիսարդոտա՞ն շկառոքիւն. խոստանալու. շնորհաւորել. քոչաստակաւ գիտակօրհն դիզարդք բազմապատկութիւն. առժամանակեայ գիշերօրիկ. ներդաշնակութիւն ջերմացեալ. գլխիվայր:

277. — Վերի հրահանգին բառերը գրաւոր ստուգաբանեցէ՛ք օրինակին պէս.

Օրհնակ. — Չափաւորապէս — Չափ-աւոր-ա-պէս:

Վառվառն — վառ-վառ-ուն:

278 — Հետեւեալ նշանակութիւնները ստուղ բառեր կազմեցէ՛ք

Երգիչին իզակեալ. գիտեալ դարակին պեթ. հետուն դիտելու գործիք մի արձակելու տեղ վարժապետ հասցնելու դպրոց. ժանտ վիճակ. յիսուն տարուան շրջան. գեղեցիկ արուեսներու վերաբերեալ. շահ մը որուն դիմ կարելի չէ մեղիլ. բան մը որուն գոյքը չի գրօնուիր. բան մը որ ժամանակի մը համար կը տեւ. կենդանիներու գիտութիւն. շահ կիներ ունենալու վիճակ. դուրս հասիլ ընտանիքէ գուրկ. վաճառ բռնելու գործողութիւն ուրիշ աշխարհի վերաբերեալ. երկուսին հակակիշը:

279. — 276րդ հրահանգի բառերէն զոյականներուն քով մէջ մէկ յարմար սեռական յատկացնելիչ, ածականներուն քով մէջմէկ զոյական, բայերուն քով մէջմէկ մակբայ եւ մակբայներուն քով մէջմէկ բայ դրէք:

Օրինակ. — Վառվռուն միտ, պարահանդեսի դիմակ, հառն վազվզել, չափաւորապէս ուտել:

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԵՐԱՋ ՄԵ

Երազիս մէջ մշակն ըսաւ ինձ. «Ո՛վ մարդ, Մշակէ՛ հողն, ա՛յլ հացդ անձամբ բուսցուր դուն»:
Ոստայնանկն ալ «Հագուստներդ դո՛ւն գործէ արդ»: Իսկ որմնադիրը՝ «Օ՛ն, ծեփի՛ն առ, շինէ՛ առն»:

Ու միսմինակ՝ լքուած բոլոր մարդոցմէն
Որոնց մերժման կը բախէի ա՛մէն տեղ,
Երբ գթութիւն կը հայցէի երկինքէն,
Դէմս առիւծներ կը գտնէի ցից ա՛նեղ:

Բացի աչքերս, այգն էր ծագեր, իրա՛ւ էր,
Բզզիւնը ժիր բանուորներու կը լըսուէր,
Հողն ալ ցանուած էր մըշակէն խելացի:

Յայնժամ ճանչցայ երջանկութիւնս, գիտցայ թէ
Մարդըս միշտ իր նըմաններուն կարօտ է:
Անկէ ի վեր մարդիկն ամէն սիրեցի:

Թրգմ. Յ. Գ.

ՍԻՒԼԼԻ ԲԵՒՆՏՈՄ

Թեւադրութիւն. — Գոց արտասանել այս քերթուածը, աքժակի վերածել զայն գրաւոր, բացատրել իմաստն ու բարոյականը. — Թեւադրութեամբ ուղղագրել նշմը.



ԲԱՌԵՐՈՒ ՊԱՇՏՕՆՆԵՐԸ

**ՕՒ
ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

ԴԱՍ. — ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

333. — Որեւէ խօսք կը բաղկանայ մէկ կամ աւելի նախադասութիւններէ:

334. — Նախադասութիւն կը կոչուի որ եւ է դատուած կամ մտածուած որով բան մը կը հաստատենք կամ կը ժխտենք. օրինակ՝
Ապակին թափանցիկ է. ոսկին չի ժանգոտիր:

335. — Խօսքի մը մէջ այնչափ նախադասութիւն կայ որչափ որ դիմաւոր բայ կայ. օրինակ՝
Երկրին ջուրերը կը շոգիանան | կը փոխուին ամպի |
որ անձրև կ'ըւայ | և նորէն կը դառնայ երկրին:

336. — Որեւէ նախադասութիւն առ նուազն պէտք է որ պարունակէ երկու էական բառեր, Տե՛ր բայի և բայ առանց որոնց խօսք չի կազմուիր:

337. — Նախադասութիւն մը կը պարունակէ նաև երկու անհրաժեշտ լրացուցիչ բառեր, այն է՝ usորոգելի՞ ծական է:

338. — Նախադասութեան մը տէր բային, ստորոգելին կամ սեռի ինդիքը կրնան մէկէ աւելի ըլլալ. օրինակ՝
Ոսկին և արծաթը մետաղ են. առիւծը վնասնձն և հզօր է. մշակը կը ցանէ ցորեն, զարի և փարսակ:

339. — Նախադասութիւն մը իր էական մասերէն և

յատուկ լրացուցիչներէն զատ՝ կ'ունենայ նաև ուրիշ լրացուցիչ մասեր ալ որոնք տէր բայիին, բային կամ միւս բառերուն իմաստը լրացնելու կը ծառայեն. օրինակ՝ ժիր մըջիւնը առաս պաշար կ'ամբարէ անտուան հաւնար:

ԸՆԹԵՐՑՈՒՄ.—ԶԲՕՍԱՆՔԸ

Շատ դպրոցականներ յօռի կերպով կ'անընեն իրենց զբօսանքի ժամանակը: Ոմանք կ'զբօսնուն իրարու հետ կուրծակելով կամ գգուրտելով. ոմանք փողօցները կը սըքտան կամ դաշտերը կը պտտքին պարտէզներ աւրչակելով. ուրիշներ ալ իրարու քար կը նետեն կամ վերջապէս կը խաղան այսպիսի վայրենի խաղեր: Լաւագոյն չէ՛ր ըլլար սակայն որ անոնք ինքզինքնին տային հանդարտ ու պարկեշտ խաղերու, այնպէս որ զբօսանքն ու խաղը իրենց համար միջոց մը ըլլար իրենց ճարպիկութիւնն ու դիւրաթեքութիւնը փորձելու կամ գիտութիւնը աւելցնելու. ինչ աղէկ կ'ըլլար որ, օրինակի համար, իրենց զբօսանքի ժամերն անցընէին միջատներ որսալով ու դիտելով, բոյսերու հաւաքածոներ կազմէին կամ ծագիկներ մշակէին: Բոլոր ասոնք զիրենք շատ պիտի զուարճացնէին՝ կրթելով հանդերձ:

Տղա՛ք, գիտցէ՛ք որ զուք պարտիք նաև զբօսուել սորվիլ: Դիմեցէ՛ք ուրեմն ձեր ուսուցիչներու խորհուրդին և անոնց հրահանգին համաձայն ընտրեցէ՛ք ձեզի համար զբօսանքի պարկեշտ ու կրթիչ միջոցներ, որոնցմէ քիչ առնենք այնքան հաճոյք և համ պիտի զգաք որ ապահովաբար բոլորովին պիտի մոռնաք ձեր խենդութիւնը խաղերը, և պիտի նուիրուիք ձեր օգտակար ու հրապուրիչ զբօսանքին:

Թելադրութիւններ. — Կարգալ այս հատուածը, ուղղագրել նոյնը, բացատրել դժուարին բառերը:

ՀՐԱՆՍՆԵՐ

280. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը եւ նախադասութիւններն քարտէ՛զ գտեցէ՛ք ուղղահայեաց գիծերով:

281. — Հետեւեալ նախադասութիւնները լրացուցէ՛ք երկերկու տէրբայի, ստորոգելի կամ սեռի խնդիրներով:

Տէր բայիով լրացուելիք — . . . գիշատիչ բոլորներ են. — մեր առաջին բուսաբույներն եղան — . . . կը դարձան. — . . . Ս. Գիրքը հայերեկի քարտանագիւն. — . . . շոգիով կը ֆախեն. — . . . գեղարուեստներ են:

Օրինակ. — Անգղը եւ թագն գիշատիչ բոլորներ են: **Ատարակիկով լրացուելիք.** — Վարդը . . . կ. — Պօղոս առաքեալ . . . կր. — Գարունը . . . կ. — Աշխատատեղ տղայ . . . են. — Ժամանակը . . . կ. — Մեծն Վարդան . . . կր:

Օրինակ. — Վարդը հոտաւե եւ գեղեցիկ է: **Առի խնդիրով լրացուելիք.** — Հարսութներ . . . կը ժայթկն — Տղայի, յարգեցէ՛ք մեր . . . — Աստուած ստեղծեց . . . — Մշակները . . . կը ցանկին. — Կեանքը ունի իր . . . — Փոքրիկը . . . կը բերէ:

Օրինակ. — Հարսութները լալա եւ մոխիր կը ժայթկն: 282. — Հետեւեալ նախադասութիւններու լրացուցիչ բառերը որոշելով ստորագծեցէ՛ք.

Մանուկներու հոգին դիտարեմէ կ. — Մեծն ունիմ հինգ զգայաբաններ. — Հաստակամբ կը յարթե անկն դժուարութեան. — Արեւիկ լոյսը եօրը գոյներ կը պարունակէ. — Բարի ծառը բարի պտուղ կուտայ. — Մարդիկ ընդհանրապէս ինկզինցին կը բոլորապէս իրենց պիտանելովը — Այլագովստի Աշխատար ծովանկարի մըն կր. — Այս տարուան մեծը խիստ սաստիկ եղաւ: ||

288. — Վերի նախադասութիւններուն լրացուցիչ բառերը մը մտածելով լրացուցիչն են, ընթանացի որոշեցէ՛ք:

ԴԱՍ. — ՊԱՐԶ, ԲԱՐԴ ԵՒ ԶԵՂԶԵԱԼ

Ն Ա Խ Ա Դ Ա Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

340. — Պարզ կը կոչուի այն նախադասութիւնը որ կը պարունակէ նախադասութեան էական մասերը միայն՝ այսինքն՝ աէր բայի, բայ և իր յատուկ լրացուցիչները (ստորոգելի և սեռի խնդիր)՝ օրինակ՝

Կարկուտ տեղաց. օդը զով է. ձկնորսը ձուկ կորսար, ևն :

341. — Բարդ կը կոչուի այն նախադասութիւնը ուր նախադասութեան էական մասերէն մին կամ միւսը կամ ամէնքն ալ կ'ունենան իրենց լրացուցիչները. օրինակ՝

Արեւին լոյսը կը պարունակէ եօթը տարբեր գոյներ :

342. — Շաղկապէն և ձայնարկութենէն զատ՝ բոլոր միւս բառերը կրնան իբր լրացուցիչ ծառայել նախադասութեան էական մասերուն :

343. — Նախադասութեան մը բայը կամ բային հետ միասին մէկ կամ աւելի լրացուցիչները երբեմն կրնան զեղջուրի, կրկնութիւն չլրացու համար : Այսպիսի նախադասութեանց կ'ըսուի զեղջեւոյ նախադասութիւն. օրինակ՝

Բարի տղան զովեստ կ'ընդունի, իսկ չարը՝ պարսաւ. (փոխանակ ըսելու՝ իսկ չարը պարսաւ կ'ընդունի) :

Հ Բ Ս Է Ս Ն Գ Ն Ե Ր

284. — Յետագայ նախադասութիւններու մէջ բարդերը պարզերէն զատելով՝ առանձին խումբերով զրեցէ՛ք.

Մշիւնը ծրացան միշտ մըն է — Երկրաշարժ պատահեցաւ. — Ահագին հեղեղներ ողողեցին մօտակայ դաշտը. — Մոզմուն իմասուն որդին եր Դաւթի. — Թնդակնորը կը գոռար անկեղի որոտումով — Զապիչ մեղանը բափեց. — Մենք ուրախ ենք. — Ատելը կը կենայ մոլորակներուն կեդրունը. — Լաւ գիրները ընտիր բաւելամեն եմ. — Նիւուէ աւերակ ե-

զաւ. — Մենք բոլորածին կը շնչենք եւ ամսածին կ'արտաշնչենք. — Երանք ինքնիտեն կը հիւսկ իր գերեզմանը. — Առտուն ցողը մարգարիտի պէս կը փայրէր սերեւներուն վրայ. — Մարդկային ախը իր հոգիին հայելին է :

285. — Հետեւեալ նախադասութիւններուն զեղջում մասերը լրացուցէ՛ք.

Երկաքը մետաղ է, իսկ վարսակը՝ րոյս. — Ասկն մարդ միտ ունի, քայց Տիւրք՝ ուղիղ դասողութիւն. — Զգուշացէ՛ք սաստիկներէ, նոյն իսկ անհեռն անկշակէն. — Գարունը եկաւ, ծառերը ծաղիկներով զարդարուեցան, գետիկները՝ դալարիով. — Մենք երկու տուն ունինք մին մեծ է, միւսը՝ փոք. — Ո՛ր կ'երթաս, — դպրոց. — Որչափ մարդիկ՝ այնչափ կարծիք. — Ինչպէս աղտաւը՝ նոյնպէս հարուստը, ամէն աչ պիտի մեռնի. — Պերճակը հաճելի է, քայց ո՛չ հարկաւոր :
Օրինակ. — Ասկն մարդ միտ ունի, քայց Տիւրք ուղիղ դասողութիւն ունի :

286. — Հետագայ նախադասութեանց մէջ զեղջիլի մասեր եթէ կան, զեղջիլով զեղջեւոյ նախադասութեանց վերածեցէ՛ք.

Ինչպէս որ ջուրը հեղուկ է, այնպէս ալ այնոք հեղուկ է. — Ինչ խրատն ի՞նչ ի՞նչ կ'ուզէ մեզու. — Դրան կ'ուզենք մեզու. — Ինչ խրատն ի՞նչ ինչ ինչ, սեւը սպտակն ի՞նչ ընէ. — Բարի ծառը բարի պտուղ կուտայ, իսկ չար ծառը չար պտուղ կուտայ. — Մոդին կը հպասակի իր կիրառումին ինչպէս ծառն կը հպասակի իր սիրտը. — Տա՛մար աւելի կը սիրէք քէ խնամը աւելի կը սիրէ :
Օրինակ. — Ինչպէս որ ջուրը հեղուկ է, այնպէս ալ այնոք :
287. — Հետեւեալ պարզ նախադասութեանց շեղազիր բառերուն մէջմէկ լրացուցիչ աւելցնելով՝ բարդ նախադասութեանց վերածեցէ՛ք.

Հրդեհ պատահեցաւ. — Գործը կենդանի է. — Զանգակը կը հնչէր. — Մօակը փայտէ հուճեմբ. — Քննուի քննեմբ պիտի կատարուին. — Ցիտուս խաշուեցաւ. — Պարս փլաւ. — Օրինակ. — Եկեղեցիին զանգակը ուժգին կը հնչէր :

ԳԱՍ.— ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ

344. — Քերականական լուծումը կը կոչուի այն գործողութիւնը որով նախադասութեան մը պարունակած բառերուն տեսակները և անոնց պաշտօնները կ'որոշենք օրինակ՝

Բարերար Արեւը ամենուրեք կեանք և լոյս կը սփռէ :
կը սփռէ ներգործական բայ, սահմանական ներկայ, եղակի երրորդ դէմք :

Արեւը Յասուկ անուն, եղակի ուղղական, տէր բայի, «կը սփռէ» բային. ը որոշիչ յօդ :

Բարերար Որակական ամական «Արեւը» զոյականին :
կեանք, լոյս Հասարակ անուն, եղակի հայցական սեռի խնդիր են «կը սփռէ» բային :

Եւ Համադասական շողկազ որ կը միացնէ կեանք, լոյս բառերը :

Անկենտրեք Տեղական մակերայ կը սփռէ բային :

ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ԳԻՐԻՔԸ

Գիրք մը շինելու համար կրկին աշխատութիւնն հարկաւոր է. նախ՝ զայն յղացող աշխատութիւնը, յետոյ՝ զայն ապագրողին աշխատութիւնը : Գիրք մը յղանալ, մտածել և գրել լուրջ ու դժուարին աշխատութիւն մըն է. քանզի մարդ ատոր մէջ պիտի դնէ իր անձին լաւագոյն մասը, իր հոգին : Գիրք մը որ հանրօգուտ բովանդակութիւն ունի, կրնայ ահագին բարիքներ առաջ բերել : Ուրեմն, աղտո՞ք, դուք խորին երախտագիտութիւն կը պարտիք ամէն անոնց, որոնք կը խորհին, միտք կը յօգնեցնեն և օգտակար գիրքեր կը պատրաստեն ձեզ ազատելու համար ազիտութեան չարիքներէն :

Թելադրութիւն. — Գարդալ եւ ուղղագրել այս հատուածը ուսուցչին թելադրութեամբ :

ՀՐԱՆՈՒՄ

288. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը եւ նախադասութիւններն իրարմէ զատեցէ՛ք ուղղահայեաց գիծերով. յետոյ բերանացի որոշեցէ՛ք նախադասութեանց տեսակները (պարզ, բարդ, վեղչիակ, վեղչելով՝ բարդ նախադասութեանց վերածեցէ՛ք :

289. — Հետագայ պարզ նախադասութեանց վերածեցէ՛ք. **Հաւասարիմ շունը արիարար կը հայածէր յարձակող գաղտը. — Եգիպտոսի մէջ սասիկ սով պատահեցաւ Յովսէփի օրով — Ահաւոր շարժ մը ֆանդեց բազմաթիւ տուներ — Բոլոս փոքրիկ Տիրանը հիմա մեծ մարդ եղաւ. — Փրփրեռան ձիւն ֆառասմբակ կ'արշաւէ դաշին մէջ. — Աղամանդը, ֆա երուն անկեկէ քանկազինը, պարզապէս բիրեղացած ամուխ է :**

Օրինակ. — Շունը կը հայածէր գաղտը :
ընդլայնեցէ՛ք որքան որ կ'ենար

Վարդը ծաղիկ է. — Բահանան պատարագից — Դեղմանիկը մեռաւ. — Երկինքը մրազնեցաւ. — Նաւը խարխալ նետեց. — Եղբայրս պիտի մեկնի. — Զարագործը պատիժ կը կրէ :

Օրինակ. — Մեր բաղին ֆահանան անցած կիրակի պատարագեց Մայր Եկեղեցիին մէջ :
291. — Հինգական պարզ եւ բարդ նախադասութիւններ կազմելով գրեցէ՛ք :

292. — 287րդ եւ 290րդ հրահանգներու լուծումը կատարեցէ՛ք :

293. — 289րդ հրահանգին պարունակած բառերուն միայն բառազմեցումները կատարեցէ՛ք (այսինքն բառերուն տեսակները որոշեցէ՛ք) :

ԴԱՍ. — ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՒ ՅԱՏԿԱՑԵԱԼ

345. — Յասկացուցիչ կը կոչուին այն սեռական հո-
ւովները որոնք բանի մը որու վերաբերիլը, երբեմն ալ
սեռը ցոյց կուտան. օրինակ՝

Մերոսպին գիրքը, որո՞ւն գիրքը, — Մեարոսպին (յատկց)
Այծի մորթի, ի՞նչ բանի մորթի, — այծի (յատկացուցիչ) :

346. — Յասկացեալ կը կոչուին այն անունները որոնց
որու վերաբերիլը կամ սեռը ցոյց կուտայ յատկացուցիչը.
Վերի օրինակին մէջ գիրքը, մորթ յատկացեալ է :

347. — Յատկացուցիչը սովորաբար յատկացեալէն
և անոր անական վերադիրներէն առաջ կը դրուի. օրինակ՝
Աղբիւրին վճիա ջուրը :

ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ

294. — Հետեւեալ անուններուն բով մէյմէկ յարմար յատկա-
ցուցիչ դրէք.

Մութ, պատեան, խեցի, փետուր, սեռ, մուշակ, բաշ, աղ-
ուանագ, վարս, խոպրպիս. — Դուն, ցուռ, կնճիթ. — Մագիչ, բար,
ճիւղան մեռք :

Օրինակ. — Այծին մորթը :

295. — Հետեւեալ անունները իրրեւ յատկացուցիչ գործածելով
անոնց բով մէյմէկ յարմար յատկացեալ դրէք.

Կամ, երեակալութիւն, զգացում, խիղճ, բար. — Անի, ալի,
արծիւ, նեռ, մայն. — Երկին, անդունդ, սևապատ :

Օրինակ. — Կամիսն գորտութիւնը, անխիղճ բարարութիւնը, ելն :

296. — Հետեւեալ բարերուն մէջ անականները գոյական յատ-
կացուցիչի վերածեցէք, օրինակին պէս.

Աշխարհային կեանք, մարտ խաւարում, առօրեայ սևունդ,
գրամական սագնայ, մայրական սեռ, սոսկին սննտութիւն, ծովային
արկած, շնունային ճամբայ, անտեսային պտուղ :

Օրինակ. — Աշխարհի կեանք :

297. — Հետեւեալ բարերուն մէջ գոյական յատկացուցիչները
անանցեալ անականի վերածեցէք.

Բոյսի կեանք, եկեղեցիի օրեակ, սասանայի որոցար, երկինքի
կարգից, հոգի բերք. մարտիկի շնորհ, ծովու արկած :

Օրինակ. — Բուսական կեանք :

298. — Հետեւեալ բարերուն մէջ անականները անունի եւ ա-
նունները սեռական յատկացուցիչի վերածեցէք, օրինակին պէս :

Մութ բան, փայլուն աղանակ, խիս սեռեւ, վսեմ սեւաբան,
բարս վերջալոյս, սասիկ յերմութիւն, առաջու խանապատ, կրովի
բազուկ, գորկ բան, անունի միտք, սկար յիշողութիւն, զով գարուն :

Օրինակ. — Բանի սրտութիւն :

299. — Հետեւեալ բարերուն մէջ շեղազիր գոյականները ա-
ծանցեալ անականի փոխեցէք եւ սեռականները ուղղականի, օ-
րինակին պէս.

Ծաղկի հոս, կերակուրի բուր, հագուստի սոյս, փողոցի ցեխ,
միտք ոյծ, պտուղի համ, իրան ապարած, անտառի մացառ, աղի
համ, ծառի խեծ, դպրոցի մակունկ :

Օրինակ. — Հասակի ծաղկի,
300. — 298րդ նրանցի վերականգնելու գոյականներուն բով մէյմէկ
յատկացուցիչ դրէք.

Օրինակ. — Բաղասին մութ բանը, ծառին խիս սեռեւը, ելն :

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԵՌԻՇՆԱՆ ՈՒ ԹԻՐԵՆՆԻՍ

«Սա թեւերուս նաշխուն, նրբին
«Վառ երանգներն ինչ աղուոր են...».

Կ'ըսէք սպիտակ շուշանիկին
Թիթեանիկ մը հըպարտօրէն.

«Տե՛ս, ինչ նուրբ են, ինչքան փայլուն,
«Անոնց վրայ շէ՛ս հիանար դուն...».

Շուշանն ըսաւ. — «Անա՛րդ ճըճի
«Հըպարտութիւնդ այդ մեծախօս

«Բու մէջդ ինչո՞ւ, ինչպէս կ'աճի.
«Մոռացա՛ր թէ դեռ երէկ իսկ հո՛ս.

«Իրբեւ որդ մը անչա՛ն, գազիր
«Տեխին վրայ կը սողայիր» :

Թարգմ. Ա. Փ.

Թեւադրութիւն. — Իոց արտասանել այս ոտանաւորը. գրա-
ւորապէս արծակի վերածել զայն, բացատրել բարոյականը.

ԴԱՍ. — Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր

348. — Խնդիր կը կոչուին նախադասութեանց այսու այն մասին իբրև լրացուցիչ ծառայող հոլովեալ անունները որ չորս տեսակ են. սեռի խնդիր, բնութեան խնդիր, պարագայական խնդիր, և լոկ խնդիր:

349. — Սեռի խնդիր կը կոչուին ներգործական բայերու յատուկ լրացուցիչները որ հայցական հոլով են և զո՞վ կամ ի՞նչ բանը հարցման կը պատասխանեն օրինակ՝ Մարդը տեսայ. — խնձոր կերայ, ևն.:

350. — Բնութեան խնդիր կը կոչուին բայերուն այն գոյական լրացուցիչները որ սրական, բացառական, գործիական կամ պարագայ ցուցնող հայցական հոլով են. օրինակ՝

Համբերէ՛ նեղութեան, կամուրջին անցայ. նառով ճամբորդեցի. տուն պիտի երթամ, ևն.:

351. — Պարագայական խնդիր կը կոչուին նախադրութեան մը սիւսցած հոլովեալ անունները՝ նախադրութեան հետ միասին, որ բայերու կամ ուրիշ բառերու լրացուցիչը կ'ըլլան. օրինակ՝

Քրոջս ինչ կեցայ. ծովու վրայ կհանքը հաճելի է, ևւայն.:

352. — Լոկ խնդիր կը կոչուին նախադրութեանց բացուցիչները, ինչպէս նաև բացի բայերէ՝ ուրիշ տեսակ բառերու իբրև լրացուցիչ ծառայող հոլովեալ անունները (սրական, հայցական, բացառական, գործիական). օրինակ՝

Ծառին տակ, կենդանիներէն ումանք, ձողիով աղքատ արշաղոյսէն կ'եսուխ, վա՛յ կեղծու որներուն, ևն.:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

301. — Հետևեալ նախադասութիւններուն պարունակած խընդիւրները ստորագծեցէք եւ անոնց տեսակները որոշեցէք բնութեանցից. — Մի վստահիք հարստութեան, չքամով ամեն բան մեղք չի բերուիր. — Մշակը ցորենի փայտէն արտաբերեալ խնդիրները — Մեկի գեղ գնացիմք — Յակոբ գովեստի արժանի հանդիսացաւ իր քարի վարձով — Առողջութեան զուրկ մարդը կը հանցնայ անոր յարաբարի վարձով — Մարմնով հիւանդ մարդը մեղքով ալ սկստ կ'ըլլայ. — Հայկը շաբար շատ կը սիրէ, խաղերէն կ'ախորժի. — Մեկի ազգով Հայ, հարստով իրիւսունեայ եմք. — Շատ բշտաւունք կան օրունակ հացի կարօտ. —

302. — Հետևեալ նախադասութիւններու պակասները լրացուցէք յարմար խնդիրներով.

Ահա ի և բնութեան խնդիրով լրանայի. — Մշակը արժանի է իր (ի՞նչ բանին) — Այժմ ու ոչխարը (ի՞նչ կ'ունեն) — Պոչոս անասնաբանը փարձեց (որո՞նց). — Յովսէփի գեղեցիկ ծախսուեցաւ իր (որո՞նց մե՞ք). — Յիսուս որո՞ցունք մեզ (զո՞վ). — Բաւիլի կը փչէ (որո՞նց). — Հիւանդը կը բուժուի (ի՞նչով). — Հարագործը չի կրնար խառնափիթ ընդմիջ արդարութեան (ի՞նչ բանէն):

Պարագայական խնդիրով լրանայի. — Եղի սապակը հանգնեցաւ (որո՞նք վրայ). — Յիսուս ծնաւ (որ՞ տեղ). — Աստուծ Աղաթը վտարեց (որո՞նք դուրս). — Հարստը մեղք է (տեսնե՛ք ինչո՞ւ). — Յիսուս խառնեցաւ եւ մեղք մեր (ի՞նչ տեսնե՛ք համար). — Երկիրը կը դառնայ (ի՞նչ բանի շուրջ):

Լոկ խնդիրով լրանայի. — Եսայի մարդը ի վերջոյ (ի՞նչ բանի) կարօտ կը մնայ — Մեծաշնորհը կը գտնուի (ի՞նչ բանի) տակ. — Յիսուս երանի կարգաց (ի՞նչ բանով) աղջակներու. — (Որո՞նք մե՞ք) միև մուշա մասնեց Յիսուսը. — Մոլի մարդը դէպ ի (որ՞ տեղ) կը դիմէ. — Միամիտ եղիք (ի՞նչ բանի) պէս:

ԴԱՍ. — ԲԱՅԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՅԱՅԱՅՏԵԱԼ

353. — Բացայայտիչ կը կոչուին այն գոյականները որոնք ուրիշ գոյականի մը քով կը դրուին, անոր ո՛վ կամ ինչ ըլլալը բացատրելու համար. օրինակ՝

Պօղոս առաքեալ, Մասիս յետ, ևն.:

354. — Բացայայտեալ կը կոչուին այն բառերը որ բացայայտիչով մը բացատրուած են: Վերի օրինակներուն մէջ Պօղոս, Մասիս բացայայտեալ են:

355. — Բացայայտիչը երբոր միակ բառ մը ըլլայ, սովորաբար բացայայտեալն ան փոփոխ կը մնայ և բացայայտիչը կը հոլովուի ու յօդ կ'առնէ. օրինակ՝

Սաղմունները գրուեցան Գուրիթ մարգարեին ձեռքով:

356. — Բացայայտիչը երբոր ունենայ իր հետ լրացուցիչ բառ մը, այն ատեն բացայայտեալն ալ բացայայտիչին հետ համաձայնելով կը հոլովուի, ի հարկին յօդ կ'առնէ և ստորակէտով կը բաժնուի անկէ. օրինակ՝

Մովսէս Իսրայելացիները հանեց եզիպտոսէն, Փարաոններուն երկրէն:

ԿՈՉԱԿԱՆ

357. — Կոչական կը կոչուին այն անհոլով անունները որոնք անձերու կամ անձնաւորեալ իրերու կ'առչուին. օրինակ՝

Ա՛ստուած, որդի՛մէ մեզի. — Լո՛ւէ՛, Ե՛րկիր ևն.:

358. — Կոչականը նախադասութեան մէջ առանձին չի բռնուիր ունի և երբեմն կ'ունենայ լրացուցիչ ալ. օրինակ՝

Բարի՛ մարդ, օգնէ՛ ինձի, ևն.:

359. — Կոչականն իր լրացուցիչներով միասին նախա-

դասութենէն կ'անջատուի ստորակէտով և շեշտ կ'առնէ, այնքան եթէ իրմէ առաջ լրացուցիչ ունի՝ լրացուցիչը կը շեշտուի. օրինակ՝

Մի՛ մտնար զիս, սիրելի՛ բարեկամ, ևն.:

ՀՐԱՀԱՆՆԵՐ

303. — Հետեւեալ գոյականներուն քով զրէք անոնց ո՛վ կամ ընդ ընտրեալ ցույնող յարմար բացայայտիչներ. Գանգես, Գոյուկոս, Վաղարշապատ, Արեւաս, Հրաս, Պարոյ, Սեփականոս, Կիպրոս, Երեստարդարթան, աշուն, առիւծ, վարդ:

Օրինակ. — Գանգես գետը առիւծը, կենդանիներու իշխանը: 304. — Հետեւեալ բառերուն մէջ որոնք բացայայտիչ են, որոնք բացայայտեալ, քերանացի որոշեցէք.

Պարթիկ ծովը — Իսլանտա կղզին. — Եղիշէ պատիւր. — Այս-Սօփիա կղզիքը. — Հոռո, Իսալիոյ մայրաքաղաքը. — Աքրամար, Իսրայելի ևս-Քարունը, ծաղիկներու եղանակը. — Երեստարթան, կենսական անոնք. — Իսրայելի կղզիք, անստաներու իշխանը. — Ամբիծ շուշանը, խորհրդանշանն անկեղութեան:

305. — Հետեւեալ նախադասութիւններու մէջ գտնուած բացայայտիչ — բացայայտեալները՝ մէկ զիմով, կոչականները՝ երկու զիմով ստորագծեցէք.

Ս Գրիգոր, Հայոց յուսարիւնք հիւնեց էջմիածինը. — Սիրելի մարդ կը ձանկարէ արդեօք հօրեղբորդիս՝ փոքրիկ Գրիգորիկը. — Ո՛վ մարդ դուն ինչ գ' անկցիր Ո՛վ Տէր, զի՛ ան ողորմութեան, ողորմէ մեզաւոր ծառայից. — Լուեցէ՛ք, մերիկներ, հանդարտե՛ք, ծով, եւ մեր անապը թող հանդարտե՛ն ասիի շուշանը նախադասութիւնները բացայայտիչներու վերածեցէք օրինակին պէս.

306. — Հետեւեալ խօսքերուն վերածեցէք օրինակին պէս. Գանգիս որ մարգարէ մըն էր, առիւծներու գութը անուանեցաւ. — Լուսնն որ Անգլիոյ մայրաքաղաքն էր, աշխարհի անկեղեկութեան արդարեւոք նշանն էր. — Յիսուս որ աշխարհի փրկիչն էր, յաւանքեալ մեծ էր. — Երեստարթան որ համեստութեան խորհրդանշանն էր, իր սերունդներուն ակ ինկնել կը ծածկէ: Օրինակ — Գանգիս մարգարէ առիւծներու գութը անուանեցաւ:

ԴԱՍ.— ԱՆՈՒՆՆ ԻՐԲԵԻ ԱՍՏԱԿԱՆ

360.— Անուններն ինչ ինչ պարագաներու մէջ կրնան
ածականաբար գործածուիլ ըլլա՛յ ուրիշ անունի մը քով
ըլլա՛յ իրբեւ ստորագելի. օրինակ՝

Կարգ մը առններ, ճեսակ ճեսակ բոյսեր, շիշ մը
գինի, շաքար իրիկուն, ծաղիկ հասակ, այս ծաղիկը
վարդ է, ևլն:

361.— Անուններու սեռական և գործիական հոյով-
ները՝ իրբեւ գոյականի մը լրացուցիչը, ել բնին ածականի
իմաստ կուտան երբոր ինչպիսի, ինչքան հարցումներուն
պատասխանեն. օրինակ՝

Երկրորդ կարգի տոմսակ, մէկ աչքով մարդ, եօթն
օրուան գործ, ևլն:

362.— Անուններու նոյն հոյովները՝ ածականի ուժով,
կրնան նաեւ ստորագելի ըլլալ. օրինակ՝

Այս աղան երկու սարուան է, հաւը երկու ոսկով
է, (երկամեայ, երկոսանի ըսելու տեղ):

ՀՐԱՀԱՆԿՆԵՐ

307.— Հետեւեալ խօսքերուն մէջ ածականաբար գործածուած
անունները որոշելով ստորագծեցէք.

Գինեպանը սառը սակաւ գինի գնեց. — Մեր պարտեզին մէջ
չաօ ճեսակ ծաղիկներ կան. — Այդ գործը հինգ օրուան աշխատանքի
կը կարօտի. — Սա երեք շաբաթ տեւելու մեր տնակն է. — Երախան մեկ
ստուան եղաւ — Արհեստը ոսկի ապարանջան է. — Կիրակի գիշերուան
հանդիսը փայլուն էր. — Գաւառը մը շուր տուր ինձի. — Գարուն կեանք
մըն ալ բաւականացաւ. — Մակոյիդ վեց բիով էր. — Այդ մարդը անգուր
է, քար սիւր մը ունի. — Այս մանուկը ինչպէս ծիծիտ ունի. — Խաւով
պանը քան կանգուն կերպսու ծախեց:

308.— Հետեւեալ շեղագիր բառերը ամանցեալ կամ բարդ
ածականի վերածեցէք.

Երեկ կայմով շոգեկաւ. — Յագում Եհանի կերպաներ. —
Ուր ծաղկով մասեան. — Չորս օսկով կենդանի — Սաւաթին
կարգի բժիշկ — Տասը սարուան շրան. — Վեց ամնուան

Երախան. — Եօթն անկիւնով աւազան — Արծաթ գրիչ. — Եւ-
րոստան անբոնքիւն. — Կոյս երես — Հինգ սարուան մանուկ. —
Կապանացի սիւր — Մէկ աչքով մարդ:

Օրինակ — Եռակայմ շոգեկաւ:
309.— Հետեւեալ բառերուն մէջ շեղագիր անունները ամա-
նանի ոյժ ունեցող գոյականի վերածեցէք օրինակին նման.

Արցունքի օր, անձրեւի կարիւր, հացի կաղիկն, ձմեռակի
օր, աղի պղզուց, ապուխտի փերթ, սխտրի պնդ, շուրի
պուր:

Ծաղիկի փունջ, օղիի օր, հասկի խուրճ, բանալիի արցակ,
կարգաւի ծրար, գարիի դէզ, յարդի օնդ, հողի կոյս, բուրդի
պրակ, գիրի հասար, մարգարիտի օտաբ, զինուորի գունդ, փայտի,
քն, խոտի օսյլ, ամուխի պարկ:

Օրինակ — Եիք մը արցունք, փունջ մը ծաղիկ, ևլն:
310.— Վերի 307րդ հրահանգին նախադասութիւնները լու-
ծեցէք:

ԱՐՏՍԱՆՈՒԹԹԻՆ.— ԱՌՈՒՍԿԷ

Արծաթափայլ վճի՛տ առուակ,
Յառաջ կ'երթաս դուն շարունակ,
Ափըդ կեցած կը խորհի՛մ ես,
Ուրկէ՞ կուգաս, ո՛ւր կը դիմես:

— Մուրժ ժայռերու ձոցէն կուգամ,
Մազկի, խոտի վրայ կ'ընթանամ,
Ի՛մ հայելիիս մէջ՝ յամբերեր
կը ծրփայ լուրթ երկնապատկեր:

Այսպէս զըւարթ տղու հանգէս,
Կ'երթամ առաջ թէ ո՛ւր, անգէտ,
Ա՛ն որ քարէն զիս բխցուց
Կ'ըլլայ անշուշտ ինձ ուղեցոյց:

Քրգմ. Ե. Տ. Յ.

Թելագրութիւն. — Գոց արտասանել այս ոտանաւորը, բա-
ցատրել բառերը, ուղղագրել նոյնը:

ԴԱՍ. — ՊԱՐԱԳԱՅ ՑՈՒՑՆՈՂ ՀՈՒՆԵՐ

363. — Անուններու զանազան հոլովները երբեմն կը գործածուին մակբայի իմաստով և պարագայ ցոյց կուտան. Հոլովներու այսօրինակ կիրարկութիւն տեղի կ'ունենայ հետեւեալ պարագաներու մէջ.

1. — Տեղ ցուցնող անունները հայցական ձևով կը գործածուին, պատասխանելով ո՛ր հարցման. օրինակ՝ Լեւոն դպրոց գնաց:

2. — Չափ, ճամբայ և տեւողութիւն ցուցնող անունները նոյնպէս հայցական կը գործածուին պատասխանելով ո՛րչափի հարցման. օրինակ՝ Նաւը տասը մղոն ճամբայ առաւ, փիղը չորս դար կ'ապրի, ևն:

3. — Ժամանակ ցուցնող անունները հայցական, տրական, բացառական և գործիական ձևերով կը գործածուին պատասխանելով ե՞րբ, ո՛րչափի ասեմ հարցումներուն. օրինակ՝ Այս արևոտ պիտի ճամբորդեմ. Ժամանակիկ հասաւ. այս գործը մէկ ամիսէն կը լրանայ. օրերով պատեցի, ևն:

4. — Անուններու գործիական հոլովը մակբայական իմաստ ունի նաև երբոր պատասխանէ ի՛նչպէս հարցման. օրինակ՝ Իմաստութեամբ շարժեցաւ, տխուր դիմելով կը հառաչէր, ևն:

364. — Պարագայ ցուցնող հոլովները բնութեան խնդիր են բայի:

ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՀԶՕՐԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Գայլը յափշտակեց գառնուկ մը և ուրախ զուարթ կը տանէր ապահով տեղ մը նախաճաշիկ ընկու. Ճամբան անտառին մէջ հանդիպեցաւ առիւծինոր գայլին ճի-

բաններէն խեց որսը և սկսաւ ինք լափել զայն: Գայլը մէկ կողմ քաշուած և առիւծէն բաւական հեռու կանգնած՝ սկսաւ աղիողորմ ոռնալ և կողկանձել, դունչը շէպի երկինք ցցած: «Այդ ի՞նչ կ'աղաղակես» հարցուց առիւծը գայլին: — Գայլը պատասխանեց. — «Ես գէպի երկինք կ'աղաղակեմ և կ'ըսեմ որ զօրաւորները սկարներէն չեն վախնար ու չեն ամչնար, այս ի՛նչ արդարութիւն է»: — Ինչո՞ւ այդ բանը չխորհեցար երբոր գառնուկը կը յափշտակէր» պատասխանեց առիւծը և հարցարտօրէն վերջացուց ձայր: Թեւադրութիւններ. — Կարգալ և ուղղագրել այս հատուծը, բացատրել առական նիւթը և բարոյականը.

ՀՐԱ. ՀԱՆՑՆԵՐ

311. — Հետեւեալ խօսքերուն պարունակած պարագայ ցուցնող հոլովները որոշելով ստորագծեցէր. Իրիկուան մեզի Յիսուս երուսաղիմ մտաւ ովսանեակներով — Իրիկուան մեզի պիտի գամ. — Խաղողը կը խաղողէ ևն. — Իրիկուան մեզի Յիսուս երուսաղիմ մտաւ ովսանեակներով — Եղբայրս Բարիկ մեկնեցաւ. — Գայ ասիս պիտի գամ. — Քահանան գրուիլ դրաւ աղաւաթը. Բոլոր գետերը ծով կը բափին. — Անցեալ օրի տվ պատեցաւ. — Մեկ կես օրին կը ձաշեմ. — Քանի մը խաղ առաջացիր. — Ես ճամբայ խաղեցի. — Գողթոյ բոլորները Մարտին կ'ուզան, Օգոստոսին կ'երթան. — Չսեղ գրիլ մեկնեմ առաւ. — Չուարս արտով վայելեցի կեանքը. — Վահան գիշեր ցորեկ կ'աշխատի. — Մամիկը երկաշարութեամբ կ'աղօթէ:

312. — Հետեւեալ խօսքերուն շեղագիր պարագայ ցուցնող գործիականները ամանցեալ կամ բարձր մակբայներու վերածեցէր օրինակին պէս. Խոհեմութեամբ գործեցի. — Չարուհի սխալը դեմով կը հարկէր. — Արեւը պաշտառութեամբ ճառագայթեց — Չակցակը ուժովութեամբ կը հեյր. — Միտան ծուլութեամբ ժամանակ կը վաճէ. — Սուր միտով ընթացեցի մեր դասերը. — Առուակը արագ բերանակով կը հոսի. — Պարտիկ բաղնիկաւորութեամբ վարուիլ սակեմ հետ: Թրիակ. — Խոհեմութեամբ գործեցի. — Չարուհի սխալը կը հառայր:

313. — Վերի 311 հրահանգին նախադասութիւնները լուծեցէր գրաւորապէս.

ԻԱՍ. — ՅՕԴԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

365. — Անուաներու գործիական հոլովները թէ՛ եզակիի թէ՛ յոգնակիի մէջ որոշիչ յօդ չեն առներ. օրինակ՝

Այս գործով կ'ըսուի, փոխանակ այս գործովը ի:

366. — Թիւն վերջաւորող և օր բառին հետեւող, ինչպէս նաև անկանոն հոլովում ունեցող անուանները ո՛չ միայն գործիականի, այլև եզակի սեռականի, տրականի մէջ ալ որոշիչ յօդ չեն առներ. օրինակ՝

Երէկ գիշերուան հրդեհը. — Այս կնոջ որդին. —

Մենք շատ բան կը պարտինք գիտութեան:

367. — Անուն մը երբ յօդ ունեցող յատկացուցիչ ունենայ, դիմորոշ յօդ կ'առնէ անխտիր ամէն հոլովի մէջ ալ. օրինակ՝

Գիտունին աշխատութեամբը, Երուանդին քրոջը:

368. — Յուցական ամականներուն ընկերացող գոյականները որոշիչ յօդով կը գործածուին ընդհանրապէս, բացի գործիական հոլովէն և հոլովական այն ձեւերէն ուր գոյականը յօդ չառներ. օրինակ՝

Այս գիրքը, նա այգիին, այն օրուան, սա կնոջ:

369. — Անորոշ ամականներուն ընկերացող գոյականները որոշիչ յօդ չեն առներ յետագայ բացառութիւններէն զատ.

1. — Նոյն, միեւնոյն, միւս, մեկաշ, այսինչ, այդինչ, այնինչ ամականներու գոյականներն անպատճառ որոշիչ յօդ կ'ուզեն. օրինակ՝ Լոյն մարդը, միւս գրիչը և ին:

2. — Որ, առանկ, աղանկ, անանկ, այնչափ, այդչափ, այնչափ, այսպիսի, այդպիսի, այնպիսի, բոլոր ամականներուն գոյականները ո՛չ միշտ՝ այլ պարագային համեմատ որոշիչ յօդով կը գործածուին. օրինակ՝ Ո՞ր տունը կը կենաք, ո՞ր սիրտ կրնայ դիմանալ, և ին:

370. — Յատուկ անուանները՝ բացի հայցականէն և անուաններ, միւս հոլովներու մէջ սովորաբար յօդ կ'ա՛մ յատկացուցիչի մը ընկերացած են. օրինակ՝

Գոլոմպոս գառա Ամերիկան, վաղեմի եգիպտոսը, Պաղեստինի կեսարիան, և ին:

371. Ընտանեկան լեզուի մէջ յատուկ անունները առ հասարակ յօդով կը գործածուին. օրինակ՝

Մարին եկաւ, իստէ՛ վահանին որ գայ ևն:

ՀԲԱ. ՀԱՆԿՆԵՐ

314. — Հետագայ նախադասութեանց մէջ յօդի գործածութեան սխալներ կամ պակասներ եթէ կան, ուղղելի՛ք կամ լրացուցէ՛ք եւրոպան մին է աշխարհի ձիւց մտերեւն. — Ասանկ կենսի վախճանը գեշ կ'ըլլայ — Բոլոր գիւղ իրար անցաւ. — Այդպիսի մարդուն հանդիպած լիի. — Այն մտնուանը ցուրտը սաստիկ էր. — Ոստակի աւելի տուր. — Բոլոր աշխարհը լուց այդ դեպք. — Միւս կողմէ զսնն աշխիւն լիւս կը կրկնու. Այնպիսի եղբորսին գրկուեցաւ. — Միշտ Լոյն ծոյր ես. — Ես ուղղութեամբը առաջ գնա՛ եւ պիտի ազատեցանք Աստուծովը. — Յիսուսը մկրտուեցաւ Պաղեստինի Յորզանէի մէջ. — Ո՛ր խեղճը կը սանի այս անգործները. Այս ամիսէ վերէ մեկաշ տուն պիտի բնակիս. — Որիչը խոյնը մօր սիրտն է: Եկաւ եւ հետը խաղացիս. — Սիրոյն բոյնը մօր սիրտն է: Նշանակուած

315. — Հետեւեալ անուաններէն մէյ մէկ հաստ, գոյականներուն ալ կցելով մէյ մէկ որոշիչ յօդ, եթէ յօդ կառնեն.

Այս, այդ, այն, սա. Ժամանակի ի վեր, մարդու բնական, ինքան: Երան, ամէն, ասանկ, ինչ ինչ. — Խօսք, օրուան, աղչան, կենդանի, քաղաքիւն, միլիոններ: Մէկաշ, միեւնոյն, այնինչ, ուրիշ, այդպիսի. — Եղբոր, դասի մէջ, պաշտօնեայ, ծաղիկ, անդուքեան:

ԳԱՍ. — ՅՕԴԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ (շար.)

379. — Ստացական անականներուն ընկերացող գոյականները, ինչ հոյով ալ ըլլան, դիմորոշ յօդ կ'առնեն հետեւեալ կերպով.

Իմ ստացական անականին գոյականը կ'առնէ ւ յօդը. օրինակ՝ իմ տունս:

Քու ստացական անականին գոյականը կ'առնէ դ յօդը. օրինակ՝ քու տունդ:

Իր, անոր, վեր, ձեր, իրենց, անոնց ստացականներուն գոյականը կ'առնէ ը կամ ն յօդը. օրինակ՝ իր տունը, մեր այգին, եայն:

373. — Դիմորոշ յօդերէն ւ կը գործածուի նաև երբեմն ցուցական այս նշանակութեամբ. օրինակ՝

Աշխարհիս վրայ, փոխանակ ըսելու՝ այս աշխարհի վրայ:

374. — Ս. դ յօդերը քիչ անգամ կը գործածուին նաև անձնական դերանունի իմաստով, ւ առաջին դէմքի, դ երկրորդ դէմքի համար. օրինակ՝

Ես՝ տրուպս, դուք՝ քահանաներդ, մեզի՝ աշխարհականներուս, ևն:

ԸՆԹԵՐՅՈՒՄ. — ԹՈՒՉՈՒՆԻՆ ԲՈՅՆԸ

Թուչունի մը բոյնը շատ հեռաքրքրական դասեր կը թելադրէ: Դիտեցէ՛ք, տղա՛ք. թէ մայրը իր ձագերը հանելէ յետոյ՝ ինչ գորովայի գուրգուրանքով կը խնամէ զանոնք: Նայեցէ՛ք, անիկա շարունակ կ'երթայ կուգայ և իր կտուցովը կեր կը բերէ իր ձագերուն: Անոնք ալ հրճուագին ճլուղլուճով մինի՛նիկ գլուխնին կը անկեն եւ կերը կը խնն իրենց մօրը բերնէն: Վերջապէս օր մըն

ալ կը նայիս որ մայրը անսովոր ոգեւորութեան մէջ է, բոյնին շուրջ կը դառնայ, կը թեւարտէ, և բերնի մէջ կերի խայծ մը բռնած՝ կարծես թէ բոյնէն դուրս կը կանչէ իր ձագերը: Ձագուկներն ալ կ'ոգեւորուին, նախ՝ բոյնին մէջ կ'սկսին իրենց թեւերը շարժարկել, վերջապէս իրենց մօրը շարժումներէն խրախուսուած, նոյնքան ալ հրապուրուած անոր բերանի խայծէն, բոյնէն դուրս թռչելու իրենց առաջին փորձը կ'ընեն:

Մայր թուչունը այդ օրը կը լրացնէ իր մայրական վտեմ պաշտօնը որովհետեւ իր ձագերը թոցուց:

Թելադրութիւններ. — Կարդալ այս հատուածը, ուղղագրել նոյնը, բացատրել դժուարին բառերը, եզրակացնել բարոյականը:

ՀՐԱՆԱՆԳՆԵՐ

316. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը, ստորագծելով բոլոր գոյականները, յետոյ բերանացի որոշեցէ՛ք անոնց պաշտօնները:

317. — Հետեւեալ նախադասութեանց մէջ ստացական անականներուն ընկերացող անուններուն կցեցէ՛ք պէտք եղած դիմորոշ յօդերը.

Իմ եղբայր հարուստ չէ. — Մեր տուն շատ հեռու է. — Իմ դասու կը վասնեն: — Ձեր տեսիլներու մաքրութեան հոգ արեւի. — Իր կեանքի մէջ ցաւ կրած չէ. — Անոր օգնութեամբ ազատեցանք այս փորձակները. — Մեր շակոյ կասարուեցաւ անոնց գործ. — Քու հայր ո՛ր գնաց:

318. — Հետեւեալ նախադասութիւններու մէջ գործածուած դիմորոշ յօդերուն ինչ նշանակութեամբ (ցուցական, ստացական թէ անմնական) գործածուած ըլլալը որոշեցէ՛ք բերանացի

Մարդս անէն ըսակէ շուտով կը ձանձրանայ. — Երասես շինեցի այս գործիքը. — Աշխարհիս վրայ կասարեալ հանգստութիւն չկայ. — Անկէ տեղ լափոյ ձանցիք. — Ձեզի՛ մանուկներուդ կը վայելէ հնազանդի ձեր ծնողիկն. — Ես՝ Գրիգորս կը խոստովանիմ քերութիւնս. — Ստորագրեալս կը հաստատեմ ճշմանս. — Երկրիս մօտաւորագոյն մտրուակը Հրասն է:

319. — Վերի հրահանգին նախադասութեանց լուծուածը կատարեցէ՛ք:

ԳՍՍ. — ԱՆՈՒՆԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

385. — Անունին իբրև վերադիր կամ լրացուցիչ կրնան ծառայել բոլոր անականները. օրինակ՝

Կարմիր վարդ, ամեն տուն, այդ տղան, և չն:

376. — Անունին լրացուցիչ կրնայ ըլլալ նաև ուրիշ անուն մը կա՛մ իբրև յատկացուցիչ, կա՛մ իբրև բացառայտիչ, կա՛մ իբրև անականաբար գործածուած գոյական, կա՛մ իբրև խնդիր. օրինակ՝

Կասի անիւ, Ներսէս կաթողիկոս, վարդ շրթունք, մէկ օրուան կեանք, չորս ձիով կառք, և չն:

377. — Դարձեալ անունին լրացուցիչ կրնայ ըլլալ պարագայական խնդիր մը. օրինակ՝

Առանց ջուրի աղբիւր, դեպի մահ վազք, շերան ասկ ճամբայ, և չն:

ԱՆՈՒՆԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

378. — Անունը լուծելու համար պէտք է որոշել.

1. — Տեսակը, այսինքն յատուկ թէ հասարակ ըլլալը

2. — Թիւը » եզակի թէ յոգնակի լինելը.

3. — Հոյովը.

4. — Յօդը, եթէ ունի.

5. — Նախադասութեան մէջ ունեցած պաշտօնը, այսինքն՝ տէր բայի, սեռի խնդիր, բնութեան խնդիր, խնդիր, յատկացուցիչ, բացայայտիչ, կոչական, ստորոգելի կամ անականաբար գործածուած գոյական ըլլալը:

ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ

320. — Հետեւեալ գոյականներէն իւրաքանչիւրին բով դրէ՛ք երկերկու որակական ամական վերադիր-լրացուցիչներ.
Հանդես արկած, աղօթք, երաժշտութիւն, գեղեկութիւն, փաստ, հոսանք, յոճուակ, ուրուական, կիրք, պատրաստ:

Օրինակ. — Փայլուն, շեղ հանդես:
321. — Հետեւեալ գոյականներէն իւրաքանչիւրին բով դրէ՛ք երկերկու յատկացուցիչներ.
Կտուցք, գրասիր, յասակը, թեզակիք, ձգողութիւնը, կատար, շքանք, թողարտակիք, շեշք, ցոյք, ներդաշնակութիւն:

Օրինակ. — Արագիլին, բազկին կտուցք:
322. — Հետագայ գոյականներուն բով դրէ՛ք պատշաճ բացայայտիչներ.
Ս. Սահակ, Հովերոս, Իրոկրաս, Ս Սեպեանոս, Գարեհակ, Երուսաղիմ, Արեւնա, Վարդան, Լուսինը, Ժանախոյր:

Օրինակ. — Ս. Սահակ, Ասուածաշունչի բարգնակիչը:
323. — Հետագայ նախադասութիւններուն մէջ ստորադնեցէ՛ք այն բառերը որոնք գոյականի իբրև խնդիր լրացուցիչ ծառայած են.

Եիմքանգին տեսակ մը կապիկ է — Օրհնէի հակառակ շնորհքը կը պատճուի. — Եղբայրս շիշ մը գարեջուր խմեց — Մեկ շարքուան աշխատութիւն կը բաւէ այդ գործին. — Չարիքի դէմ բարիքը վեհանձն մարդոց գործ է. — Մեկէ իբրև նախաձայ կարով սուրճ կը խմենք. — Հօրեղբայրս արծաթ գլուխով գաւազան մը ունի — Ընկերութեան հետ մեկիկ կեանքը անործելի է:

324. — Վերի հրահանգին լուծուած կատարեցէ՛ք գրաւորապէս սուրբին կարեցեցէ՛ք օրինակին պէս.
325. — Հետագայ ամական-գոյականներով մէյմէկ նախադասութիւններ կազմեցէ՛ք օրինակին պէս.
Օճապոյտ ճամբայ, կարի մը ջուր, հարիւր տարուան շքան, խելիք վեր երեւոյթ, գոյութեան պայտար, Բոսի նաւապետ, ոսկի երազ, բաշխելով ճամբորդութիւն:

Օրինակ. — Օճապոյտ ճամբաների անցնելով ճամբորդեցիցիք:

ԴԱՍ. — ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՊԱՇՏՈՆՆ ՈՒ ՇԱՐՔԸ

397. — Որակական ամականները հասարակօրէն նախադասութեան մէջ կամ անունի մը լրացուցիչն են կամ էական բային ստորոգելին. օրինակ՝

Կարմիր կեռաս. կեռասը կարմիր է:

380. — Որակական ամականը երբոր գոյականի մը լրացուցիչն է, կը կոչուի վերադիր:

381. — Բոլոր ամականները ընդհանրապէս գոյականնէն առաջ կը գրուին. իսկ երբ գոյական մը մէկէ աւելի ամականներ ունի, ցուցականը՝ անորոշէն, անորոշը՝ թուականէն՝ և թուականը՝ որակականէն առաջ կը գրուի ընդհանրապէս. օրինակ՝

Այդ երկու ընդարձակ տուները, միւս երեք ձիերը, են:

ՀՐԹ. ՀԱՆԳՆԵՐ

326. Հետեւեալ նախադասութիւններուն մէջ ամական վերադիրները՝ մէկ զիծով, ամական ստորոգելիները երկու զիծով ստորագծեցէ՛ք.

Թշնամիին ներքը վսեմագոյն առաջնութիւնն է. — Գեօիկը ծածկուեցաւ ձեփանեմակ ձիւնով — Կապարը ծանր է, բայց ոսկին աւելի ծանր է — Այս հոտը նուազ խորունկ է քան ձերկը. — Երկարը ամենէն օգտակար մեծադն է — Մարդիկ սնչելիքի առողջ միտք կ'ունենան՝ որչափ առողջ մարմին — Ամենամաւր կակները կը գննուին մանրացոյցով. — Գերագոյն վայելիք կրնայ ձաշակուիչ ուրիշին բարիք ընելով. — Ովկիանոսներու խորագոյն սեզունդներուն սեշ այ կենդանիներ կ'ապրին — Կանաչն մարգերուն սեշ երկնեմանց ծաղիկներ կը պսպրային. — Մեր պարեզը աւելի պողպատ է քան ձերկը, բայց Յակոբիկը այնքան պողպատ չէ. — Արեւին էն մօտ մոլորակն է Փայլածուն:

327. — Հետեւեալ ամականները նախ իրեւ ստորոգելի, յետոյ

ձերեւ վերադիր գործածելով երկրկու նախադասութիւն կազմեցէ՛ք.

Հեղուկ, քաղցրահիկ, գորշ, կասաղի, երկակեցաց:

Օրինակ. — Չորը հեղուկ է. — Հեղուկ մարմինները աւելի խիտ են քան կազախները:

328. — Հետեւեալ ամականները նշանակուած անուններուն լրով գրէք պէտք եղած բերականական շարքով

Միւս, ձերմակ, այն, երեք տունը. — Իրոյ միեւնոյն, երկու, այն, հոգաւ. — Օգտակար, որեւէ, հիկ, զիտ. — Անպիտան, սուրբ խորհուրդներ. — Գեղեցիկ, սաւր, ուրիշ ծաղիկներ. — Երկու, սխալ, սա, մարդիկ. — Մոլոր, այդ, համբաւ. — Եօրը, այս, երկու, սխալ, սա, մարդիկ. — Գեղեցիկ, սաւր, ուրիշ ծաղիկներ. —

329. — Օրինակեցէ՛ք հետաւայ ոտանաւորը, ստորագծելով ամականները.

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՈՐԹԸ ԵՒ ԿՆՁԻՒՆ

— «Աւա՛ղ խեչակս իմ կոտրեցաւ մերիկին,
«Տա՛ք արեւին կայծերը զիս կը մերկեն»:
Կ'ըսէր որթ մը գետինն ինկած յուսանաս,
Ու կը թափէր արցունք շատ:

Հոն կընձնի մը կը բարձրանար յաղթ ու սեգ,
Որ յուզուելով արցունքներէն որթին հեփ,
Անոր վերայ ձըլգեց թեւերն իր գրած.
Եւ մրմնջեց ձայնով ցած.

— «Եկ'ուր, ըլլամ քեզի նեցուկ, ապաւն,
«Պատրաստեմ քեզ խիտ տաքէն ու հովէն».
«Անքեր, ամուլ և անօգուտ եմ մի ծառ».
Գիտ ըլլամ քեզի օգտակար»:

Թեւադրուրիւն — Գոց արտասանել այս ոտանաւոր առակը. արձակի վերածել զայն՝ գործածելով շեղագիր բառերուն հոմանիշները, բացատրել բարոյականը.

ԴԱՍ. — ԱԾԱԿԱՆՆ ԻՐԻԵԻ ԳՈՅԱԿԱՆ

382. — Բոլոր ածականները կրնան առանձին գոյականաբար գործածուիլ երբոր կարելի ըլլայ ածականին ընկերացող գոյականը գեղչել. առաջուց յիշուած կամ գորութեամբ իմացուելիք անուն մը ըլլալուն համար օրինակ՝

Չոր փայտին հետ քացն ալ կ'այրի, փոխանակ ըսելու՝ թաց փայտն ալ կ'այրի:

383. — Գոյականաբար գործածուած ածականները գոյականի յատկութիւն կ'առանան և գեղչուած կամ գորութեամբ իմացուած գոյականին տեղ իրենք կը հոլովուին և յօդ կ'առնեն. օրինակ՝

Բարի ընկերներու մօտեցէ՛ք. չարերէն հեռացէ՛ք:

384. — Որակական և թուական ածականները երբ գոյականաբար գործածուին, հոլովումի ընդհանուր կանոնին համեմատ կը հոլովուին ընդհանրապէս:

385. — Երկու թուականը երբոր յօդ առնէ կամ հոլովուի. ի մը կ'աւելցուի ծայրը. օրինակ՝

Երկու քը, երկու քին, երկու քէն, և չն:

386. — Եօրը, ինը, ասար թուականները երբ հոլովուին, իրենց ծայրերու ը գիրը նի կը փոխուի. օրինակ՝ եօթնէն, տասնէն. իննով, և չն:

Դարձեալ այդ ընթացքը յօդի տեղ կը բռնեն և իրենց անմիջական կերպով յայտնող ձայնաւորէ մը առաջ նի կը փոխուին. օրինակ՝

Եօթն ալ, տասն է. ինն իսկ, և չն:

387. — Գոյականաբար գործածուած որակական և թուական ածականները կը կոչուին սովորական անուն:

388. — Յուցական և անորոշ ածականները երբոր առանց գոյականի առանձին գործածուին, դերանունի կը փոխուին:

ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ

330. — Հետեւեալ նախադասութիւններուն մէջ գոյականաբար գործածուած ածական անունները որոշելով ստորագծեցէ՛ք.
Աշխարհի մէջ բշտաւ մարդիկ երջանիկներէն աւելի են. — Երգե-
տու մէջ խոշոր մուկերը կը կրնան վտօրէն. — Առաջին դասարանին մէջ
սաւր զգալ կան, երկրորդին մէջ՝ ուր — Մեծ տղայիկան կանտալու-
րով գնացիկ, անոնք մեկընքանով պիտի գան. — Արդարեւ աղօթքը ազ-
դեցիկ կ'ըլլայ. — Մեկ կայ որ հագար կ'արժէ, հագար կայ որ մեկ չ'ար-
ժեք. — Մինչև որ հասար բարակեայ, բարակիկ հոգի կ'ըլլի. — Զմեյիկն
կորսուեցաւ. նոր մը պիտի գնեմ. — Գեղեցիկն պաշտուէր բնական զգա-
ցում մըն է. — Նուշիկն անուշը կ'ուտի, իսկ յեղիկն իւր կը հանեն. —
Համեյի է յեռներուն և դաշտերուն ակնպարար կանանք. — Եռար
մարդիկ մեկի տեղ յորս կը ծախսեն:

331. — Վերի հրահանգին գոյականաբար գործածուած ածա-
կաններուն գեղչեալ կամ գորութեամբ իմացուած գոյականները
քերականի ըսէ՛ք:

332. — Հետագայ նախադասութիւններուն մէջ շեղագիր գոյա-
կանները գեղչելով՝ անոնց ընկերացող ածականները գոյականի վե-
րածեցէ՛ք

Պզտիկ մեղները մեծ մեղներու կ'առաջնորդեն. — Զարհալ կեան-
քի կը փափուկ կեանքէն աւելի ստույգապահիկ է. — Զօրաւոր կենդա-
նիկ կը յարիկ սկար կենդանիի. — Մարդը մէջ սաւր հոգիէն
կը հոգիէն իր վիճակէն գոն չի. — Մեր եկեղեցին իր գոյութիւնը կը
պարտի իր հայրապետներուն, այդ երանելի անձերուն. — Մոլորակնե-
րու շարքին մէջ երկիրը երրորդ մայրական է. — Զարուհի ինը խնամ-
ունկեր, եօրը հասար ընկերներուն տուաւ, երկու հասն ալ ինի կերու:

Օրինակ. — Պզտիկ մեղները մեծերու կ'առաջնորդեն:

333. — Հոլովեցէ՛ք հետեւեալ ածականները.
Չոր, քերէ, ծոյ, երկոս, կորովի, ճրտարիս, բարի, մեկ, ե-
կուս, հիկ, եօրը, սասը, ինը, առաջին, յորրորդ, հարիւրերորդ:

ԴԱՍ. — ԱՍԾԱԿԱՆՆ ԻՐԻԵԻ ՍԱԿԲԱՅ

389. — Կան կարգ մը բառեր որոնք բնութեամբ թէ՛ ածական են թէ՛ մակբայ, ինչպէս են շաս, ֆիջ, հերիֆ, բաւական, խիստ, սաստիկ, չարացար, գեշ, աղիկ, շուտ, ևն:

390. — Բոլոր որակական ածականները կրնան բայի հետ ալ գործածուիլ իբրև լրացուցիչ բայի և այն ատեն որակական մակբայ կ'ըլլան. օրինակ՝

Այս ծաղիկը անուշ կը հոտի, ևն:

391. — Ասանկ, աղանկ, անանկ, այսչափ, այդչափ, այնչափ, այսքան, այդքան, այնքան, որքան, ինչքան, որչափ, նոյնչափ, նոյնքան անորոշ ածականները՝ առանձին և մը անորոշ ածականը՝ ուրիշ մակբայներու հետ միանալով կրնան մակբայաբար գործածուիլ. օրինակ՝

Ասանկ կը վայելէ քեզի. ես այնքան յոգնեցայ. ֆիջ մը կեցիր, ևն:

392. — Որակական ածականներէն մէկ քանիները գործիական հոլովի ձեւով ալ կը գործածուին իբրև մակբայ. օրինակ՝

Շուտով շտապով, մեղ'ով, ևն:

ԸՆԹԵՐՅՈՒՄ. — ՏԵՐԵՆԻԱԹԱՓԸ

Աշունի վերջին՝ երրորդ ատալին եղեամբ կ'իյնայ, այգիներու և պարտէզներու վառ դալարագեղութիւնը կ'սկսի նուազիլ ամառուիլ: Տերեւներու ակնապարտ կանանջը կ'այլափոխի և այս անգամ համասարած կանանջութեան կը յաջորդէ զանազանակ երփներանգութիւն մը: Յուրտ եղեամբ տերեւներուն կեանքը կը ծծէ, բայց միւս կողմէ զանոնք կը ներկէ կարմիրով, կապոյտով, դեղինով, և ուրիշ գոյներով, ախտի մը պէս՝ որ հիւսանդին դէմքը կը գունաւորէ վաղանցիկ երանգներով: Երրորդ աշնանային

հովը սաստիկաշունչ կը փչէ, մահաւերձ տերեւները ընդոտ կը խլուին իրենց ճիւղերէն և օդին մէջ խօջ պար մը կը գտնան, երփներանգ թիթեռնիկներու քոչքոչ երամբի մը պատրանքը տալով: Յետոյ գետին կ'իյնան և հողին վրայ համապիտու կը փոռնին զունագեղ օթոցի մը պէս. որ սակայն շուտափոյր կ'աւրուի յաճախող անձրեւներու քացին տակ:

Այլ հետապսած են անառնային արեւոտ օրերն ու քափ-լը, և մօտեցած է ձմեռը իր ցարսով ու սառով. ձիւնով ու բուքով:

ԹԵՂԱԳՐՈՒՐԻՆՆԵՐ. — Կարգալ այս հատուածը, բացատրել զժուարին բառերը, ուղղագրել նոյնը:

ՀՐԱՆԱԿՆԵՐ

334. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը եւ պարունակած շեղագիր ածականներուն ածականաբար, գոյականաբար, կամ մակբայաբար գործածուած ըլլալը որոշեցէ՛ք բերանացի:

335. — Հետեւեալ նախադասութիւններուն պարունակած որակական ածականները՝ մէկ զիծով, որակական մակբայները՝ երկու զիծով ստորագծեցէ՛ք:

Ջայկը մահուր ձեռքեր ունի — Ձեռքերդ մահուր պահէ. — Էջը քանդող կենդանի մըն է — Կրիան անելի քանդող կը ֆայէ. — Արտեմ արտուր ժամուր կը մտածէր, միկն վաճան ուրախ զուարթ կ'երգէր. — Ջուարք մարդիկ առողջ եւ երջանիկ կ'ըլլան. — Տխուր խորհուրդները վաճեցէ՛ք մեր միտքին. — Ձեր հրաւիրը սիրալոյսով կ'ընդունինք. — Իմ սիրալոյսով հաւանութիւնս կուտամ մեզի. — Ինչո՞ւ շուտ շուտ կը ֆայինք. — Այսպիսի շուտ ընթացիով հիմա պիտի յոգնինք մեզ. — Մեղ մով համոզեցէ՛ք զինքը որ շուտով գայ:

336. — Հետեւեալ ածականները մակբայաբար գործածեցէ՛ք մէկ մէկ նախադասութեան մէջ:

Բաւական, խիստ, աղիկ, շատ, չարացար, բշուտ, շուտափոյր, ֆիլ ֆիլ:

Օրինակ — Բաւական աշխատեցանք:

ԳՈՍ. — ԱԾԱԿԱՆԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

393. — Որակական անականները կրնան ունենալ երեք տեսակ լրացուցիչներ .

1. — Գոյական կամ դերանուն խնդիրներ . օրինակ՝ Վարձատրութեան արժանի, սիրտով աղնիւ, ձեզմէ բարձր, չորս ոսկ երկար :

2. — Պարագայական խնդիրներ . օրինակ՝ Մեղրեկ անելի անուշ, արեւի պէս պայծառ, կնն :

3. — Մակբայներ . օրինակ՝ շատ հարուստ, անհունօրեկ մեծ, ինչ մը գո արթ, անելի մեծ, կնն :

ԱԾԱԿԱՆԻՆ ԼՈՒԾՈՒՍԸ

394. — Անականը լուծելու համար պէտք է որոշել .

1. — Տեսակը, այսինքն՝ որակական թուական, ցուցական կամ անորոշ լինելը :

2. — Որ գոյականին վերաբերիլը :

ՀԻՍ. ՀԱՆԳՆԵՐ

337. — Հետեւեալ նախադասութեանց մէջ ցուցական եւ անորոշ անականները՝ մէկ, ցուցական եւ անորոշ դերանունները՝ երկու գիծով ստորագծեցէր .

Այս նախքան մօտ է, սակե գնացիք . — Այսինչ մարդը այնինչին հարստութիւնը լուծի . — Այդ լրագիրը կարդացի, ուրիշ մը կ'ուզեմ . — Այդ տունը միւսեկ օրակէս է ասիկ ելլելով միւս տունը պիտի փոխադրուիմք . — Ամեն մարդ իր վիշտն ունի, ամենքն ալ իրենց խաչը պիտի տանին :

338. — Հետագայ նախադասութեանց մէջ բուն անորոշ անականները որոշեցէր մակբայաբար գործածուածներէն .

Ասանկ մարդ տեսած չեի . — Ընկերիդ հետ ասանկ մի վարուի . — Քիչ մը կերակուր կեր . — Ես ալ նոյնչափ աշխատեցայ . — Ո՛րչափ մարդիկ՝ նոյնչափ կարծիք կան . — Անանկ մը պոռաց որ շատ մը մարդիկ վազեցին եկան . — Ո՛րքան դրամ ունիս . — Ո՛րքան պիտի փոփախէի որ ինչ մը համբերեիք :

339. — Հետեւեալ նախադասութիւններու պարունակած որակական անականներուն լրացուցիչները ստորագծեցէր . յետոյ թեմակբայ կամ պարագայական խնդիր լինելը .

Ընկերական կեանքի գուրջ մարդիկ վայրենութեան կը մտնուին . — Թուրքիա հասկերով ձոյս հողեր կը պարունակէ . — Մանուկները պաշտպանութեան կտօս կակներ են . — Առիւծին լախ հզօր կենդանի չկայ — էլ քիչեան աշտարակը 300 մէքր բարձր է . — Մեր ուսուցիչն իր ձիւղին հետոս է . — Վարդը թեեզի անան փայտիկ թերթ ունի . — Ատիկէ բոլորովին նոր շրջագրեւս մը ունի . — Իր դաստրուէն ուշադիր տղան անայ կ'երթայ . — Հրան կարի համեստ տղայ մըն է . — Երկար անելի կարծր է քան պղինձը :

340. — Հետեւեալ նախադասութիւններու շեղագիր անականներուն յարմար լրացուցիչներ անելուցէր հարցումներուն համաձայն .

Մեր պարեզին առաջանը (ինչով) լեցուն է . — Վանտա (ինչքան) հարուստ հօրեղբայր մը ունի . — Այս գաւազանը միւսեկ (խաւի) մաս կու գնէ . — (Ի՞նչ քանի) արժանի տղան կը գովուի . — Անիկա (ինչի՞ պէս) սպիտակ պատման մը հագած էր . — Եունը (մի՞նչն էր) հաւատարիմ է իր զիտը . — Այս տղան (իրեւի ի՞նչ) խելոյաւակ է . — Գրիգոր (ի՞նչ քան) բարեւոր գրուի մը ունի . — (Ինչպէ՞ս) զարդարուն արտ մը յարդարեցիմք :

Օրինակ . — Մեր պարեզին առաջանը բունով լեցուն է : — Հետեւեալ նախադասութիւններուն անականները՝ անական անունի վերածեցէր օրինակին պէս .

Բարձրագոյն թեւը Հիմալայա լեռն է . — Անեւանգոր կենդանին առիւծն է . — Հիւանդոս պտուղը կանուխ կը հասնի . — Անուշ տխրար . — Լեցուն հասկը կը խնարհի . — Յուսկեան մարդիկ գգուելի են . — Երեւոյն կ'է օգտակար որդն է : 3 :

Օրինակ . — Լեռներուն բարձրագոյնը Հիմալայա լեռնն է : 342. — Հետեւեալ նախադասութիւններուն շեղագիր անական-

ները մակբայի վերածեցէր նախադասութիւնը շրջելով, օրինակին հետեւողութեամբ.

Սասիկ հով փչեց — Անուօ վարդը կը բուրէր. — Աւստի մշակները կ'աշխատէին. — Գիւրից յարողութիւն լըլլար. — Քարճարսիչ արծիւը սաւառնեցաւ օդին մէջ. — Սրբերաց միերը աշաւեցին. — Կտնխտնաւ մտն եկաւ. — Դեռասի աղչիկը սարածամ սխուր մահով մեռաւ :

Օրինակ. — Հովը սասիկ փչեց :

343 — Հետագայ լրացեալ ածականներով մէյ մէկ նախադասութիւն կազմեցէք.

Համաարով բեղուն, օգնութեան կատօ, համեմատապէս բարձր, մեծապէս օգտակար, շատ ներդաշնակ, ոսկիէն նուազ ծանր, ամբողջովին ոսկեզօծ, զետր հեծնակ սնմանը, խաղի մէջ ճարպիկ :

Օրինակ. — Համաարով բեղուն միտեր հագուագիւտ են :

344. — Լուծեցէք 339րդ հրահանգին նախադասութիւնները.

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՀԵՂԵՂՆ ՈՒ ՎՏԱԿԸ

Վայրագ հեղեղ մը իր արագ

Արշաւանքին մէջ շարունակ

Կը նախատէր վտակ մը հեղ

Որ կ'ոռոզէր հոն մի պարտէղ :

— «Բան հպարտացի՛ր որքան որ կրնաս,

Ըսաւ հեղեղին վրտակն անվընաս,

«Ես չեմ ցանկար այն փառքին անասփիւռ

«Ձոր կը վայելիս մէ սաներովդ բլբլբ :

«Դուն կը հուշակուիս այն աւերներով

«Ձոր կը գործես յար,

«Իսկ ես՝ իմ սիրած բարիքներովդ

«Անթիւ անհամար» :

Թեւադրութիւն. — Գոց արտասանել այս ոտանաւորը, արծակ պատմել նիւթը, բացատրել բարոյականը.

ԳՍՍ. — ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՊԱՇՏՈՆ ՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

350. — Դերանունները խօսքին մէջ կը կատարեն գրեթէ այն բոլոր պաշտօնները զոր անունները կը կատարեն. հետեւաբար կրնան ըլլալ տէր բայի, խնդիր, յատկացուցիչ, սեռի խնդիր, բնութեան խնդիր, բացառապետեալ և նոյն իսկ ստորագելի. օրինակ՝

Ան գիս տեսաւ ուրիշին քով. մեր տունը այս է. ան ուրիշ է. մենք արեւելքցիներս հիւրասէր ենք. սիրեցէ՛ք զիտար, ելն :

351. — Անձնական դերանունները բայերու հետ իրարեւ տէր բայի գործածուած ատեն՝ ընդհանրապէս յայտնի չեն գրուիր, բացի երկու պարագաներէ :

1. — Երբ բայերուն դէմքը փոխուի. օրինակ՝ Ես աշխատեցայ, դուն վայելեցիր :

2. — Երբ անձը շեշտել ուզուի. օրինակ՝ Ես էի քեզ ծեծողը, դո՛ւք էք մեղաւորը, ի՛նք փակեց դուռը, ևն :

352. — Յարաբերական դերանունը երեք դէմքերու տեղ ալ կրնայ գործածուիլ. օրինակ՝

Ես որ քեզ կը ճանչնայի. դուն որ զիս կը տեսնես, ան որ մեզի խօսեցաւ, ելն :

353. — Յարաբերական դերանունը իր յարաբերական թիւովը կը գործածուի սովորաբար. բայց երբեմն յարաբերականին եզակի ուղղական և հայցական հոլովները յոգնակի յարաբերակներու տեղ ալ կրնան գործածուիլ. օրինակ՝

Անոնք որ կը համբերին իսպառ, կ'ապրին : Ես չեմ այն մարդերէն զոր դուք պիտի խաբէիք :

354. — Անորոշ դերանուններու մեծ մասը միայն եզակի կը գործածուի, իսկ արեւելք, արեւմելք, բոլորը, մեկ քան մեկ յոգնակի բայ կ'ուզեն. օրինակ՝

Բոլորն ալ տեսան զէպօքը, ամէնն ալ գիտեն, մէկ քանին չգիտցան իրենց դասերը:

355. — Դերանուններէն միայն անորոշները կրնան ունենալ հոյովեալ գոյական կամ դերանուն խնդիրներ. օրինակ՝

Այս տուներէն իւրաքանչիւրը իր տէրն ունի:
Անոնցմէ ոմանք շատ վախցան:

ԸՆԹԵՐՅՈՒՄ. — ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՂՋԻԿԸ

Վարդուհի հազիւ տամբհինգ տարեկան էր երբոր հայրը մեռաւ և զինք որբ ու անօգնական թողուց ցաւազար մօրը և կրտսեր եղբօրը հետ: Որովհետեւ ազգատիկ էին և ուրիշ մը օգնութիւն գտնելու յոյսն ալ չունէին, Վարդուհի մտածեց թէ իրեն կը պատկանէր այլեւ ընտանիքին ապրուստի հոգը: Վարդուհի ազնիւ սիրտ մը կը կրէր աննկուն կամքի մը հետ: Իրեն տեղ ուրիշ մը պիտի վհատէր, պիտի լար, ողբար և թերեւս մուրացկանութեան պիտի դիմէր այս տեսակ պարագայի մը մէջ: Բայց ան չյուսահատեցաւ և անմիջապէս գործի ձեռնարկեց: Գիշեր ցորեկ կ'աշխատէր, կար կը կարէր, շապիկ կ'ուլայէր և դրամ կը շահէր որով կը հոգար տան պէտքերը: Նոյն իսկ իր պզտիկ եղբօր կրթութիւնն ալ անտես չըրաւ և զանի դպրոց կը զրկէ. հայթայթելով անոր գրական պէտքերը: Վարդուհի գեռ ասկէ աւելին ալ պիտի ընէր եթէ կարող ըլլար:

Թեկադուրիւն. — Գարդալ եւ ուզղագրել այս հատուածը.

ՀՐԹ. ՀԱՆԳՆԵՐ

345. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը ստորագծելով բոլոր զերանունները:

346. — Հետեւեալ նախադասութիւններուն պարունակած դերանունները ևւ անոնց պաշտօնները որոշեցէ՛ք.

Ո՞վ որ ուրիշները կը յարգէ, ինք ալ ուրիշներէն կը յարգուի. — Մեր ուսուցիչը սա՛ կ, ձեր ուսուցիչն ո՞վ է. — Բացի ինչո՞ք՝ մէկը միայն որ իր դասը լցիտնայ. — Եղբորս գիտէ՞ր այդ չէ, միշտ է. — Անոնք մանուկները պէտք ունին զքօսակի. — Որոնց որ շատ տուած է անոնցն շատ պիտի պահանջուի — Դո՛ւն, Տիգրան, դասը լցիտնայ. — Ձեզմէ իւրաքանչիւրը մէկ մէկ մտող պիտի ըլլայ, օղակ. շատ քիչ որ ինչզիմեցի մտող անունիս արժանի ընէք, ձեր ձեռքը մեզմէ հպարտ պիտի ըլլան. — Յիսուս՝ ինք օտար մեզի խոնարհութեամբ օրինակը:

347. — Յետագայ նախադասութիւններուն պարունակած դերանուններէն որոնք որ կրնան զեղչուիլ, զեղչեցէ՛ք.

Ես դասս սերտեցի. ես հիմա պոչոյի պիտի ելլեմ. — Դուն զնա՛. ես ալ ետեւը կուգամ. — Անոնք մանցան իրենց սխալը, դուք դեռ կը յամառիք ձերիմիկ վրայ. — Դուն ես բոլոր յարիմիկ պատմաբ. — Մենք երկէ իրիկուն ինչ մը փութեցիմք, մենք ինչ մըն ալ ընթացում ըրիմք, յետոյ մենք ելանք պատկեցանք. — Անիկա ծոյր է, անիկա անհոգ է, բայց անիկ ինչ պակաս ալ դուն ծոյր ես, դուն անհոգ ես. — Դո՛ւն ես եղբորս բարեկամը, ուրեմն դուն բարեկամ. — Ես էի քու անկեղծ բարեկամը, դուն չմանցար զիս, դուն կարող ես ուրիշներէ:

348. — Հետեւեալ նախադասութիւններուն մէջ կէտերուն տեղ դրէ՛ք պէտք եղած յարաբերականը, պատշաճ թիւով եւ հոյովով.

Այդ բոլորները . . . որսացի. — Այն մտողիկը . . . կը վախեցանք. — Այն յատուկները . . . կը պարծենաւ. — Այն գրասենյակը . . . շահեցայ. — Այն օղակ . . . կ'աշխատէ. — Այն մարմաները . . . կ'ընթացան. — Բացի այն կենդանիներէն . . . միտք կ'ունեն:

349. — Լուծեցէ՛ք վերի 346րդ հրահանգին նախադասութիւնները:

ԴԱՍ. — ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄԸ

356. — Դերանունը լուծելու համար պէտք է որոշել
1. — Տեսակը, այսինքն՝ անձնական, յարաբերական կայն կայն լինելը.
 2. — Դէմքը.
 3. — Թիւը.
 4. — Հոլովը.
 5. — Նախադասութեան մէջ ունեցած պաշտօնը.
 6. — Թէ ի՞նչ անունի տեղ կը բռնէ (եթէ տեղի կայ):

ՀՐԱՀԱՆԻՆՆԵՐ

350 — Հետագայ նախադասութիւններուն մէջ դերանուններուն իբրեւ լրացացիչ-ինչիր ծառայող բառերը որոշելով ստորագծեցէք

Այս գաւազաններէն ո՞րը կ'ուզեմ. — Կենդանիներէն մէկ խնկն երկակենցաղ եմ. — Չեզոք ուսման անտարբեր եմ իրենց պատահականութիւններուն. — Անոնցմէ մէկը պիտի մեկնի գիւղէն եւ միւսները պիտի մնան. — Ուսուցիչը աշակերտներէն իւրաքանչիւրին հարցուց դասը. — Ընտանի կենդանիներէն ամէն մէկէն մէկմէկ ծեսակ օգուտներ կը ֆաղեն մարդիկ — Այդ նարինջներէն ֆանի՞ն պիտի գնեմ. — Անոյշեան գերդաստանէն այնինչը մեռեր է:

351. — Հետեւեալ նախադասութիւնները յարաբերական դերանուններով իրարու կապեցէք, օրինակին պէս.

Հիւսն բան մը ըսի, դուք ուշիմ էի, դուք կը հասկնամ գայն.
— Սերմը հասիկ մըն է, սերմը կը ծառայէ արտադրելու իր բոյսը, այդ բոյսէն առաջ եկած է արդէն սերմը. — Ոսկին մոզական հմայել մըն է, ոսկիին շնորհիւ բոլոր դուռները կը բացուին. — Չամբոյճը հիւանդութիւն մըն է, այդ հիւանդութիւնը շատ վտանգաւոր

այդ հիւանդութեան դարմանը աշխատութիւնն է. — Հպարտութիւնը մարտիւն մըն է, այդ մարտիւնը անկումն կը զանի մարդը, այդ մարտիւնն մէջ կ'իյնան եգեաները:

Օրինակ. — Դուք որ ուշիմ էի, կը հասկնամ ինչ որ ըսի:
352. — Լուծեցէ՛ք 350րդ հրահանգի նախադասութիւնները.

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԾԱՂԻԿԸ

Մենակեցիկ ու հոգեվար
Ծաղիկ որ փառքն եզար հովտին,
Քու բեկորներդ հիւսիսավար
Երկրի վրայ կը տատանին:

Նոյն գերանդին կը հնձէ մեզ.
Կը խոնարինք նոյն Աստուծոյն,
Թերթիկ մը՝ քեզ, հաճուք մը՝ մեզ
Կը լըքեն հուսկ տալով ողջոյն:

Վշտաչարչար, մըտացընոր
Կը հարցնէ մարդ ինքնիրեն.
Ո՞րն աւելի վաղ անցաւոր,
Կեանքը մարդուն թէ ծաղիկին:

Թելողութիւն. — Գոց արտասանել այս ոտանաւորը, արծակի վերածել զրաւորապէս, բացատրել իմաստը:

**ԴԱՍ. — ԲԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ
ՏԷՐ ԲԱՅԻՆ ՇԵՏ**

357. — Նախադասութեան մէջ բայը իր տէր բային հետ կը համաձայնի թիւով և դէմքով, այսինքն՝ տէր բային ինչ թիւ և դէմք որ ունի, բայն ալ նոյն թիւն ու դէմքը կ'ունենայ. օրինակ՝

Դուն գրեցիր, մենք գրեցինք, և ին՝

358. — Եթէ տէր բային անձնական դերանունն չէ, այլ գոյական և ստացական, ցուցական կամ անորոշ դերանուն, բայը Գ. դէմքի ձևով կը գրուի. օրինակ՝

Շողքենաւը մեկնեցաւ. ձերինները եկան. ասիկա յանցանք գործեց. միւսը պատիժը կրեց, և ին՝

359. — Եթէ տէր բային յարաբերական դերանունն է, բայը յարաբերական դէմքը կ'առնէ, օրինակ՝

Դուք որ կերաք, ես որ տեսայ, և ին՝

360. — Եթէ բայը մէկէ աւելի եղակի տէր բայիններուն ենայ, յոգնակի կը գրուի. օրինակ՝

Եզ ու ձին ընտանի կենդանիներ են՝

361. — Ինչ ինչ պարագաներու մէջ եթէ մէկէ աւելի եղակի ենթականեր իրարու աւելի կամ նուազ հոմանիչ կամ մերձաւոր բառեր ըլլան կամ բայէն վերջ զըրուին, բայը կրնայ եղակի մնալ. օրինակ՝

Այսօր անձրեւ ու ձիւն տեղաց. Ալ դադրեցաւ ձիւնն ու փուքը, և ին՝

362. — Եթէ բայը տարբեր դէմքեր ցուցնող մէկէ աւելի տէր բայիններուն ենայ, նախապատիւ դէմքը կ'առնէ: Ա. դէմքը նախապատիւ է երկրորդէն, Բ. ը՛ երրորդէն. օրինակ՝

Դուն, Արամը և ես վաղը պիտի մեկնինք:

ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՄԵՂՈՒՆ ԵՒ ՃԱՆՃԸ

Մեղուն օր մը իր փեթակին մօտ ճանճ մը տեսաւ և «Ի՞նչ կ'ընես կոր հոս, ըսաւ անոր բարկացոտ կերպով մը, կորսուէ՛ սրկէ, աղտո՛տ արարած, որ միայն բղբա՛լ քիտես և աղտեղութիւններու մէջ կը փնտռես կերակուրդ»: — «Մենք կ'ապրինք ինչպէս որ կրնանք, պատասխան տուաւ ճանճը, աղքատութիւնը մոլութիւնն չէ՛ բայց բարկութիւնը մեծ մոլութիւնն է»:

Թեղաղուրիւն. — Կարգալ եւ ուղղազբել վերի հատուածը:

ՀՐԱՆՍԵՂՆԵՐ

353. — Օրինակեցէ՛ք վերի հատուածը, ստորագծելով բոլոր բայերը. յետոյ բերանացի որոշեցէ՛ք բայերուն ենթակաները եւ իրարու հետ ունեցած համաձայնութիւնը.

354. — Հետեւեալ բառերը իրեւ ենթակայ գործածելով՝ փակագծեալ բայերը անոնց համաձայնեցուցէ՛ք թիւով եւ դէմքով.

Սոյն (բացուի, անց. կասարեալ). — Գունեցներ (արածի, անկա. անցեալ). — Մեկ որ (ուսակի, սահմ. ներկայ). — Փայտն ու ածուխը (այրի, սահմ. ներկայ). — Միւսները (մեկ, անց. ապառնի). — Ուրիշը (գալ. անց. կասարեալ). — Միւսները (մեկ, անց. կասարեալ). — Ես ու դուն (գիտել, սահմ. ներկայ). — Ինչ ու ես (ապառնի). — Ես ու դուն (գիտել, սահմ. ներկայ). — Ինչ ու ես (ապառնի). — Ես ու դուն (գիտել, սահմ. ներկայ).

— Զայտը եւ դուր (վարձատրուի, անց. կասարեալ). — Մարդն (մեկ, անց. կասարեալ). — Ինչ ու ես (ապառնի). — Վարդը, շաշարք եւ մեխակը (բուսակի, սահմ. ներկայ). — Մեկ, շալիք եւ անոնք (ճաշել, անց. կասարեալ):

Խոս, ծառ ու ծաղիկ (խաղիչ, անց. կասարեալ). — Մարդ ու խոս, ծառ ու ծաղիկ (խոսքերու բայերուն մէջ եթէ համաձայնութեան սխալներ կան, ուղղեցէ՛ք.

Անպակ ու զինկը մետադ է. — Դուք ալ, անոնք ալ դեռ շատ զոյաւմիս են. — Բոց ու ծոխ կ'ելլիր շունեկն — Ես ու ընկերս ստոյգ իր դասը. — Արեւ ու փորձակ լուսացիկ որ գլուխն չգար. — Լեռ սար ծածկուեցաւ կանակով. — Այստեղ մեկ կողմէն, գառնուկը միւս կողմէն կը մայր. — Մարդոց մեծ մասը հարսուրեան կը հետևեթն. — Չորս կողմ պատեց մեզ ու խաւար:

ԴԱՍ.—ՄԻԱԴԷՄ ԵՒ ՏԷՐ ԲԱՅԻԷ ԶՈՒՐԿ ԲԱՅԵՐ

363.—Քանի մը բայեր կան որոնք նախադասու-
թիան մէջ որոշ տէր բայի չեն ունենար և միայն Գ.
գէմքի ձևով կը գործածուին: Ասոնք կը կոչուին միա-
դեմ բայեր:

464.—Արդի հայերէնի մէջ բուն միադէմ բայեր են
անձրեւել, ձիւնել, փայլասակել, որոտայ, բայց միադէմ
բայական ձևեր կը համարուին նաև պիտի է, հարկ է,
վեղի է, կարելի է, անօր է, հերիք է և ասոնց նման տէր
բայիէ զուրկ կարգ մը ձևեր:

365.—Բուն միադէմ բայերէն զատ՝ երբեմն միւս
բայերը պատահաբար, իսկ չէզոքէ կազմուած կրաւորա-
կերպ տեսակ մը բայեր ալ միշտ և միայն երրորդ գէմքի
ձևով կը գործածուին առանց որոշ տէր բայիի. օրինակ՝
Կ'ըսեն թէ ցուրտ պիտի ըլլայ. Այս գետէն ջանց-
նուիր, ևն:

ՍԵՈՒ ԽՆԴԻՐԻ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

366.—Ներգործական բայերը երբ որոշ յատուկ լրա-
ցուցիչ մը չունենան, շատ անգամ իրրև չէզոք՝ առանց
սեռի խնդիրի կը գործածուին. օրինակ՝

Տղան կը խաղայ. սոխակը երգեց. արեւը կը լու-
սաւորէ, ևայլն:

367.—Մէկ քանի չէզոք բայեր ալ՝ իրրև ներգոր-
ծական, կրնան բացառաբար սեռի խնդիր առնել իրենց
արմատը կամ անոր հետ առընչութիւն ունեցող բառ-
մը. օրինակ՝

Լաց մը լալ, խորունկ խուն մը քնանալ, ևն:

ՀՐԱՆԱԿՆԵՐ

356.—Հետեւեալ նախադասութիւններուն մէջ այն բայերը որ
միադէմ եւ ենթակայէ զուրկ են, որոշելով ստորագծելէ՝ ք.

Այս ձմեռ շատ ձիւնել. — Կ'ըսեն քէ հիւանդակնց մը պիտի
կատուցուի. — Գիտէ ք որ յանգաւորը պատժուի — Հիմա փայլասակեց,
Կ'երեւի պիտի անձրեւի. — Առանց հոգանցի դուրս չելլուիր այս
օրին — Կը պատճեն ք ժամակակի եկեղեցի մը կը գտնուի հոն. —
Ձեզի ի՞նչպէս կը բուի, երբ անապարեմի, որոշալ ժամուս կը հաս-
նուի՝ արդեօք. — Մեղի է, մի՛ պիտի այդ ծաղիկներուն — Իրենց դասն
իկո՞ւ լին արդիր, անօր չէ՞. — Զուրկ կ'ենացնեն մանրեկները շնչեքու
համար. — Այս դուռնէն պիտի մտնուի, միւսէն պիտի ելլուի — Ձիւրուն
բերանը սակա՞ կը դնեն որպէս զի մտողոց հպասակին. — Հիմ ասե՞նք
կը կատճիկն քէ Արեւը կը դառնայ երկրին շուրջ:

357.—Հետեւեալ նախադասութիւններուն մէջ բերանացի որո-
շելէ ք թէ նման բայերը ո՞ր իրրև ներգործական գործածուած
են, ո՞ր իրրև չէզոք, եւ թէ այդ բայերէն որոնք էապէս ներ-
գործական են, որոնք էապէս չէզոք.

Դպիտները հեշտալուր մեղեդի մը երգեցին. — Օրհնողը սխալելի
կ'երգէ, կը պարէ, կը նուագէ. — Եղբայրս չ քակ նուագեց, մեկ ալ
բոլոս մը պարեցիմ. — Մարդ երբ չարազակն ուտէ, կամ խոտ, կը
վնասուի — Առտուն քի խելեցիմ եւ կարագ կ'ըսեն — Մաքուր օր շն-
չեցիք. — Հիւանդը հագիւ քէ կը շնչուի. — Այս սղան միջ կը խօսի. —
Վարդապետը քարոզ խօսեցաւ:

Երախան կուրայ — Արեւիս այսօր արիւն արցունք լացաւ. —
Յուսահաս մարդը բշուտ կեանք մը կ'ապրի — Մարդիկ յայտնի կ'ապ-
րին. — Հիւանդը պաղ քիտի մը քիտեցաւ — Շատերու ոտք կը քիտի. —
Անկիս կեանքի բոլոր ցարերը ստուպեցաւ. — Մարդիկ շատ հեղ կը
ստուպին իրենց քերութիւններուն պատճառաւ:

368.—Վերի 356րդ եւ 357րդ հրահանգի նախադասութիւններէն
լուծելէ ք ուսուցին ընտրանքերը:

ԳՍՍ.—ԷԱԿԱՆ ԲԱՅԻ ԵՒ ԱՏՈՐՈՂԵԼԻ ԿՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

368. — Էական բայը առանց ստորոգելիի՝ իրրեւ չէ-
զոք կը գործածուի երբ գտնուիլ, պատահիլ, գոյանալ
կամ առաջ գալ նշանակէ. օրինակ՝

Եղբայրս տունն է = տունը կը գտնուի.

Մեծ շարժ եղաւ = պատահեցաւ.

Լոյս թո՛ղ ըլլայ = թող՛ գոյանայ.

Յաջողութիւնը ջանքով կ'ըլլայ = առաջ կուգայ:

369. — Էական բայէն զատ ստորոգելի կրնան առնել
նաև ինչ ինչ ներգործական, կրաւորական և չէզոք բա-
յր. օրինակ՝

Ձիս իրեն բարեկամ ըրաւ, Յովաննէս Մկրտիչ
կարսպէս կոչուեցաւ. Այս տղան ապուշ դայ ձաւ:

370. — Ստորոգելին երբ էական, չէզոք և կրաւոր-
ական բայի հետ է, տէր բայիին վրայ հանգամանք մը
կը հաստատէ և անոր կը պատկանի. իսկ երբ ներգոր-
ծական բայի հետ է, սեռի խնդիրին վրայ հանգամանք
մը կը հաստատէ և անոր կը պատկանի:

371. — Այն բառը որուն վրայ ստորոգելին հանգա-
մանք մը կը հաստատէ, կը կոչուի *ստորոգել:*

ԸՆԹԵՐՑՈՒՄ.— ՀԱՆՃԱՐԻՆ ՈՅԺԸ

Բականինի, Իտալացի նշանաւոր ջութակահարը, իր
արուեստակիցներուն նախանձը կը գրգռէր: Օր մը որ
պիտի նուագէր հանրային խմբումի մը մէջ, այդ ար-
ուեստակիցներուն ամէնէն չարանախանձը անուանի վար-
պետին ջութակին երեք թելերը զաղանապէս կտրեց:
Բականինի երբոր նուագելու պիտի սկսէր, նշմարեց պա-
տահածը, բայց առանց երբեք տատամելու, նուագեց իր

սովորական ճարտարութեամբ և բոլոր ունկնդիրներուն
բուն ու որոտը դոտ ծափերուն արժանացաւ: Երբոր
Բականինի վերջացուց նուագը, չարանախանձ արուես-
տակիցը ապուշար մօտեցաւ անոր և նշմարեց թէ միայն
մէկ թելի վրայ նուագած էր:

Ճշմարիտ հանճարը աստուածային ոյժ մըն է որ իբ
գերագոյն զօրութիւնով կը յաղթէ ամէն խոչընդոտներու:
Թելադրութիւններ. — Գարդալ այս հատուածը, ուղղագրեա
նոյնը, պատմել նիւթը, բացատրել դժուարին բառերը:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

359. Յետագայ նախադասութիւններուն մէջ էական բայերն
ուր որ իրրեւ չէզոք գործածուած են, որոշելով ստորագծեցէք.
Աստուած ամենուրեք է. — Հպարտ մի՛ ըլլա՛ք, խնամե՛ք եղե՛ք. —
Չաղն առտու պատարագ պիտի ըլլայ. — Մեծ հոգեհ եղաւ եւ շատ տու-
նէր հուրի ձարակ եղան — Մարդոց մէջ խաղաղութիւն բո՛ղ ըլլայ. —
Առանց պատահա՛նի արդիւնք մըլար. — Արեւ անգամ որ սով ըլլայ, շատ
մարդիկ սովանան կ'ըլլան. — Ծիծեռնակն ու արագիւր գաղթական
բոչուներ են:

360. — Հետեւեալ նախադասութիւններու մէջ ստորոգելիները՝
մէկ գիծով, ստորոգելները՝ երկու գիծով ստորագծեցէք.
Անկիւս մեր դպրոցին ձեռու կարգուեցաւ. — Մենք մեզ անկեղծ
բարեկամ կը ձանձնայինք — Առեմ եղբորս ընկերներն են. — Այս գործը
ինձի դժուարին կը բուի. — Ինչո՛ւ գիտ ընկեր լես ընտրե՛ր. — Այդ
առարկոց լեզի յանցանք պիտի սեպուի. — Օտ գիտե՛ք ինձե՛ք անտր ըն-
դունէ՛ք. — Այս պատկերը մեզի յիշատակ մնաց. — Յակոբ ու Եսաւ Իսա-
հակի որդիներն են. — Արձանագործը այս խոր արձան շինեց. — Չա-
ղանք մեր բշտակները կարծեցինք. — Էդիսքան, Մարգարի, Քիւրի մեծ
գիտուններ են. — Ձիս աշակերտ նշանակեց — Այս տները վարդ կը հո-
տի. — Չանոնք այն տեղ պահակ կեցուցին. — Յիսուս օծեալ կոչուեցաւ:

ԳԱՍ. — ԳԵՐԲԱՅՆԵՐ ԵՒ ԻՐԵՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

371. — Դերբայ կը կոչուին բայերուն աներեւոյթի և ընդունելութեան ձեւերը երբ խօսքին մէջ գոյականաբար կամ անականաբար գործածուին :

372. — Աներեւոյթ դերբայը գոյականօ բար միայն կը գործածուի և իրր այն թէ՛ յօդ կ'առնէ և թէ կը հոլովուի . օրինակ՝

Ետտ ապրիլը ժուժկայ ըլլալէն կախում ունի :

373. — Երեք լծորդութիւններու բայերուն աներեւոյթ դերբայները հետեւեալ կերպով կը հոլովուին .

Ո. Հ.	Գրել	Պօսիլ	Կարդալ
Ս. Տ.	Գրելու	Պօսելու	Կարդալու
Բ.	Գրելէ	Պօսելէ	Կարդալէ
Գ.	Գրելով	Պօսելով	Կարդալով

Ասոնց յոգնակները շատ քիչ անգամ կը գործածուին :

374. — Ներկայ դերբայը, ինչպէս նաև անցեալ և ապառնի դերբայներուն միայն ան, ի՛ք վերջաւորող ձեւերը կը գործածուին թէ՛ անականաբար գոյականի մը հետ, թէ՛ առանձին գոյականաբար . օրինակ՝

Իբրեւ անական. — Վազող ձին, կասղած շունը, գրեղի՛ նամակս .

Իբրեւ գոյական. — Վազողը կօ հասնի, կասղածէն գգուշացիր, գրեղիս գիտեմ են :

375. — Ներկայ, անցեալ և ապառնի դերբայները գոյականաբար գործածուած տանն թէ՛ յօդ կ'առնեն, թէ՛ կը հոլովուին հետեւեալ կերպով .

		Եզակի	
Ո. Հ.	Գրողը	Պօսածը	Կարդալիքը
Ս. Տ.	Գրողին	Պօսածին	Կարդալիքին
Բ.	Գրողէն	Պօսածէն	Կարդալիքէն
Գ.	Գրողով	Պօսածով	Կարդալիքով

		Ցագնակի	
Ո. Հ.	Գրողներ	Պօսածները	Կարդալիքները

Ս.	Գրողներուն	Պօսածներուն	Կարդալիքներուն
Բ.	Գրողներէն	Պօսածներէն	Կարդալիքներէն
Գ.	Գրողներով	Պօսածներով	Կարդալիքներով

ՀՐԵ ՀԱՆԳՆԵՐ

361. — Հետեւեալ նախադասութիւններուն պարունակած անական դերբայները մէկ զիծով, գոյական դերբայները՝ երկու զիծով ստորագծեցէք .

Բարի՛ գործելուն մէջ մեծ գոհունակութիւն կայ . — Եփած արեւն ուշադիր ըլլալով շատ հիւանդութիւններէ զերծ կը մնայ . — Փորձուածը կրկին փորձել յիմարտութիւն է . — Գլուխը քաշելով փորձուածը կրկին փորձել, ստապողիկն օղնել ընկերային պատիւներ . — Ինկողը կանգնեցնել, ստապողիկն օղնել ընկերային պատիւներ են . — Մարդ իր ըսելիք խօսել կը շատ արագ գոչեց . — Խօսելի արժար է, լռելը ոսկի . — Փշածող դգայի կուգայ . — Ուրիշ վայելուելիքի հրապարակ լռելու . — Վայելուած հաճոյքը շողութիւնը սպասելով իր քար :

362. — Հետեւեալ նախադասութիւններուն մէջ շեղագիր գոյականները զեղչելով անոնց ընկերացող անական դերբայները գոյական դերբայի վերածեցէք .

Գործ կայ, գործող մարդ լկայ . — Անցած առաւօպակէր կը մտնուի — Կերած կուգէր քաժին հաճեալ աղիտեան . — Պարտիկ ետրպագել միջ Տիեզերին ստեղծող Աստուծոյ — Ըսած խօսքի ճշմանակութիւնը կը հասկնան — Ես կարգացած զիբն հասկցող մարդ եմ . — Մարդ շատ անգամ շահուելիք հարստութեան մը հետեւեալ անտէրիք զրամակն պիտի կ գեղչել ;

Օրինակ — Գործ կայ, գործող լկայ :
363. — Վերի 361րդ հրահանգին պարունակած գոյական ներկայ, անցեալ եւ ապառնի դերբայները անական դերբայի վերածեցէք, իւրաքանչիւրին բով զնելով իրեն յարմար գոյականը .
Օրինակ . — Փորձուած մարդը կրկին փորձել յիմարտութիւն է :

ԴԱՍ. — ԴԵՐԲԱՅՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ (Շար.)

376. — Ապառնի դերբային ու վերջաւորող ձեւն ալ միայն ածականաբար կը գործածուի գոյականներու հետ. օրինակ՝

Դրնչու թուղթ, փախչիչու ճամբայ, ևն:

177. — Անցեալ դերբային ած վեջաւորող ձեւերը կրնան նաև մակրայաբար գործածուիլ. և այդ պարագային կը պատասխանեն ի՞նչպէս հարցումին. օրինակ՝

Ձեռքը բացած կը մուրար, ևն:

378. — Կարգ մը բայարևատներ ալ դերբայի իմաստով ոմանք ածականաբար, ոմանք գոյականաբար կրնան գործածուիլ. օրինակ՝

Փակ դուռ, վառ միտք, այս տարուան ցանր:

379. — Իբրև գոյական գործածուած դերբայները կը կատարեն գրեթէ այն բոլոր պաշտօնները զոր գոյականը կը կատարէ նախադասութեան մէջ, հետեւաբար կրնան ըլլալ տէր բայի, սեռի, բնութեան խնդիր, յատկացուցիչ, բացայայտիչ, նոյն իսկ ստորոգելի:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

364. — Հետեւեալ նախադասութիւններու պարունակած ա. պառնի ածական դերբայները որոշելով ստորագծեցէք.

Այ ընելու գործ չմնաց. — Արջ ցանելու է, բայց ցանելու ցորեն չկայ. — Ծաղրուելու ձեւեր մի՛ ունենաք. — Կորսնցնելու առիթ չէ այս ուրեմն կորսնցնելու չէ. — Գալու բաները կարելի չէ գուշակել. — Խմելու չուր չկայ:

365. — Հետեւեալ նախադասութեանց պարունակած բայարմատ դերբայները որոշելով, իբրև ածական գործածուածները՝ մէկ գիծով, իբրև գոյական գործածուածները՝ երկու գիծով ստորագծեցէք.

Այդ ցից ժայռին վրայ դժուար է ելլելը. — Գոյրս պտոյթ

եղաւ. — Գիտ լուանով մը կապեցին շարագործը. — Յովհաննէս յոգայու մէջ վարժ եւ փորձ է. — Կերակուրին եփը անցաւ. — Այս մտողը կիտր ճաշակ ունի. — Ուղեւորութենէ դարձին մեզի պիտի այցելէ. — Սեղմ հագուստները կը նեղեն մտղը. — Հիւանդին տեսի գաջիկ. — Մեզի անկ չէ այդ խնդիրը. — Խափշիկները կախ շքրուկներ ունին:

366. — Վերի հրահանգին պարունակած բայարմատ դերբայները աներեւոյթ կամ անցեալ դերբայի վերածեցէք օրինակին հետեւ. ղուծեամք.

Օրինակ. — Այդ ցցուած ժայռին վրայ ելլելը դժուար է. — Գոյրս պտոյթ եղաւ:

367. — 361րդ հրահանգին պարունակած նախադասութիւնները ղուծեցէք.

368. — Հետեւեալ նախադասութիւններու աներեւոյթ դերբայներով փոզազիր անուն կամ բայանունները աներեւոյթ դերբայներու ղեխանակեցէք, օրինակին պէս.

Չափազանց կերուխումը անողութեան կը վնասէ. — Յանկուրի մեղքը կ. — Կառայութիւնը երբեք ժամերով ճշրուած է. — Ժամանակը յամեցում, ի դադարում չի գիտեր երբեք. — Կրօնը հաւատքի վրայ հիմնուած է. — Աշխարհի մէջ ընդհանրապէս սուրբութեան կը յարողէ արամութիւն, յարողութեան ձախողութիւն, խնդու մի՞նք՝ արատուք. — Գունը մտացում է. — Տղամ աւելի կ'ախորժին խաղէ քան աօխաւաճէ.

Օրինակ. — Չափազանց ուժեղ խնդը անողութեան կը վնասէ: 369. — Հետեւեալ նախադասութիւններուն մէջ մակրայաբար գործածուած դերբայները դիմաւոր բայի դարձնելով՝ մէկ նախադասութիւնը երկու քի վերածեցէք.

Գուլար բացած՝ աղօթեց. — Դեռ ինք չտրված՝ ուրիշին ստրկեցնելու կ'ելլէ. — Շոգեմաշը՝ բեռն առած՝ մամբայ եղաւ. — Արսիկէ հագուած շուած՝ եկեղեցի պիտի երթայ. — Թխուս խաչը շալկած՝ Գողգոթա թարձացաւ. — Տիգրան գուլար հակած՝ կը մտածէ:

Օրինակ. — Գուլար բացաւ եւ աղօթեց:

ԳՈՒՍ.—ԲԱՅԵՐՈՒՆ ՊԱՐՁ ԵՒ ԲԱՂԱԴՐԵԱԼ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ն Ե Ր Ը

380.—Պարզ կը կոչուին բայերուն այն եղանակներն ու ժամանակները զոր ասկէ առաջ սորվեցանք:

381.—Բաղադրեալ կը կոչուին բայերուն այն եղանակներն ու ժամանակի երբ օրոնք կազմուած են էական բային օժանդակութիւնովը. օրինակ՝

Տեսած եմ, կերեր ես, տալու է, ելն:

382.—Բաղադրեալ ժամանակներու կազմութեան կը ծառայեն բայերուն անցեալ ընդունելութեան ձևերը, և ապառնի ընդունելութեան միայն ու վերջաւորող ձևը. օրինակ՝

Գրած էր, խօսեր են, կարդալու էք, եկած պիտի ըլլայ, տեսած եղանք, գրելու ըլլաք, ելն:

383. Կան նաև էական բային անցեալ ընդունելութեան եղեր ձևին օժանդակութեամբը կազմուած քանի մը բաղադրեալ ժամանակներ ալ. օրինակ՝

Կիտէ եղեր, պիտի գործեն եղեր, ելն:

Հ Բ Ա Հ Ս Ն Կ Ն Ե Ր

370.—Հետեւեալ նախադասութիւններու բայերուն բաղադրեալ ժամանակները ստորագծեցէք

Շոգենաւր այնկոնքեան հանդիպեր է. — Ես իմ պատօս կատարած եղայ, դուն աչ ինչ կատարելու ես. — Երբ դասդ գիտեսայր, գովեսի արժանացած պիտի ըլլայիր. — Արսէն իր ուսուցիչներէն շատ սիրուած է. — Ձիւն շատ յովանցուցեր էին. — Երբոր աղօթելու ըլլաք, մեր սենեակին մէջ առանձնացե՛ք. — Բաւական յառադիւնդ էք, բայց ինչ մըն աչ աշխատելու էք. — Յակոբեանները ամառանց պիտի երթան եղեր. — Օր մը պիտի հասկնաս քե իրաւունք ունիմ եղեր. — Դուք մեկ կողմէ երթալու եղե՛ք, ես աչ մեզի կը հետեւիմ. — Մենք մեզի շատ համակրած էինք, բայց դուք մեզ մոռցեր էք:

371.—Հետեւեալ նախադասութիւններն իրարու միացուցէք շեղագիր գիմար բայերը դերբայի վերածելով.

Այնքը փակեց եւ ժուժկայ եղիր եւ երկար պիտի ապրիս. — Խնդիրը չհնցեց, մնացաւ. — Շոգեկատքը սուլեց եւ հեռացաւ. — Խնդիրը չհնցեց, վճիռ տուաւ. — Տիրութիւնով համակուեցան եւ սկսաւ լալ. — Չորք կարի կարի կ'իջնայ եւ ֆարը կը ծակէ. — Չարոյքէն յուզուեցաւ եւ կը պոռար կը կանչէր. — Գինին կը բրուի եւ ֆացախ կ'ըլլայ: Օրինակ.— ժուժկայ ըլլալով երկար պիտի ապրիս — Խնդիրը մննած վճիռ տուաւ:

372.—Հետեւեալ խօսքերուն շեղագիր նախադասութիւնները միւսին հետ ձուլեցէք, դերբայական ձևի վերածելով.

Ամէն ինչ որ կը փայլի ոսկի չէ. — Այլ որ կը գործէ կ'ապրի. — Զոռչացէ՛ք անոնցմէ որ սուս կը գրուցեն. — Մամուռ չի բռներ այն ֆարը որ կը գործի. — Վախճանը յոռի կը լինի անոր որ սուց կ'աւերէ. — Վարաց եմ այն կենդանիները որ միս կ'ուտեն.

Օրինակ.— Ամէն փայլող ոսկի չէ: Գատրէ այն խոսումը զոր տուիր. — Կը հասկնամ ինչ որ կ'ըսես — Վկայի՛ անց համար զոր սեսար. — Բան մը չհասկցայ այն անակէն զոր գրեցիր. — Ար որ օտրժուս կայ կեանք կայ. — Երբոր յովանցե՛ք պատիւն հանգստանալ:

Օրինակ.— Տուած խոսումդ կատարէ: Եւրանի գերբայի վերածելիներ. — Գիտեմ այն դասը զոր պիտի սորվիս. — Կեանքը պայտար մըն է զոր պիտի մղենք. — Ինչ որ պիտի պատահի, կը պատահի. — Մեղաւորը չի երեար խոսափիլ այն պատիժէն զոր պիտի կրէ. — Ինչ որ իրեն պիտի բաւէր, անկէ աւելի գտաւ:

Օրինակ.— Մորվելիք դասը գիտեմ: Աններուայք գերբայի վերածելիներ. — Պէտ է ունել որ-պէս զի ապրիմք. — Պիտի շանամ որ բնութեան մէջ յաջողիմ. — Սպասէ միեւնի որ վերադառնամ. — Չեմ գիտեր քե վաղը կուգայ. — Մարդ յապրի երբոր չուտէ. — Երբոր գարուն գայ, ծիծեռնակները կը վերադառնան. — Կը յուսայի, որ մեզ հոն գտնենք: Օրինակ.— Պէտ է ունել ապրելու համար:

ԴԱՍ.—ԲԱՅԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

384.—Բային յատուկ և պատահական լրացուցիչներն են ստորագելին, սեռի խնդիրը, բնութեան և պարաչայական խնդիրներ և մակրայներ:

385.—Բայերուն աներեւոյթ և ներկայ դերբայները, ինչպէս նաև անցեալ դերբային ած և ապառնիին ի՛ք վերջաւորող ձեւերը, գոյականաբար և ածականաբար գործածուած առեն ալ դարձեալ բայի ոյժ ունին, և կրնան ունենալ բային բոլոր լրացուցիչները. նոյն իսկ ձրբեմն ալ բայի. օրինակ՝

Գողը զիս տեսնելով փախաւ. Ասիկա զործե քաշուած մարդ մըն է: Արևերը ներկող երկրագործը տեսա՛ր. Հայրդ եկած առեն զանի տեսայ, եյն:

ԴԱՍ.—ԲԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՍԸ

386.—Բայը լուծելու համար պէտք է որոշել.

- 1.—Տեսակը, այսինքն՝ էական, ներգործական, ևն. լինելը:
- 2.—Եղանակն ու ժամանակը.
- 3.—Թիւը.
- 4.—Դէմքը.
- 5.—Եթէ դերբայ է՝ նաև պաշտօնը:

ՀԻՍ. ՀԱՆԳՆԵՐ

373.—Լուծեցէք 370ը հրահանգի նախադասութիւնները.

374.—Հետեւեալ նախադասութիւններուն մէջ շեղագիր բացերը ապառնի դերբայով կազմուած բաղադրեալ ժամանակի վերածեցէք, առանց խօսքին իմաստը այլայլելու.

Մարդ իր ո եւ կ առաւելութեան վրայ պէտք չէ որ հպարտանայ. — Պարսիկն յարգել մեր մեծերը. — Տղա՛, պիտի կամբերէ՛ք, մինչև որ ծարին լրանայ. — Ա՛տէ է որ օգնեցի կարօտեալ-

ներուն — ձանցեա՛ց՛ք մեր սխալը եւ չճատուի՛ցէք զայն խոստովանելիք. — Ձեր խելիին չափազանց չհաւնի՛ք եւ ուրիշին կատճի՛ր չար-
եամարե՛ք:

Օրինակ. — Մարդ իր ու եւ կ առաւելութեան վրայ հպարտանալու չէ:

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ — ԱՐՏՈՑԸ

Ուրախութեան ձայնն եմ ես
Մարգերու մէջ զալարուն,
Ես կ'աւետեմ նախապէս
Երկրի բարեւն Արեւուն:
Կ'անցնիմ հիւղեր մշտապատ
Ու թեւերէս շիթ առ շիթ
Կը հեղում չէ՛ն, անապատ
Թարմ ցօղերու մարգարիտ:

Թեւերս բացած՝ առաջին
Կ'երգեմ երգը բընութեան,
Հո՛ն ուր լոյսը Արարչին
Կը ծնի այգն երփներփեան:
Ձըւարթ է երգս. միշտ զըւարթ
Առաւօտեան և լոյսի,
Ով լսեր է մինչև ցարդ
Որ մութն երգեմ մեկուսի:

Կ'ըսեմ հսկող հիւանդին
«Օրհնէ՛ զԱստուած, ա՛հա՛ լոյս»
«Ա՛ռ, ե՛րկրագործ, գերանդին
Ա.զազային բաց ակօս»:

Ուրախութեան ձայնն եմ ես
Մարգերու մէջ զալարուն,
Ես կ'աւետեմ նախապէս
Երկրի բարեւն Արեւուն:

ՏԸ ԼԱՐԱՍ

Թրգմ. Մ. ԱՍՍՏՈՒՐ

Թեւադրութիւններ.—Գոց արտասանել այս ոտանաւորը, արձակի վերածել զրաւորապէս, բացատրել իմաստը:

ԳԱՍ.—ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՇՏՈՆԸ

387.—Նախադրութիւններն իրենց խնդիրով մէկ-տեղ մակբայի ուժ ունին երբ նախադասութեան մէջ բային կամ ածականի մը լրացուցիչն են և կը պատասխանեն ո՞ր, ե՞րբ ի՞նչպէս, ի՞նչքան, և այլն հարցումներուն. օրինակ՝

Զիւնի պէս ճերտակ էր, սանդուխէն վեր ելաւ:

388.—Նախադրութիւնն իր խնդիրով մէկտեղ երբ գոյականի մը լրացուցիչն է, ածականի ուժ ունի, և կը պատասխանէ ի՞նչպիսի հարցման օրինակ՝

Առանց ջուրի աղբիւր, ար.ի մօտ ընկեր և ըն:

389.—Նախադրութիւնն իր խնդիրով մէկտեղ ածականի ուժով կրնայ նաև երբեմն ստորոգելի ըլլալ. օրինակ՝ Այս ծառն առանց պտուղի է. և ըն:

ԸՆԹԵՐՅՈՒՄ.—ՎՈՂՂԷՐԻ ԿՕՇԵԿՆԵՐԸ

Վոլղէր իր ծառայութեան մէջ ունէր կարիճ մանչ մը, հաւատարիմ բայց ծոյլ: — «Յո՛վսէփ, կ'ըսէ անոր առտու մը իր տէրը, կօշիկներս բեր»: Յովսէփ աճապարանքով կը բերէ կօշիկները և Վոլղէր կը զիտէ թէ առջի իրիկուան ցեխը դեռ կը կենար անոնց վրայ: — «Դու՛ն այս առտու կօշիկներս մաքրել մոռցիր ես», կ'ըսէ Վոլղէր: — «Բայց տէ՛ր իմ, փողոցները շատ ցեխոտ են և երկու ժամ չանցած՝ ձեր կօշիկները հիմակուան չափ աղտոտ պիտի ըլլան», կը պատասխանէ Յովսէփ: Վոլղէր կը ժպտի, կօշիկները կը հագնի և կը մեկնի առանց պատասխան տալու: Բայց Յովսէփ անոր ետեւէն կը վազէ: — «Տէր իմ, կ'ըսէ, բանային տալու մոռցաք: — Բանալին, — Այո՛, կերակուրնեղու դարանին բանային, նախաճաշելու համար: — Բարև կամս, ի՛նչ հարկ նախաճաշել,

չէ՞ մի որ երկու ժամէն հիմակուան չափ անօթի պիտի ըլլաս նորէն»:

Այն օրէն վերջ Յովսէփ այլ ևս ա՛լէն օր իր տիրոջ կօշիկները կը մաքրէր ու կը փայլեցնէր:

ԹԵՎԱԳՐՈՒՔԻՆԵՐ.— Կարգալ այս հատուածը, ուղղագրել նոյնը, պատմել նիւթը բերանացի եւ եզրակացնել բարոյականը:

ՀՐԱՆԱՆԳՆԵՐ

375.—Օրինակեցէք վերի հատուածը. ստորագծելով նախադրութիւններն իրենց խնդիրներով միասին:

376.—Հետեւեալ նախադասութիւններուն պակասները լրացուցէք հարցումներուն յարմար պարագայական խնդիրներով, լուսինը կը դառնայ (ո՞ր, ի՞նչ բանի շուրջ) Միսսիս եղիֆ (ի՞նչպէս, ի՞նչ բանի նման) — Մարգարիտները մի՞ նեճիֆ (ո՞ր, որո՞ւ առջև) — Որք կը կոչուին այն մանուկները որ (ի՞նչպիսի) խոշոր ըլլին (ո՞ր) եւ — Չկայ կենդանի որ (ի՞նչքան, որո՞ւ միջ ձիւն կը լայ) — Բարձր լեռներուն (ո՞րտեղը, ի՞նչերո՞ւն վրայ) միջ ձիւն կը կենայ: — Երկիրը քանքորս ժամուան մէջ կը քաւայի իր (ո՞ր տեղ, որո՞ւ վրայ): — Ամենեւին նոր բան չկայ (ո՞ր տեղ, որո՞ւ տակ): — Իրենեան լեռները կը քարճաւան (ո՞րտեղ, ի՞նչերո՞ւ միջև): — Առտուան ցօղն կը փայլի (ի՞նչպէս, ի՞նչ բանի նման):

377.—Հետեւեալ գոյականներուն ընկերացող պարագայական խնդիրները ածանցեալ կամ բարդ ածականի վերածեցէք:

Առանց ջուրի աղբիւր, բնական վեր խոշորօրէն, ձորի մէջ դառնալու, կարգի դուրս դուրս, մարդու պէս կապիկ, կրօնի հակառակ վարդապետօրէն:

Օրինակ. — Անյուր աղբիւր:

378.—Հետեւեալ նախադասութիւններու պարունակած պարագայական խնդիրները մակբայի վերածեցէք, օրինակին հետեւեալով:

Տիգրան գիւ եղբոր պէս կը սիրէ: — Դասերնից պէս չէ որ մեկնայի պէս արտասանէք: — Ամենքս այլ մեղանչական եմք իրերէ մարդ: — Կան մարդեր գնդը անասուն ապրող: — Ով որ ստուկի հանգոյն կը կրնան իրերէ գոյական գործածուիլ: — Հրանք իր խոյր վարդենիի նման ծեծեց:

Օրինակ. — Տիգրան գիւ եղբայրաբար կը սիրէ:

ԴԱՍ.—ՆԱԽԱԳԻՐՈՒԹԻՒՆՆ ԻՐԻՆԻ ՄԱԿԲԱՅ

Ե Ի ԳՈՅԱԿԱՆ

390.—Տեղի, ք ՚նակի, ժամանակի պարագայ ցուցնող կարգ մը նախադրութիւններ՝ կրնան առանց խնդրի գործածուիլ իբրև լրացուցիչ բայերու, և այն ատեն մակբայի կը փոխուին. օրինակ՝

Վեր ելայ, ներս մտաւ, դիմ կենալ, մօտ դալ, և յն :

391.—Տեղի պարագայ և դիրք ցուցնող նախադրութիւնները երբեմն գոյականաբար ալ կը գործածուին և այն ատեն կը հոլովուին ու յօդ կ'առնեն, օրինակ՝

Բովկս գնա՛, յերան սակի տունը փրաւ, ևն :

392.—Սեռականաձև նախադրութիւններն ընդհանրապէս ամականի ոյժ ունին. օրինակ՝

Բովի սենեակը, ետելի պարտէզը ևն :

ՆԱԽԱԳԻՐՈՒԹԵԱՆ ԼՈՒԾՈՒՍԸ

393.—Նախադրութիւնները լուծելու համար պէտք է որոշել .

1.—Նախադաս թէ յետադաս ըլլալը .

2.—Ո՛ր բառին վերաբերիլը (այսինքն՝ որոշել իր խնդիրը) .

3.—Իր խնդիրով մէկուեղ նախադասութեան ո՛ր բառին լրացուցիչն ըլլալը :

ՀԻՍԱՀԱՆԻՆՆԵՐ

379.—Հետեւեալ նախադասութիւններուն մէջ միեւնոյն բառն ուր որ նախադրութիւն է՝ մէկ զիծով, ուր որ մակբայ է՝ երկու զիծով ստորագծեցէք .

Նաւակը առայ մղեցիմք.—Չմեռեն առայ աշունչկայ.—Կեանքի

սանդուխին վրայ ոմանք վեր կ'ելեն, ոմանք վար կ'իջեն. — Այսօր շտմայափը գերոյին վեր է, երկ գերոյին վար էր. — Չարէ հ, դուն անդի՛նչ քնա, Չարէ Ե, դուն ալ ասդին եկուր. — Գամուրդին ասդին էր կամուրդին անդին մեծ վաճառատուններ կան: — Շարունակ դուս կ'ելիք ներս կը մտնէ — Դասիսէն ներս երջանկոյնի կար, դասիսէն դուս օտապանքն չկատար — Մարդ ինչքան Աստուծոյ մօտ ասդի, ասքան մեղքի հետու կը մնայ. — Ես մօտ կու գամ դուն հետու կը փախչիս :

380.—Հետեւեալ նախադասութիւններուն մէջ գոյականաբար գործածուած նախադասութիւնները որոշելով ստորագծեցէք .

Սկիւռը ծառի վրայ մագցցեցաւ. — Ետին վրայի հօփալը գարկի — Կան բոյսեր որ ջուրի մէջ կ'աճին. — Չուրի մէջին փայտի դասարկապտօս մարդիկ ասդին անդին կը բափախին. — Մուրացիկը ասդին անդին ուրբուրդին կը խնդրէ. — Բովկս մի՛ հեռանաւ — Սա տունին առջևի պարտէզին մէջ սանձեկներ կան. — Եղբորս իմ կնիքի — Բովի տունը բազմաթիւ վարձակալներ կան. — Դրան առջև կանգնեցանք :

381.—Հետեւեալ խօսքերուն մէջ շեղազիր նախադասութիւնները միւսին հետ ձուլեցէք, օրիակին հետեւելով .

Փշաւ այն տունը որ յերան սակ էր. — Անցայ անկ որ գնդին մօտ էր. — Մեմ կը քնակիմ այն սենեակը որ փողոցին վրայ է — Դարձիւր այն կողմէն որ դպրոցին ետին է. — Ո՛ր էր այն երիտասարդը որ Չարեհին հետ էր. — Տեսա՛ր այն տղան որ եղբւր էր. — Լոզցայ այն աւազակին մէջ որ պարտէզին մէջանցն էր օրինակ . — Լեռան սակի տունը փշա :

382.—Հետեւեալ խօսքերուն մէջ շեղազիր նախադասութիւնները պարագայական խնդիրներու վերածելով՝ միւսին հետ ձուլեցէք օրինակին պէս .

Աշխատէ՛ք որպէս զի մրցանակը օտիս. — Երբոր հօտ դաս կը սերտես. — Փահուեցայ միւսին որ վաճակն անցաւ. — Արտադրութեան վերջիններ կ'ընեն որպէս թէ խնկր էր. — Չես յայտնիք եթէ յաօխասիս :

383.—Լուծեցէ՛ք 379 եւ 380րդ հրահանգներէն ուսուցչին ընտրած նախադասութիւնները .

ԳՒՍ.—ՄԱԿԲԱՅՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

394.—Բացի այն բառերէն որոնք բնութիւնով թէ՛ աշական են թէ՛ մակբայ, բուն մակբայներէ ոմանք ալ երբեմն կրնան գործածուիլ իրրեւ ածական. օրինակ՝

Կանուխ մա՛ն. հայրաբար վարմունք, շայագին ա՛քեր, և այլն :

395.—Մակբայներուն իրրեւ լրացուցիչ կրնան ունենալ .

1.—Անուն կամ դերանուն խնդիր մը, կամ պարզայական խնդիր մը. օրինակ՝ հօրվին գաղտուկ փախաւ, ինձմէ ուշ կ'ելլէ, մինչև մանր հաւատարիմ մնաց, և ՚ն :

2.—Ուրիշ մակբայ մը. օրինակ՝ շատ ուշ, բոլորովին կանուխ, ակաւին երէկ, գրեթէ իսպառ և ՚ն :

ՄԱԿԲԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

396.—Մակբայը լուծելու համար պէտք է որոշել .

1.—Տեսակը կշանակաւորիչ, քանակական, են) :

2.—Այն բառը որուն իմաստը կը լրացնէ կամ կ'եղանակաւորէ :

ՀՐԾԱԿՆԳՆԵՐ

384.—Հետագայ նախադասութեանց մակբայներուն քով մէյմէկ լրացուցիչ աւելցուցէք .

Յիսուս աղփաս ապրեցաւ. — Զարեհ գոն կ'ապրի. — Օղերը գէշ կ'երթան.—Արեւը շնչակի կը զարնէր.—Զեփիւռը մեղմօրէն կը փչէր.—Այս խաղաք միշտ կ'ամճարեւէ :

Օրինակ. — Յիսուս շատ աղփաս ապրեցաւ. — Զարեհ իր վիճակէն գոն կ'ապրի :

385.—Հետեւեալ նախադասութիւններուն մէջ որոշեցէ՛ք թէ միեւնոյն բառը ո՛ր իրրեւ մակբայ գործածուած է, ո՛ր իրրեւ ածական

Անկէ ասպարեզի մէջ ստովին նուիրում պէտք է յայտելու համար.—Ստովին փարէ գործիչ.—Ուժգին հարուած մը ընդունեցի — Զանգակը ուժգին հնչեց — Յակոբ շայագին կ'աղօթէր.—Ներսէս շայագին շնչեղով երգ մը երգեց. — Երեսանց բարեկամութիւնը վստահեցուցէր.—Շողոմոսը մարդիկ երեսանց կը գովեն ուրիշները :

386.—Հետեւեալ խօսքերուն մակբայները՝ մէկ գիծով, անոնց լրացուցիչները՝ երկու գիծով ստորագծեցէ՛ք

Գրիգոր Տեղեկ աղէկ գիտցաւ դասը. — Յակոբ պատիժէ գլուխ մնաց. — Յատկէ խիստ սաստիկ կը օսէր. — Այսօր շատ կանուխ հագուած եր.—Ինձմէ գաղտուկ մեկնեցէր կ — Մարդիկ նուազ լանախ ուրիշներէ կը վնասուին ինքն իրենց իրենց. — Անկիստ բաւական ազնուօրէն վարուեցաւ — Ուղտը բոլոր կենդանիներէն աւելի խնայարար կ'ուրէ, կը խմէ.—Մեկն աւելի վերջ ալ աւելի պիտի աշխատի.— Ինչո՞ւ այսքան ուշ եկաք. — Այդքան արագ մի խաղէր. — Անեցեք շատ հասալ տեղս :

387.—Վերի հրահանգին նախադասութիւնները լուծեցէ՛ք .

388.—Հետագայ խօսքերուն մէջ որոշեցէ՛ք թէ ուր բառը ուրտեղ մակբայ է, ուրտեղ յարաբերական դերանուն .

Ո՛ր կ'ուզես որ երթամ.—Անցայ այն խաղաքն ուր հօրեղբայրդ կը բնակի.—Զեմ գիտեր թէ ո՛ր փախիլի պէտք է մտնի.— Տուն մը ուր մախութիւնը կը օրէ, օրինակեղի է. — Այս ճամբան ո՛ր կը օսնի :

ԳԱՍ.—ՇԱՂԿԱՊԵՐՈՒ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

397.—Շաղկապները էպպէս կը ծառայեն մէկէ աւելի անջատ նախադասութիւններ իրարու կցելու, ցոյց տալով անոնց միջեւ եղած այլեւայլ յարաբերութիւնները. օրինակ՝

Ճշմարտութիւնը կրնայ ժամանակ մը ծածկուիլ, քայց վերջապէս օր մը կը յայտնուի:

398.—Շաղկապները իրարու կը կապեն նաեւ համանման քանի մը նախադասութիւններ, զանոնք մէկի վերածելով և համապաշտօն բառերը միայն իրարու կցելով. օրինակ՝

Ոսկին և՛ արծաթը հաստատուն, իսկ ջուրն ու՛ ալբօլը հեղուկ մարմիններ են, փոխանակ ըսելու՝

Ոսկին հաստատուն մարմին է, արծաթը հաստատուն մարմին է, ջուրը հեղուկ մարմին է, ալբօլը հեղուկ մարմին է:

399.—Շաղկապը նախադասութեան մէջ անկախ դիրք ունի. ո՛չ անոր որեւէ մասին լրացուցիչն է, ո՛չ ալ լրացուցիչ կրնայ ունենալ:

—ՇԱՂԿԱՊԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

400.—Շաղկապը լուծելու համար պէտք է որոշել.

- 1.—Տեսակը (համադասական թէ ստորադասական ըլլալը).
- 2.—Թէ ո՛ր բառեր կամ նախադասութիւններն իրարու կը միացնէ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

389.—Հետեւեալ նախադասութիւններուն շաղկապները ջնջելով անջատ նախադասութիւններու վերածեցէ՛ք.

Մարդիկ բշուռ են յաճախ, որովհետեւ չար են. —Ճշմարիտ արծաթակիւղ, քիպէտեւ ծանձնակ մը անձեռուի, քայց վերջապէս կը գնահատուի. —Համեմատութիւնը յազարակիցն է ճշմարիտ օտարակցին, մինչ անբարտաւանութիւնը՝ սցիտութեան. —Երկրագործութիւնն ու վաճառականութիւնը կը հարստացնեն ժողովուրդը, ուստի պէտք է ոչո՛ք սալ այս միջոցներուն զարգացման. —Աղէկ գիրտը՝ ընկեր քարեկաններ և ուսուցիչներ են, իսկ գեղ գիրտը՝ յոռի ընկերներ. —Երիտասարդութեան մէջ աշխատեցի՛ք, քանի որ պիտի կրնա՛ք հաւգիտ ընել՝ երբոր ծերանա՛ք. —Թե՛ մտնուկը, թե՛ մասաղաւտուկը, երկուսն ալ պէտք ունին ինձանի, քանզի սկար են և՛ եկրակայ վսանգներու. —Ո՛չ շատ ցուրտը, ո՛չ շատ տաքը համեղի է մեզի. այլ քարեխառն կիլոսն. — Փիղը շատ կը սիրէ անուշահոտութիւնները, մանաւանդ հոգա՛րէ ծաղիկները:

Օրհնակ. —Մտնուկը պէտք ունի ինձանի, մասաղաւտուկը պէտք ունի ինձանի, երկուսն ալ սկար են, երկուսն ալ եկրակայ են վսանգներու:

390.—Վերի հրահանգին նախադասութիւնները լուծեցէ՛ք.

391.—Հետեւեալ խօսքերուն մէջ որոշեցէ՛ք թէ՛ ալ, ոչ՛ քան որքանով սովորեղ մակըայ են, ո՛րք տեղ շաղկապ:

Օղն ալ կազայիւն մտնիւն մըն է. — Ա՛յ պիտի աշխատի միջնաօրէնը. — Ինձի ալ ի՛նչ մը բար տու. — Ի՛նչ, ա՛յ համբերութիւնս հաստատուի կ'անցնի և՛ ու՛ ի՛նչ քան ի՛նչ զանազան:

Այն օրը ո՛չ մարդ գիտէ, ո՛չ հերեշակ. — Ո՛չ, ի՛նչ ուզեր որ ինձի հետեւիս. — Ո՛չ աղիտը, ո՛չ հարուստը կրնան զերծ մնալ մահուցէն. — Եղբայրդ պիտի գա՛յ թե՛ ոչ. — Ո՛չ զայն գիտեմ, ո՛չ երբա՛յր:

ԴԱՍ. — ԶԱՅՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

401. — Զայնարկութիւնն ալ՝ շաղկապին պէս, նախադասութեան մէջ անկախ գիրք ունենալով ո՛չ մէկ մասին քաջուցիչը է: Բայց ինք քաջուցիչ կրնայ ունենալ. օրինակ՝

Վա՛յ կեղծաւորներուն, Երանի՛ ձեզի, Ելն՝ .

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ե Ե Ր

392. — Հետեւեալ անջրտ նախադասութիւններն իրարու միացուցէք պատշաճ շաղկապներով.

Մարդիկ երջակութիւնը կը հետապնդեն, անոր կը մօտենան, գրեթէ զայն կը շօշափեն, անիկա կը բռչի, կը խուսափի. — Ոսկին քանկագին է, աղաւանդը անլի քանկագին է. — Գիտցիկն կ'ըսէր. «Մարդիկ զիս կը ծաղրեն, ես ծաղրուած չեմ գգար ինկզնեմս». — Հաւը բնութեամբ երկուս է, իր վառեակներուն վրայ յարձակում մը եղա՛ւ, արծիւի մը լափի տայ կը դառնայ, արխար կը պաշտպանէ զանոնք. — Կանչուածները շատ են, սիւերն են բնորոտ. — Աշունը կ'անցնի, ձմեռը կուգայ, բնութիւնն իր զարդերէն կը մերկանայ, շուտով գարունը կուգայ, բնութիւնը ևորէն կը զարդարուի. — Քաղաքակրթութիւնը իր օգուտները ունի, իր վնասներն ալ ունի. — Ծուրսքիւնը դանդաղ կ'ընթանայ, աղիւսութիւնը ետեւէն կը հասնի:

Օրինակ. — Մարդիկ երջակութիւնը կը հետապնդեն, մինչև իսկ անոր կը մօտենան եւ գրեթէ զայն կը շօշափեն. սակայն անիկա կը բռչի ու կը խուսափի:

393. — Հետեւեալ խօսքերուն մէջ բերանացի որոշեցէ՛ք թէ որ բառը ո՛ր տեղ շաղկապ է, ո՛ւրտեղ դերանուն.

Պատու՝ ծնողիդ որ ինչ խնամած է. — Պատու՝ ծնողիդ որ անոնց օրհնութիւնն ընդունիս. — Խոնարհեցէ՛ք միշտ եղեգին պէս որ չխորսակիք. — Ըրէ՛ք այն քանը որ ինչի հաճելի է. — Առական եղեգը որ փոքրիկի ասեմ ծնեցաւ, նշան է խոնարհութեան. — Մի նստասե՛ք ո՛չ մէկը որ դուք ալ չնստասուիք ո՛չ մէկի. — Իր սիրոջ կը դառնայ այն նստասիւնը որ անխառնար արձակուած է. — Պէտք չի որ նստան-

ծիք ուրիշներու ունեցածին. — Գիտցէ՛ք որ ճշմարտութիւնը չի խափանուիր:

394. — Հետեւեալ նախադասութիւններուն պարունակած ծայրագիծով ստորագծեցէ՛ք:

Երանի՛ անոնց որ առանց տեսնելու կը հաւատան. — Տղաք, ինչո՞ւ ինչոք չիք կենար, աւօ՛ք ձեզի. — Անա՛ղ անցաւոր փառներուս, ըսած է ժամանակաւ Արտաշէս. — Անե՛ք ձի այն ծնողներուն որ իրենց զաւակները մոլորեալ կ'առաջնորդեն. — Ո՛հ, անկես ալ մեղաւորներ ենք, վա՛յ մեզի եթէ Աստուծոյ գրութիւնը չհասնի. — Մե՛ղք աշխատութեան, բոլոր ջանքերս ապարդիւն եղան:

395. — Ամբողջապէս լուծեցէ՛ք վերի թիւ՝ 392, 393 եւ 394 հրահանգները:

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԼՈՒՌ ԱՐՅՈՒՆՔՆԵՐ

Բունէ՛դ ելած յարգերուն մէջ
Կը թափառուի զուարթագին,
Մինչ զաշտին վրայ ցօղաթուրմ, գէջ,
Կը տարածուի կապոյտ երկին:

Ու տակաւին երբ դուն անփոյթ
Կը նիրհէիր խորունկ խորունկ,
Մինչեւ առտու երկին կապոյտ
Թափեց առատ անձրեւ-արցունք:

Գիշերուան մէջ լսիկ, արթուն՝
Վիշտէն կուլան շատեր յաճախ,
Մինչ կը թըլի ձեզի առտուն
Թէ անոնց սիրան է յար ուրախ.
Թրգվ. Գ. Յ. ԿԻՒԼԵԱՆ

Թեյաղբուրիւն. — Գոց արտասանել այս ոտանաւորը, բացատրել իմաստը, ուղղագրել նոյնը.

Ժ. ՔԵՐԵՆԸ

ԳՂՍ. — ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ

402. — Խօսքի մը պարունակած նախադասութիւնները իրարու հետ կ'ուեննան իմաստի զանազան աւելնչութիւններ և յաճախ կը ծառայեն զիրար լրացնելու :

403. — Բացարձակ կամ անկախ կը կոչուի այն նախադասութիւնը որ ինքնին ամբողջ իմաստ մը կը յայտնէ առանց ուրիշ նախադասութեանց օգնութեան . օրինակ՝

Մարդկային կեանքը կարճ է :

404. — Իրարու հետ իմաստի աւելնչութիւն ունեցող մէկէ աւելի անկախ նախադասութիւններ կը կոչուին հաւնադաս նախադասութիւններ :

405. — Համադաս նախադասութիւններն իրարու կը միանան կամ համադասական շաղկապներով կամ պարզ յարաբերութեամբ . օրինակ՝

Ժամանակը կ'անցնի, մարդիկ կը փոխուին և իրարու կը յաջորդեն, բայց աշխարհ նոյնը կը մնայ :

406. — Գլխաւոր կը կոչուի այն նախադասութիւնը որմէ կախում կ'ուեննան ուրիշ նախադասութիւններ, օրինակ՝

Արեւը կը տաքցնէ երկիրը (ուր կը բնակինք) :

407. — Ստորադաս կամ զրահարցիչ կ'ըսուի այն նախադասութեան որ գլխաւոր նախադասութենէ մը կախում կ'ուեննայ և զայն լրացնելու կը ծառայէ : Վերի օրինակին մէջ «ուր կը բնակինք» խօսքը ստորադաս նախադասութիւն է :

408. — Ստորադաս նախադասութիւնը գլխաւորին հետ կապուած կ'ըլլայ կամ յարաբերական դերանունով, կամ ստորադասական շաղկապով . օրինակ՝

Իմ ետեւէս եկէք երկ զիս կը սիրէք . — կը ճանչնամ այն մարդը՝ որուն հետ կը խօսէիր :

409. — Ստորադաս նախադասութիւնը երբեմն զբաւարար նախադասութեան մարմինին մէջ մտած կ'ըլլայ և այն ատեն կը լինի Միջակակէս ստորադաս . օրինակ՝

Այն տունը ուր կը բնակիմք, քաղաքէն դուրս է : Այս խօսքին մէջ «ուր կը բնակինք» միջակակէս ստորադաս նախադասութիւն է :

ԸՆԹԵՐՑՈՒՄ. — ՉՄԵՌԸ

Տխուր ձևերը մեղեդութեան ու հակզիսի եղանակն է : Առաջին ցուրտերը ազդանշանն են բնութեան փոփոխութեան : Մտերը կը վերկանան իրենց տեղերէն ինչ կ'անկանայ : Մտերը կը վերկանան երգեցիկ թռչուններէ և կը քողարկեն իրենց դալարագեղ պերճանքը : Հօտերը վերսին կը մտնեն իրենց գոմերը և մշակները : Օրերը սաղմ իրենց աշխատութեան, կը լինեն դաշտերը : Արեւը աւելի կարճ են, գիշերները՝ աւելի երկար . արեւը ցածր երկար ատեն կը մնայ հորիզոնին վրայ և աւելի խոստումնակի կ'ուղարկէ մեզի իր լոյսն ու ճառագայթները : Ինչ որքան ու նսեմ պատկեր կը ներկայացնէ այն ատեն ցգեղացած բնութիւնը :

Չմեղքը կը համապատասխանէ ծերութեան որ վերջին շրջանն է մարդկային կեանքին : Ծերունին տխուր է անոր նման . կը սիրէ հակզիսը և կը փախչի հաճոյքներէ : Ան քշուտ է քանզի անցեալին կը նայի :

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

396. — Օրինակեցէք վերի հատուածը, նախադասութիւններն իրարմէ զատելով ուղղահայեաց գիծերով :

397. — Որոշեցէք բերանացի նոյն հատուածին պարունակած նախադասութեանց տեսակները անկախ, համադաս, գլխաւոր կամ ստորադաս ըլլալը :

398. — Վերի հատուածին խորագիրը «Գարուն»ի փոխելով վերտին գրեցէք, գործածելով շեղագիր բառերուն հականիշները .
Օրինակ. — Զուարթ գարունը կենդանութեան եւ աշխատութեան նշանակն է ելն :

ԴԱՍ. — ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ

410. — Որ և է նախադասութիւն տրամաբանօրէն կը բաղկանայ 2 մասէ. ենթակայ և ստորոգելի :

411. — Ենթակաւ նախադասութեան տէր բային է՝ իր լրացուցիչներով միասին. ստորոգելին նախադասութեան բայն է՝ իր լրացուցիչներով միասին. օրինակ՝
Բոլոր մարդիկ մահկանացու են :

Շոգենաւը ալեկոծութեան հանդիպեցաւ :

Այս նախադասութեանց մէջ «բոլոր մարդիկ» «շոգենաւը» ենթակայի մասերն են. «մահկանացու են» «ալեկոծութեան հանդիպեր է» ստորոգելիի մասերը :

412. — Տրամաբանական լուծում կը կոչուի այն գործողութիւնը որով խօսքի մը պարունակած նախադասութիւնները, անոնց տեսակները եւ մասերը կ'որոշենք. օրինակ՝

Հիները կը կարծէին թէ արեւը կը դառնայ երկրին շուրջ :

Այս խօսքը կը պարունակէ երկու նախադասութիւն :

Առաջին նախադասութիւնը՝ «հիները կը կարծէին»

գլխաւոր նախադասութիւնն է :

Երկրորդ նախադասութիւնը՝ «արեւը կը դառնայ երկրին շուրջ», ստորադաս նախադասութիւն է որ գլխաւորին հետ կապուած է «եթէ» ստորադասական շաղկապով :

Գլխաւոր նախադասութեան ենթական է՝ «հիները». ստորոգելին՝ «կը կարծէին» :

Ստորադաս նախադասութեան ենթական է՝ «արեւը». ստորոգելին՝ «կը դառնայ երկրին շուրջ» :

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ը

399. — Օրինակեցէ՛ք հետագայ խօսքերը՝ նախադասութիւններն ու անոնց ենթակայի եւ ստորոգելիի մասերը օրինակին պէս գիծերով իրարմէ զատելով յետոյ բերանացի կատարեցէ՛ք նոյն խօսքերուն տրամաբանական լուծումը :

Մարգարիտը սեսակ մը ուսրեկ կ'էլէ եւ խոշորները շատ քակկազին են. — Հայրիկը կաղակոյն ճուրճեր պիտի սայ մեզի երկ քարի ըլլանք. — Այս կեանքը կարճ է, քայց գերեզմանէն անդին ակնակոյրիս կայ. — Մինչեւ որ հասնը քարակնայ, քարակն հոգին կ'էլէ. — Այն գեղը ուր մկրտեցաւ Բրիտան, կը կոչուի Յորդանան. — Սիրէ Աստուածը, սիրէ ընկերոջ տւակնի պէս. անա՛ ստանք են Յիսուսի մեծագոյն պատմութիւնները. — Մոն Պալմ շեր Արքեպիսկոպոս քարձապոյն գազաքն է. — Իծուարին է այն ճամբան ուրիկ մարդ կրնայ հասնիլ իրական փառքի. — Ամբարիշտը քիտ ի՞նչ մը ասել քարձակայ, քան ի՞նչ կը կործանի. — Հաստատակ է կը սպասէ, երբեք ոչ, երբ պիտի յաշտի. — Մանը ակնուրեմ մեզի կը սպասէ, երբեք ոչ, երբեք քան կանուխ. — Ոսկին երկ ճոյնիակ աղբերուն մէջ ձուլի, քարձակ ոսկի է. — Աշխատքիւնը առողջութեան երաշխիքն է, ուրեք ծոյր մի ըլլաք. — Նաւը որով կը ճամբորդի, հայկական շոգենա մըն էր. — Ուր որ շարժուէ կայ, հոն կեանք կայ. — Բարեբաւ արեւը ակնուրեմ կեանք է յոյս կը սփռէ :

Օրինակ. — Մարգարիտը | սեսակ մը ուսրեկ կ'էլէ | եւ խոշորները | շատ քակկազին են || :

400. — Հետագայ գլխաւոր նախադասութեանց կցեցէ՛ք մէյմէկ յարմար ստորադաս լրացուցիչ նախադասութիւն,

Կագ եւ կոխ կը վերան երկ... — Իրանի գօտի կը ծագի երբ... — Արժիւնտը կը ժողովուրդն ուր ու... — Խաւարք ի փարսիս մինչեւ ու... — Պիտի շափուիք այն շափով որով... — Թեւոր ... պիտի վարձատրուիք. — Երբ... փայտի կը դառնայ :

Օրինակ. — Կագ եւ կոխ կը վերան երկ հաշտութիւնը սիրէ :

401. — Յետագայ համադաս նախադասութիւնները գլխաւոր եւ

ստորադաս նախադասութեանց վերածեցէք, օրինակին հետեւողութեամբ, շեղագիր նախադասութիւնները ստորադաս ընելով:

Գուն բեզի օգնէ եւ Ասուած ալ ինչի կ'օգնէ. — Ըսէ՛ բնկերդ եւ ես ինչի կ'ըսեմ քե ով ես — Հաւասարի՛մ եղէ՛ք եւ վարձքն պիտի ընդունիք. ժամանակը խնայութեամբ գործածեցէ՛ք եւ շատ պիտի օգտուիք. — Հօգօր կամք ունեցէ՛ք եւ ամեն խոչընդոտ պիտի գլխակցեցնիք. — Երեւո՛ւ չար բնագոյնեւոյ յաղթել, մեծ յաղթութիւն մը ստրած կ'ըլլաս:

Օրինակ.— Երե դուն ինչի օգնես, Ասուած ալ ինչի կ'օգնէ:

402.— Հետեւեալ գլխաւոր ստորադաս նախադասութիւնները համադաս նախադասութեանց վերածեցէք, օրինակին հետեւողութեամբ, շեղագիր նախադասութիւնները հրամայական ձեւի դարձընելով:

Սրէ բարիք գործես, երբեք պիտի չզղչաս. — Սրէ բիչով գոհանանք, երջանիկ կ'ըլլանք. — Թէ՛ որ չափազանցուրիւններէ զզուսանամք, երկարամեայ պիտի ըլլաք. — Սրէ սոսիկ բանի մէջ հաւասարիմ ես, մեծիմ մեջ ալ հաւասարիմ կ'ըլլաս. — Թէ՛ որ օրտանց խնդրէք, պիտի տուի մեզի մեր խնդրանքն:

403.— Հետագայ խօսքերուն մէջ շեղագիր ստորադաս նախադասութիւնները գլխաւորին մէջ ձուլեցէք, օրինակին հետեւողութեամբ, եւ անկախ նախադասութեանց վերածեցէք.

Դժուար է գտնել բան մը որ մանրէներէ զերծ լինի. — Չկայ զգացում մը որ սէրէն աւելի անուշ ըլլայ. — Թշուառ կ'ըլլան այն տղանք որ ուսման մէջ անհարբիւր են. — Մանկապարտեզի մէջ կ'աւանդուի ուսում մը որ լիովին մանկակառն է. — Ով որ ուրիշները կը յարգէ, ինք ալ ուրիշներէ կը յարգուի. — Այն տղանք որ կ'աւելանան, յառաջ կ'երթան. — Հասկցե՛ք ինչ որ քսի. — Չեզի որ մանուկներ էք, ուսման հետ միասին խաղ ալ պիտի կ:

Օրինակ. — Մանրէներէ զերծ բան մը գտնել դժուար է:

404.— Վերի հրահանգին նախադասութեանց քերականական եւ տրամաբանական լուծումը կատարեցէք զըստօրայէս.

ՍՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԻՆՉ Կ'ՍՐԺԷՐ

Եթէ չըլլար աղջամուղջը,
Եւ գիշերներն իր համասփիւռ
Հիւլէները սե տխրաբոյր
Չծառարկեր բնութեան շուրջը,
Վառ արշաղոյսն ի՞նչ կ'արժէր:

Եթէ ձմեռ չգար երբեք,
Եւ իր սառն ու խամրող ցուրտը
Չեղծեր բնութեան արդուգարդը,
Չգարձնէր զայն կմախք հէք,
Շինդ գարունն ի՞նչ կ'արժէր:

Եթէ լինէր որ մութ ամպեր
Չդիզուէին սե, տխրագին
Մթազնեղու շուրթն երկիւնիին
Եւ սիրտերը մեր վշտանէր,
Պայծառ երթնն ի՞նչ կ'արժէր:

Եթէ երբեմն ծովուն նիրհող
Խենդ աղիքներն՝ անեղապէս
Չարթննային փրփրադէզ,
Տալով մեզի սարսափ ու դող,
Խաղաղիկ ծովն ի՞նչ կ'արժէր:

Եթէ բնու դառն արցունքը,
Կաթիլք ցառոտ հողիներու,
Չպարտէր վառ աչքերու
Մէջ ցուցող ջիւղ երկինքը,
Անուշ ժպիտն ի՞նչ կ'արժէր:

Թէ վիշտերու ժանկ մանրէնէր
 Չծխրհին մեր սիրան, հոգին,
 Եւ համեմն այս տափակ կեանքին
 Տառապանիք թէ չլինէր,
 Երջանկութիւնն ինչ կ'արժէր:

Թէ չը փրչէր մահուան մէջմն ալ
 Շունչը խամրիչ ու թունալիր,
 Ոչ ոք վախնար թէ օր մ'ալ իր
 Պիտի մարտի կեանքի մօմն ալ,
 Կեանքն իսկ բան մը չէր արժիր...:

ՅՈՎ. Հ. ԳՍ.ԶԱՆՃԵԱՆ

Թեկադրութիւն. — Գոց արտասանել այս ոտանաւորը, արձակի վերածել զբաւորապէս, զործածելով շնորհալիր բառերուն հոմանիշները, ցոյց տալ փոխաբերական իմաստով զործածուած բառերը.

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԻԹԵՐ
ԱՆՀՆԱԶԱՆԻ ԳՍ.ՈՆՈՒԿԸ



Նախագիծ. — Իրիկուն է, ոչխարները հովիւէն առաջնորդած, ագարակ կը մտնեն. ֆորբիկ սիրուն գառնուկ մը՝ հակառակ մօրը յորդորին, նախիրէն կը հեռանայ. Անտառին մօտ գիշերը վրայ կը համնի. Յանկարծ ոռնումի ձայներ... գառնուկը սարսափած կ'ուզէ փախչիլ բայց... (ի՛նչ կը պատահի): Տղայ մը պարտի հնազանդիլ իր մօրը.

ՈՒՂԱՄՏՈՒԹԻՒՆ



Նախագիծ. — Անծրեւոտ օր մը. Յակօր դրամապանակ մը կը գտնէ փողոցէն.
 2. Իր տիրոջը կը դարձնէ զայն. (Շարադեցի՛ այս եփքը վերի պատկերներուն արտայայտած մանրամասնութիւններուն հաւանայն եւ խօսեցնելով անձերը, եզրակացուցի՛ք բարոյականը):

ՇՈՒՂՈՒԹԵԱՆ ՀՆՏԵՒԱՆՔՆԵՐ



Նախագիծ . — 1. Դպրոցի ժամանակն է . 2. Լեռն և Մեսրոպ աւելի կը նախընտրեն խաղալ գետեղերքը և կը չմշկեն սառույցին վրայ . — 3. Սառույցը կը կտորի և ... բարեբախտաբար երկու գիւղացիներ . . . :

ԸՆՏԱՆԻ ԿՆՆՎԱՆՔՆԵՐԸ



Նախագիծ . — Մարդիկ կարգ մը կենդանիներ ընտանեցուցած են (ի՞նչ բանի հասար). ընտանեցուցած կենդանիներն են է. ք. կովը, այծը, հաւը, խոզը, ուղտը, կատուը . աւելցուցե՛ք վերի պատկերին ներկայացուցած միւս ընտանի կենդանիները եւ ուրիշ ի՞նչ ընտանի կենդանիներ որ կը ձանձկանա՛ն : Այդ ընտանի կենդանիներէն իւրաքանչիւրին ի՞նչ բանի զործածուիլը և մատուցած ծառայութիւնները մարդոց :

ՉԱՐԻՔԻ ԳԷՄ ԲԱՐԻՔ



Նախագիծ . — 1. Պզտիկ հովիւը ոչխար կ'արածէ ճամբային եղերքը . կառք մը կ'անցնի (յիշէ՛ր կառքին տեսակը) . աղոց ուրախութիւնը կառքին մէջ . կառքի վառարանը խարազանի հարուած մը կուտայ (որո՞ւ . ինչո՞ւ հաւատարմութիւնը) . — 2. Վերադարձ, ձին կը կատղի . — 3. Ինչ կ'ընէ պզտիկ հովիւը . — 4. Փրկուած են : Տղաք իրենց երախտագիտութիւնը կը յայտնեն հովիւին և կը ցաւին խառաղանի հարուածին համար :

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ԿԸ ՍԻՐԵՄ ՄՈՅՐՈ

Նախագիծ . — Ինչո՞ւ համար կը սիրեմ մայրս, որովհետեւ երբ շատ փոքրիկ էի՛ ան . . . որովհետեւ երբ հիւանդ էի՛ ան . . . Զանի կը սիրեմ որովհետեւ . . . որովհետեւ . . . (քուեղե՛ք պատճառները) :

ՄԱՐԳՆԱԳՆԱԳԵԼԸ



Նախագիծ. — 1. — «Արշակ, սա կողովը մեծ ձորդ տունը տամբ. 2. — «Ահ, Աստուած իմ, մարդագայլ մը . . . 3. — «Օգնութիւն, օգնութիւն, կորսուած եմ. . . 4. — «Անմիտ ս'ըր է մարդագայլը, ասոր կ'ըսեն խրտուիլակ զոր մրգաստաններու մէջ կը կանգնեցնեն կենդանիները ու թռչունները հեռացնելու համար, (Շարտրեցիք այս պատուածի վերի պատկերներուն արտայայտած մանրամասնութիւններով):

ՇՆՈՐՀԱՆՈՐԵԱՆՆ ԿԱՄԱԿ

Նախագիծ: — Վահրամ իր հեռակայ մեծ հօր և մեծ ձոր նամակ կը գրէ նոր տարիի առթիւ, կը յայտնէ իր շնորհաւորութիւնները, իր սիրոյ, յարգանքի և կարօտի զգացումները և մաղթանքներով կը վերջացնէ. (Ձեր ընտանեկան պարագաներուն յարմարեցնելով շարտրեցիք այս նամակը):

ԳՍՄԸ



Նախագիծ. — 1. — «Պահ, դամ մը պակաս հոգ չէ»: 2. Ձիուն մէկ պայտը կ'իյնայ: 3. Ձին կը կաղայ: 4. Գողեր կը հետապնդեն գիւղացին որ չկրնար ձին փակցնել: 5. Գիւղացին կը կողոպտուի գողերէ: 6. Գիւղացին կը խորհրդածէ անձրեւին տակ ինքիւն խօսելով: (Շարտրեցիք այս պատկերով վերի պատկերներուն թելադրած մանրամասնութիւններով. կըրակացուցիք բարոյակակը):

ԳՊՐՈՅԸ

Նախագիծ. — Նկարագրեցէք մեր գպրոցը, մեր թաղը կը զրտնուի այն, ինչ կը կոչուի, ո՞վ հիմնած է . . . մեր թռականին, քանի՞ յարկ է շէնքը, ինչ մասեր կը պարունակէ (դասարան, սերտարան, ճաշասրահ, գաւիթ, պարտեզ, եւն.): Քանի՞ աշակերտներ կ'ուսանին հոն, քանի՞ կարգերու բաժնուած են, Քանի՞ ուսուցիչներ ունիք, ինչ դասեր կ'աւնէք, մեր դասն ամէնէն աւելի կը սիրէք եւ ինչու համար . . . եւն.:

Հ Ա Յ Ը




Նախագիծ . — 1. Կը հերկեն . — 2. Կը ցանեն . — 3. Կը հնձեն . — 4. Կը գամեն . — 5. Կ'աղան . — 6. Հաց կ'եփեն : (Վերի պատկերներուն հաւսածայն շարադրեցիք հացին պատրաստութեան պատմութիւնը) :

Ն Ա Մ Ս Կ

Նախագիծ . — Հրդեհը այրած է վերջերս Վահանի դրացի աղքատ ընտանիքի մը տնակը . այդ ընտանիքը՝ անպատասպար : Վահան կը գրէ իր բարեկամ Գեղամին որ ինքն ալ իր նպատար միացնէ իրենին , արուելու համար այդ դժբախտ ընտանիքին : Անոր թշուառութեան նկարագրութիւնը կ'ընէ և կանխաւ կը յայտնէ իր շնորհակալութիւնը , վստահ Գեղամի սրտին բարութեան վրայ :

Հ Ա Գ Ո Ւ Ս Տ Ե Ն Ե ր Ը



Նախագիծ . — 1. Բուրդը կը խուզեն : 2. Բամպակը կը քաղեն : 3. Բուրդը և բամպակը մանածի կը վերածեն և կը գործեն կտաններ ու կերպասներ : 4. Կը ձևեն և հագուստ կը կարեն (պատկերներուն հաւսածայն շարադրեցիք թէ ինչպէս կը պատրաստին հագուստները) :

Ն Ա Մ Ս Կ

Նախագիծ . — Գեղամ կը պատասխանէ Վահանի նամակին (Տե՛ս նախորդ էջին նախագիծը) : Այդ հրկիզեալ ընտանիքին թշուառութիւնը իր ալ գուժը շարժած է և անմիջապէս կը զրկէ գումար մը : Շնորհակալութիւնը կը յայտնէ Վահանի՝ զինք խորհած և բարի գործ մը կատարելու պատենութիւնը հայթայթած ըլլալուն համար :

ՃԱՄԱՐՈՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Նախագիծ . — Ճամբորդութիւնները ցամաքի վրայ (ի՛նչ կերպով կը կատարուին) . ծովու վրայ (ի՛նչ կերպով) . օդին մէջ (ի՛նչ կերպով) . որո՞նք են ճամբորդութեան ամենէն հին կամ նախնական միջոցները . ամենահին ժամանակներու մէջ որո՞նք եղած են առաջին նաւարկու ժողովուրդները : Ո՞վ հնարեց շոգենաւը և ե՛րբ . ո՞վ հնարեց շոգեկառքը և ե՛րբ : Վերջացուցէ՛ք աւելցնելով թէ ինչ ճամբորդութիւններ կատարած էք և ճամբորդութեան ո՛ր ձեւն աւելի կը սիրէք :

Ն Ա Մ Ա Կ

Նախագիծ . — Գրիգոր, Յովսէփին նախկին դասընկերը, ուրիշ քաղաք մեկնած է մեծ դպրոց մտնելու համար . Յովսէփ անոր կը գրէ յայանելով իր կարօտը ու սէրը, ակնաբերութիւն կ'ընէ իրենց հին յիշատակներուն եւ կը խնդրէ որ իր լուսանկարը դրկէ զօր շքանակի անցնել պիտի տայ եւ իր սենեակը դնէ . Այդ լուսանկարը իր կարօտը պիտի սփռի՞ եւ հին յիշատակներ պիտի վերյիշել տայ . Շարադրեցէ՛ք այս նամակը .

Հ Ր Գ Ս Հ Ը



Նախագիծ . — 1. Գիշեր . տուն մը կրակ տուած է , ջրհանկիրները կը հասնին , ամբօխը կը վազէ . — 2. Ծուռկի եկած՝ կին մը կ'ողբայ կը կոծէ : Երիտասարդ գործաւոր մը անոր յուսահատութեան պատճառը կը հարցնէ . խեղճ կինը ցոյց կուտայ բոցերուն մէջ տունը ուր . . . — 3. Գործաւորը առաջ կը նետուի . պատուհանէն ներս կը մտնէ (ի՛նչպէս) . — 4. Տունին մէկ մասը կը փլի . ամէն մարդ գործաւորը մեռած կը կարծէ . — 5. Վերջապէս պատուհանէն կ'երեւի . — 6. Ամէն ոք զինք կը շնորհաւորէ և կը ծափահարէ :

Տ Ո Ւ Ն Ը

Նախագիծ . — Սուրեն կը բացատրէ իր քրոջ Զարուհիին թէ ի՞նչ-ձածուած զանազան գործաւորներն ու արհեստաւորները (ճարտաբապետ, հիւսն, որմնագիր, ձեփիչ, նկարիչ, կոպրարար, ապակեգործ, եւն .) Ասոնց իւրաքանչիւրին դերն ու գործը . Անկարելի է որ մէկ մարդ մը այս բազմատեսակ արհեստները գիտնայ, Խորհրդազօծութիւն մը աշխատութեան բաժանման օգուտներուն վրայ .

Գ Ի Ն Ի Ն



Նախագիծ. — 1. Այգեկութիւն. — 2. Խաղողը կը ծմին հնձանին մէջ, յետոյ մամուլի տակ կը սեղմեն. — 3. Տակառներու մէջ կը փոխադրեն հնձանէն. — 4. Շիշերու մէջ կը լեցրնեն. (Պատկերներուն հետեւելով շարատրեցէ՛ք գինիի պատրաստութեան պատմութիւնը:)

Մ Ն Տ Ա Ք Ս Շ

Նախագիծ. — Արեւելեան առած մը կ'ըսէ. — Համբերութիւնով բուրբի սերերը բեհեգի կը փոխուի: Ինչպէ՞ս կ'ըլլայ ասիկա, բացատրեցէ՛ք նկարագրելով մետաքսի պատրաստութիւնը:

Ն Ա Մ Ա Կ

Նախագիծ. — Հրանտ երէց եղբայր մը ունի որ մեծ քաղաք մը մեկնած է, երկու ամիսէ ի վեր: Կը գրէ իր այս եղբորը զանի յանդիմանելով որ մինչեւ հիւս նամակ մը զրած չէ իրեն, հակառակ տուած խտտումին: Կը հարցնէ անոր առողջութիւնը, հանգստութիւնը, եւ թէ համեղի եղա՞ծ է իրեն իր նոր բնակավայրը: Կը յայտնէ իր կարօտը: Կը խօսի իր ընտանիքին վրայ, Կը վերազանէ նամակը յոյս յայտնելով իրմէ թիչ ատենէն ստանալու երկար նամակ մը: (Շարադրեցէ՛ք այս նամակը):

Ն Ա Ք Ա Ն Ա Ն Ի Թ Ի Ն Մ Ը



Նախագիծ. — 1. Ծովը հանգարտ, օդը... ձրկներսները արեւածաղին կը մեկնին. մայր մը (նոր տղայ) իր որդին կ'ողջագուրէ: 2. Բաց ծովուն մէջ ուռկանը կը նետուի: 3. Դէպի կէսօր փոթորիկ կը ծագի: 4. Նաւակը կը շրջի, ձկնորսները ջուրին մէջ նաւակին բեկորներուն կառչած: 5. Ծովեզերքէն դիտուած է աղէտքը. օգնութեան կը փութան: 6. Ազատուած են. ընդհանուր հրճուանք. ողջագուրումներ:

Ն Ա Մ Ա Կ


Նախագիծ. — Գարոյցական մը իր մէկ բարեկամին նամակ գրելով կը նկարագրէ իր կատարած մէկ պտոյտը: (Շարադրեցէ՛ք այս նամակը նկարագրելով ձեր անձնապէս կատարած մէկ պտոյտը):

Կ Ե Ր Զ

ՑԱՆԿ ՎՐԻՊԱԿՆԵՐՈՒ(°)

էջ	Տող	
12	4—5	(Սխալ) Ուղղագրութիւնը երկու տեսակ է. Կանոնական եւ սովորական. (Պեքսէ է ջնջել այս երկու տղերը):
211	15	(Սխալ) Բունէդ ելած. (Ուղիղ) Քունէդ ելած:
212	15	(Սխալ) յարարերութեամբ (Ուղիղ) յարագրութեամբ:
216		(402րդ հրահանգի տակ գրուելիք օրինակը մոռցուած է. պէտք է աւելցնել հետեւեալ կերպով)

Օրինակ.— Բարիք գործեւ երբեք պիտի չզղչաս:



(*) Կը խնդրուի յարգ. ուսուցիչներէն նկատի առնել այս վրիպակները որ սարգած են մեր կամքէն անկախ պատճառներով եւ զանոնք կանխաւ ուղղել զբքին մէջ:

ՑԱՆԿ ԴԱՍԵՐՈՒ

Յառաջարան	էջ 6.
Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք	
Բառ, վանկ, տառ	7
Տառերուն տեսակները	8
Առողջանութիւն եւ առողջանական նշաններ	10
Ուղղագրութիւն եւ կէտադրութիւն	12

Բ Ա Ռ Ե Ր Ո Ւ Ն Տ Ե Ս Ա Կ Ն Ե Ր Ը

Խօսքին մասերը	17
ԱՆՈՒՆ ԿՍԻ ԳՈՅԱԼԱՆ	
Անուններու տեսակները	17
Գոյականին թիւը	20
Գոյականին յօդը	22
Գոյականին հոլովը	24
Կանոնաւոր հոլովումներ	26
Անկանոն հոլովումներ	28
Ձայնական փոփոխութիւններ	30

ԱՆՍԱԿՆ

Ածական եւ իր տեսակները	34
Որական ածական	34
Թուական ածական	36

Յուցական ածական	38
Անորոշ ածական	40

ԴԵՐԱՆՈՒՆ

Դերանուն և իր տեսակները	43
Անձնական դերանուն	43
Փոխադարձ և անդրադարձ դերանուններ	46
Յարաբերական դերանուն	48
Յուցական դերանուն	50
Ստացական դերանուն	52
Անորոշ դերանուն	54

ՔԱՅ

Բայ և իր հանգամանքները	58
Բային դէմքն ու թիւը	60
Բային ժամանակը	60
Բային եղանակը	62
Եւ բային խոնարհումը	64
Բային լծորդութիւնն ու խոնարհումը	66-68
Ա. լծորդութիւն. գրեչ (խոնարհում)	70
Բ. » խօսիչ (»)	72
Գ. » կարգաչ (»)	74
Կանոնաւոր, զարտուղի և անկանոն բայեր	76
Յուցակ զարտուղի բայերու	78
Յուցակ անկանոն բայերու	80
Թողղոչ բային խոնարհումը	81
Պակասաւոր և բազադրեալ բայեր	84
Բայերուն տեսակները	86
Հական բայ	86
Ներգործական և չեզոք բայ	88
Անցողական բայ	90

Կրաւորական բայ	92
Փոխադարձ և անդրադարձ բայեր	94
Եւ բային ժխտական խոնարհումը	96
Բայերու ժխտական ձեւը	98
Խոնարհում ժխտական բայերու	100-105

ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ

Նախադրութիւն և իր տեսակները	106
Նախադրութեան խնդիրը	108

ՄԱԿԱՅ

Մակբայ և իր տեսակները	110
Մակբայական ասացուածներ	112

ՇԱՂԿԱՊ

Շաղկապ և իր տեսակները	114
---------------------------------	-----

ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Ձայնարկութիւն և իր տեսակները	116
--	-----

Բ Ա Ռ Ե Ր Ո Ւ Ն Շ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Հոմանիչ, հականիչ և բազմանիչ բառեր	118
Նմանաձայն և բնաձայն բառեր	120
Բառերուն յատուկ և փոխըրկն նշանակութիւնը	122

Բ Ա Ռ Ե Ր Ո Ւ Կ Ա Ջ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Պարզ, ածանցեալ և բարդ բառեր	126-128
Հնչափոխութիւն ձայնաւորներու	130

Պոլականներու կազմութիւնը	132-136
Ածականներու կազմութիւնը	138-142
Բայերու կազմութիւնը	144-146
Մակբայներու կազմութիւնը	148

ԲԱՌԵՐՈՒ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Նախադասութիւն	151
Պարզ, բարդ և զեղչեալ նախադասութիւն	154
Քերականական լուծում	156
Յատկացուցիչ և յատկացեալ	158
Խնդիրներ	160
Բացայայտիչ և բացայայտեալ	162
Կոչական	162
Անունն իբրև անական	164
Պարագայ ցուցնող հոլովներ	166
Յօդերու գործածութիւն	168-170
Անունին լրացուցիչները	172
Անունի լուծումը	172
Ածականներուն պաշտօնն ու շարքը	174
Ածականն իբրև գոյական	176
Ածականն իբրև մակբայ	178
Ածականին լրացուցիչները	180
Ածականին լուծումը	180
Դերանուններու պաշտօնն ու գործողութիւնը	183
Դերանուններու լուծումը	186
Բային համաձայնութիւնը՝ տէր բային հետ	188
Միադէմ և տէր բայիէ զուրկ բայեր	190
Սեռի խնդիրի վրայ գիտելիք	190
Հական բայի և ստորոգելի վրայ գիտելիք	192
Դերբայներ և իրենց գործածութիւնը	194-196

Բայերուն պարզ և բաղադրեալ ժամանակները	198
Բային լրացուցիչները	200
Բային լուծումը	200
Նախադրութիւններու պաշտօնը	202
Նախադրութիւնն իբրև մակբայ և գոյական	204
Նախադրութեան լուծումը	204
Մակբայներու գործածութիւնը	206
Մակբային լուծումը	206
Շաղկապներու վրայ գիտելիք	208
Շաղկապին լուծումը	208
Ջայնարկութեան վրայ գիտելիք	210
Նախադասութեանց տեսակները	212
Տրամաբանական լուծում	214

ՅԱՆԿ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Մայրիկը	10
Գեղամին երգը	16
Ճնճղուկն ու նապաստակը	22
Ամուլ հասկը և պարսպ տակառը	33
Սիրոյ բոյնը	37
Վարդը	42
Աշխատինք	57
Գեղեցկութիւն	63
Աղբատն ու իր շունը	77
Բուն և տատրակը	85
Աշխատութիւնը	99

Վարդն ու փուշը	117
Քարականձոր	122
Մեր սիրտը	135
Սարդն ու շերամը	145
Երազ մը	150
Շուշանն ու թիթեռնիկը	159
Առուակը	165
Որթը և կնձնին	175
Հեղեղն ու վտակը	182
Մաղիկը	187
Արտայտը	201
Լուս արցունքներ	211
Ինչ կ'արժէր	217

ՅԱՆԿ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐՈՒ

Երթ դէպի դպրոց	9
Քարին և օգտակարը	14
Մոյլը	18
Ցորեկն ու գիշերը	30
Գայլն ու շունը	34
Աղքատին հարստութիւնը	38
Աղուէսին գանգաթը	44
Հողը	48
Մպտեալ ազուարը	53
Չար ընկերը	58
Որթատունկն ու եղէգը	69

Կատաղութիւնը	84
Երկու վտակներ	88
Համեստութիւնը	90
Գամբուն ու եզը	112
Փուշերը	116
Յարատեւութեան հրաշքները	118
Տկարները մի՛ ծաղրէք	120
Երկրագործին հարստութիւնը	128
Առաւօտը ազարակին մէջ	136
Երկինքը	142
Կամք և ջանք	146
Ջրօսանքը	152
Գիրքը	156
Հգօրին իրաւունքը	166
Թռչունին բոյնը	170
Տերեւաթափը	178
Օրինակելի աղջիկ մը	184
Մեղուն և ճանճը	189
Հանճարին ոյժը	192
Վոլթերի կօշիկները	202
Ձմեռը	213
Շարադրութեան նիւթեր	219
Վրիպակներու ցանկ	230



ԳՐԱՏՈՒՆ Պ.

4/47.925
9-14

4. ՊՈԼՐՍ

h2

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

6. ԴԱՏԱՆՃՆԱՆ

Նոր ֆերականութիւնն արդի հայ. լեզուի
Տարրական դասընթացք
Միջին »
Բարձր. և լրացուցիչ դասընթացք
Միաձան, Ա. Գիրք ֆերկ.-լնթերց. Մայրն.
Լեզուի
» Բ. »
» Գ. »

Կ. ԲԱՍՄԱԶՆԱՆ

Նոր դասագիրք Հայոց Պատմութեան
Ա. տարի պատկերազարդ և քարտէս
Միջին դասընթացք
Իսկական պատմ. բարձր. դասընթացք
(քիչ օրէն կաւարտի)
Առձեռն Բառարան Հայերէնէ Ֆրանս. Ա. Ա

ՏԱՐԹ. Ե. ԹԻՆՆԱՆ

Իրագիտութիւն համառօտ
Նախատարերք բնապատմական և բնագիտա
գիտութեանց, Ա. - Բ. տարի
Նոյնին Գ. - Դ. մասը
» Բարձր. Դասընթացքը

Պ. Պ. ԱՏՐՈՒՆԻ

Ամբողջական դասընթացք թուարանութեա
Մանկական ընթացք
Տարրական Ա. Բ. Տարի
Միջին Ա. Բ. Տարի
Բարձրագոյն (Մամուլի տակ)

ԳՐԱՏՈՒՆ Պ.

4/47.92
9-14

4. ՊՈԼՈՍ

h2

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

6. ԿԱԶՍՆՃՆԱՆ

Նոր Քերականութիւն արդի հայ. լեզուի
Տարրական դասընթացք
Միջին »
Բարձր. և լրացուցիչ դասընթացք
Միաձան, Ա. Գիրք Քերկ.-Լնթերց. Մայրե-
Լեզուի
» Բ. »
» Գ. »

4. ԲԱՍՄԱԶՆԱՆ

Նոր դասագիրք Հայոց Պատմութեան
Ա. տարի պատկերազարդ և քարտէս
Միջին դասընթացք
Իսկական պատմ. բարձր. դասընթացք
(քիչ օրէն կաւարտի)
Առձեռն Բառարան Հայերէնէ Ծրանս. Ա. Ա

80ԳԹ. Ե. ԹԷՏՆԱՆ

Իրազխտութիւն համառօտ
Նախատարերք բնապատմական և բնագիտա-
գիտութեանց, Ա.—Բ. տարի
Նոյնին Գ.—Դ. մասը
» Բարձր. Դասընթացքը

9. Պ. ԱՏԲՈՒՆԻ

Ամբողջական դասընթացք թուարանութեա-
Մանկական ընթացք
Տարրական Ա. Բ. Տարի
Միջին Ա. Բ. Տարի
Բարձրագոյն (Մամուլի տակ)